



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

S

Lucy. V

51

Эта книга принадлежит
Феюну Сайку Сивакину
августа 1908 г. Брасов. Велча
Среда.

Ленинград

2000

1904. № 3069.

3220

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՏԱՐԵՐՔԸ

ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ

Աշխատասիրեց

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԵՒՈՆԳԵԱՆ



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ Մնացական Մարտիրոսանցի

Պուշկինեան փողոց տուն № 12

1904

491.99.5
67-65

124

51

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ
 ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ՏԱՐԵՐԳԸ

ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ



Աշխատասիրեց

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԳԱԳՐՈՒԹԻՒՄ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ Մն. Մարտիրոսանցի

ԳՈՒՀԳԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ ՏՈՒՆ № 12

1904

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 26-го Апрелья 1904 года.

28 52

51-96



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա.

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ը. ԱՌԱՐԿԵՑ

Մարդը հինգ արտաքին զգայարանք ունի՝ տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք եւ շոշափելիք:

ա. Դասատանը մենք տեսնում ենք՝ աչակերտ, վարժապետ, սեղան, աթոռ, նստարաններ, գրասեղաններ, գրատախտակ, քարե-տախտակ, լուսամուտներ, դուռը... Տանը կարող ենք տեսնել՝ հայր, մայր, եղբայր, քույր, սննեակներ, իսկ սննեակների մէջը...

բ. Երբ անձրև է գալիս, մենք լսում ենք՝ որոտումն, շոռաչիւն, դոչիւն. եկեղեցում—գալիքների երգեցողութիւն, քահանաների ընթերցանութիւն, դանդակի հնչիւնը. դաշտումը—սոխակի դայլայլիկը, թռչունների ծվլոցը. փողոցում—մարդկանց ձայնը, խօսակցութիւնը, աղաղակը, երգը, կոխը...

գ. Ճաշակելով ճանաչում ենք՝ աղը, չիբը, չաքարը, գինին, քացախը, ջուրը, թէյը, սուրճը, մածուկը...

դ. Հոտոտելով ճանաչում ենք՝ վարդը, մեխակը, օհհանը, չուշանը, մանուշակը, խոնկը...

ե. Շոշափելով ճանաչում ենք՝ գիտակը, բամբակը, փեռուրը, բուրդը, ձիւնը, հացը...

§ 1. Հինգ զգայարանքի միջնորդութեամբ ճանաչածը աները (երերը) կոչում են առարկայ—Աչակերտ, հայր, քույր, երգ, չաքար, բամբակ, վարդ,—առարկաներ են:

Վարժութիւն 1. Ի՞նչ առարկաներ ենք տեսնում եկեղեցում: դաշտում, անտառում, փողոցում, գետի մօտ, գետի մէջ, արտերում, դոմերում:

Ի՞նչ առարկաներ են շինում փայտից, երկաթից, կաւից, պղնձից, ապակուց:

Ի՞նչ առարկաներ ենք ուտում: Ի՞նչ ենք խմում: Ի՞նչ ենք հագնում:—Բերանացի:

§ 2. Կան առարկաներ, որոնք միքանի մասից են բաղկացած:

2. Ո՞րոնք են սեղանի, լուսամուտի, ծառի, կոլի, հաւի մասերը: Ի՞նչ մասեր ունի գլուխը, իրանը, ոտները, ձեռքերը:—Բերանացի:

§ 3. Մարդս առարկաներին շոկ-շոկ անուններ է տալիս. ամեն առարկայ իւր անունն ունի: Առարկայի մասերն էլ շոկ-շոկ անուններ ունին:

Մարդս այն ժամանակն է առարկայի անունը տալիս, երբօր իւր տեսածի և ճանաչածի մասին ուրիշներին մի բան է ուզում ասել:

Առարկան տեսնում և զննում ենք մեր հինգ զգայարանքներով: Իսկ անունը չենք կարող տեսնել և զննել: Նրան միայն լսում ենք և հասկանում: Առարկաների անունները մեր տեսողութեանը ենթարկելու համար՝ նրանց գրում ենք, այսինքն տառերով նշանակում ենք:

3. Վերևի երկու վարժութիւնների պատասխանները ներկայացրէք գրաւոր՝ առաջ ամբողջ առարկաների անունները գրեցէք, յետոյ նրանց մասերի անունները:

Բ. ՅԵՁԱՐՈՐ ԵՒ ԸՆՁՈՒՆՉ ԸՌՈՐԿՆԵՐ

ա. Ոչխար, շուն, կատու, ձի, հաւ, կով, գոմէջ, աչակերտ, քահանայ:

բ. Սեղան, քար, աթոռ, փայտ, կերակուր, այգի, գիրք, եկեղեցի:

§ 4. Առաջին տողի մէջ նշանակած բառերը կենդա-

նի առարկաների անուններ են. այդ առարկաները ազատ կարող են մի տեղից միւս տեղ անցնել, իրանք իրանց տնողը փոխել: Դրանք շնչատըր առարկաներ են:

Երկրորդ տողի մէջ նշանակած բառերը անկենդան առարկաների անուններ են: Այդ առարկաներն իրանց կամքով չեն կարող մի տեղից միւս տեղ անցնել, իրանք իրանց տեղը փոխել: Դրանք անշունչ առարկաներ են:

4. Ի՞նչ շնչատըր առարկաներ էք տեսնում տանը, բակումը, դոմումը, անտառումը:

5. Ի՞նչ անշունչ առարկաներ էք տեսնում դասատանը, պարտէզումը, այգումը, դաշտումը, ուտումնարանումը, եկեղեցումը:—Բերանացի:

6. Հետևեալ բառերից շօկեցէք և գրեցէք առաջ շնչատըր առարկաների անունները, յետոյ անշունչներինը:—Կացին, գիւղացի, սրոց, սղոց, դարբին, հովիւ, մուրճ, աղախին, կողպէք, ծառայ, աղաւնի, խող, հաւ, հաւաբուն, մեխ, այգի, այգեկան, հաց, հացթուխ, սրահ, գոմ, ձի, կով, կզք, ոչխար, օրօրոց, մանուկ, անկողին, մահճակալ, զգեստ, դերձակ, ասեղ, կօշկակար, կօշիկ, սիսեռ, կաղամբ, համեմ, կարմրախայտ, լոր, մեղու, ճանճ, ծառ, մոծակ, բլեղ, խոտ, հնձող, մանգաղ, ձեռներ, ոտներ, աչքեր, այծ, սաղ, բադ, կղզիւր, կղզերու, միս, պանիր, արաղաղ, նապաստակ...

Գ. ՄՏԱՆՈՐ ԵՒ ՆԻԻԹԱԿԱՆ ԸՌՈՐԿՆԵՐ

ա. Աստուած, հօգի, հրեշտակ, ապրուստ, կռանդ, աշխոյժ, աշխատանք, ծուլութիւն, քաջութիւն, սրբութիւն:

բ. Սրօր, սեղան, արաղաղ, մարդ, բաժակ, ալիւր, կաքաւ, կաղամբ, կացին, անտառ, կարագ, գինի:

§ 5. Առաջին սիւնակի մէջ նշանակած առարկաները թէև կան և անուն ունին, բայց մեր հինգ զգայարանքին ենթակայ չեն. դրանց մենք միայն մտքով ենք ճանաչում: Դրանք մտաւոր առարկաներ են:

Երկրորդ սիւնակի մէջ նշանակած առարկաները շնչատըր և անշունչ առարկաներ են. դրանց ճանաչում ենք

մեր հինգ զգայարանքի միջնորդութեամբ: Իրանք կոչուած են նաև նիւթական առարկաներ, որովհետև կազմուած են որևէ նիւթից:

7. Հետևեալ խօսքերից ջոկեցէք մտաւոր առարկաները նիւթականից, նիւթականներն էլ երկու խմբի բաժանեցէք՝ շնչաւոր և անշնչ:

Աստուած ստեղծեց մարդուն և սուեց նրան հոգի, միտք և կամք, որ կարողանայ սեպհական խելքով իրան համար ապրուստ ձարել: Մարդը հնարեց արօրը, երկիրը վարեց, հացահատիկներ ցանեց, կացին հնարեց՝ իւր տան ու վառելիքի համար վայտ կըտրատեց, սանձ ու թամբ հնարեց և իրանից ուժեղ կենդանիներին հնազանդեցրեց, միտք բանայրեց և շատ անասուններ, գործիք ու սարք ունեցաւ:—Բարի մարդը իւր կարողութիւնից աղքատին փող, ծարաւին ջուր, քաղցածին հաց և տկորին շոր է տալիս: Աստուծոս հրեշտակն օգնում է բարի մարդուն:

Բերանացի և գրաւոր:

Գ. ԱՌԱՐԿԱՆԻ ԹԻԻԸ

ա. Հաց, քար, ծառ, պատ, միս, մոմ, աղ, մաղ, ձեռն, ոտն, կացին, սեղան, քորոց, աշակերտ, կերակուր, եկեղեցի, քահանայ, մատանի:

բ. Հաց-եր, քարեր, ծառեր, պատեր, մսեր, մոմեր, աղեր, մաղեր, ձեռներ, ոտներ:

Կացին-ներ, սեղաններ, քորոցներ, աշակերտներ, կերակուրներ, եկեղեցիներ, քահանաներ, մատանիներ կամ՝ բահանայք, մատանիք:

§ 6. Առաջին երկու տողի մէջ եղած բառերից ամեն մինը մի հատիկ առարկայի անուն է՝ մի հաց, մի քար, մի կացին, մի եկեղեցի:

Երկրորդ երկու տողի մէջ եղած բառերից ամեն մինը միքանի միատեսակ առարկայի անուն է՝ շատ հաց, շատ քար, շատ կացին, շատ եկեղեցի:

Միևնոյն անունը, շատ առարկաներ ցոյց տալիս, վերջիցը նր, ներ, երբեմն էլ ք է առնում:

8. Հետևեալ խօսքերի մէջ մի առարկայի անունը ջոկեցէք շառից:—Հայրս գնաց փողոց և գնեց միս, հացեր, հաւեր, բաղ և հնդկահաւեր: Աշակերտները կաւիճ գնեցին և գրատախտակի վրայ դասը գրեցին: Գիւղացիք արտերը վարեցին: Քահանայք եկեղեցում ժամ ասացին: Դաշտում արածում էին կովեր, եղներ, այծեր, ոչխարներ և ուրիշ շատ կենդանիք: Դարբինը շինում է կացին, բահ, խոփ, մանդաղ, ուրազ և ուրիշ բաներ: Զուլհակը շալ գործեց. բրուար շինեց կմեր, սրուակներ, դաւաթներ: Հաւը ձու է ածում: Կովը կաթն է տալիս: Աշակերտը գնեց մատիտ, քանոն, գրիչ, թանաքաման և գրչաման: Հայկը պայուսակ ունի: Արամը կարկին չունի: Բոլոր աշակերտները քանոններ ունին: Ոչ մի աշակերտ տողացանց չունի:

Բերանացի և գրաւոր:

9. Բոլոր ջոկած առարկաները փոփոխեցէք՝ մէկը շատի դարձրէք, շատը մէկի, հետևեալ կարգով՝ հայրս—հայրերս, փողոց—փողոցներ, միս—մսեր, հացեր—հաց կային:

Ե. ԱՌԱՐԿԱՆԻ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆԸ

ա. Կարմիր խնձոր, սպիտակ շաքար, թթու քացախ, սև թանաք, կապոյտ ծաղիկ:

բ. Ոսկէ մատանի, քար է եկեղեցի, արարական ձի, հիւսիսային եղջիւր, առաւօտեան հով:

§ 7. Առաջին և երկրորդ տողերի մէջ նշանակած բառերը՝ կարմիր, սպիտակ, արարական, հիւսիսային և այլն, ոչ առարկաների անուններ են և ոչ նրանց մասերը. նրանք դրուած են առարկաների համար և ցոյց են տալիս նրանց որպիսութիւնը կամ յատկութիւնը:

§ 8. Մարդս իւր զգայարանքների միջոցով ոչ միայն առարկաներն է ճանաչում, այլև նրանց որպիսութիւնը (թէ առարկան ինչպիսի է):

Որպիսութիւնն առանց առարկայի չի կարող լինել: Որպիսութիւնն էլ, առարկայի պէս, իւր անունն ունի:

10. Հետեալ օրինակներից ջոկեցէք որպիսութիւնների անունները:—Սեւ կուզը, կարմիր դինի, կանաչ խոտ, պայծառ արեւ, փայլուն աստղ, կապույտ երկնակամար, փայտեայ կլոր դաւաթ, անտառային թթու խնձոր, դաշտային խորամանկ աղուէս, փոքրիկ երկչոտ նապաստակ, թունաւոր սև օձ, եղջերաւոր խոշոր անասուն, հարաւային տար քամի, հիւսիսային սառնաբեր փոթորիկ, պողպատէ սուր մանգաղ, քարէ լայն ուղի: ծուռ նեղլիկ շաւիղ, հին խոր ջրհոր, տերեւաշատ խիտ անտառ, քառակուսի գեղեցիկ սեղան, մաղէ երկար թուկ, բրդէ փափուկ գուլպայ, արծաթէ փայլուն դրամ, պարսկական թանկագին դորգ:

11. Որպիսութիւն ցոյց տուող անունների տակը գիծ քաշեցէք:—Պայծառ երկնակամարի վրայ գորշագոյն ամպեր երեացին: Ամպերը թանձրացան և սև կեղևով ծածկեցին կապույտ երկինքը: Երեկոյեան կենսատու անձրեւ ջրեց ծարաւ երկիրը: Դաշտային թառամած բոյսերը գուարթացան. նրանք իրանց բարակ արմատներով թաց հողից գուրս ծծեցին աննպարար հիւթը: Ծառերի փայլուն տերեւներն աղահաբար ներս ծծեցին խոնաւ օդը: Յորենի և գարու արտերն իրանց քստալի հասկերի նիհար հատիկները լցրին:

12. Հետեալ անարկանների մօտ գրէք իրանց պատշաճ որպիսութիւնների անունները:—Ամպ, գունտ, շուն, թիթեռ, խնձոր, ջուր, կապիկ, ապակի, քամի, գրիչ, անիւ, խուրձ, խոտ, արեւ, ոսկի, արծաթ, ածուխ, քար, բամբակ, հաց:

§ 9. Մի առարկայ կարող է նաև միքանի որպիսութիւն ունենալ՝ կանաչ, տերեւախիտ, միլուն, ստուերաշատ ուռենի:

13. Ի՞նչ յատկութիւններ կարող են ունենալ հետեալ առարկաները՝ ճանապարհ, տուն, գարուն, ամառ, աշուն, ձմեռ, ջուր, չաքար, ապակի:—Բերանացի և գրաւոր:

§ 10. Միքանի առարկաներ կարող են միևնոյն որպիսութիւնն ունենալ. վնասակար գայլ, վնասակար մարդ, վնասակար գործ, ըարձր ձայն, ըարձր ծառ, ըարձր մարդ, ըարձր արժանաւորութիւն:

14. Հետեալ որպիսութիւնները ի՞նչ առարկանների կարելի

է յատկացնել՝ կարմիր, սպիտակ, սև, կանաչ, կապույտ, քաղցր, դառը, սուր, պինդ, փափուկ, կլոր, հիւթաւոր, թափանցիկ, ծանր, թեթև, մաքուր:—Բերանացի և գրաւոր:

15. Հետեալ առարկաններից ամեն մինը ի՞նչ յատկութիւններ պիտի ունենայ անպատճառ՝ սոխ, սխտոր, արծաթ, ոսկի, պղինձ, շուշան, մանուշակ, դանգակ, գետի ջուր, ծովի ջուր, բամբակ, արծիճ, մեղր, քաղախ:—Գրեցէք:

16. Որպիսութիւն ցոյց տուող բառերի տակը գիծ քաշեցէք:—Անձրեային աշուն, Աշնանային անձրեւ, Փոթորկայի ծով, Ծովային փոթորիկ: Դաշտային ծաղիկ: Ծաղկաւէտ դաշտ: Անձրեոտ ամառ: Ամարային անձրեւ: Մարդկային արժանաւորութիւն: Արժանաւոր մարդ: Կենդանական բնութիւն: Բնական կենդանի:

17. Որպիսութեանը նայելով ճանաչեցէք առարկանները:—Հեղուկ, հոսանուտ, թափանցիկ, անհամ: Կլոր, ամուր, սպիտակ, երկնքից վայր՝ ընկնող: Կլորակ, գեղին, աշխարհի սիրելին: Գեղեցիկ, անուշահոտ, կարմիր, փշոտ: Կլոր, կարմրաթշիկ, քաղցրահամ: Պողպատէ, սուր, չողջողուն և կարկոր:

9. ՈՐՊԻՍՈՒԹԵՐՆ ԹԻԻԸ

- ա. Կարմիր խնձորներ, երկար քանոններ, սպիտակ թղթեր, կանաչ յուլունքներ, գիւղացի մարդիկ, դաշտեցի բնակիչներ:
- բ. Կարմիր-ները, երկարները, սպիտակները, կանաչները, գիւղացի-ք, դաշտեցի-ք:

§ 11. Որպիսութիւն ցոյց տուող բառերը թիւ շուշին, երբ առարկայի մօտ են գրուած. բայց եթէ մենակ են, կարող են առարկանների անուան պէս Նը, ննը, ը տառերն առնել իրանց վերջում և շատի համար գործ ածուիլ:

18. Հետեալ օրինակների մէջ գտէք մենակ գործածուած որպիսութիւն ցոյց տուող բառերը և տակը գիծ քաշեցէք:—Հիւանդները նախանձում են առողջներին: Հարուստները պարտաւոր են օգնել աղքատներին: Գիտունները աղէտներին սովորեցնում են: Օրէնքը պատժում է չարերին: Բրիստոսը ներում էր մեղաւորներին, քժչկում էր կաղերին, կոյրերին, անգամալոյծներին, բորոտներին և գիւահարներին: Աստուած խնամում է որբերին: Կազն ու կոյրը

մի սրընթաց առուակով պէտք է անցկենային: Վարդերի մէջ եւ սիրում եմ կարմիրները: Քաղաքացի մարդիկ թէև շատ անգամ ծաղրում են գիւղացիներին, բայց եթէ գիւղացի մարդիկ չլինին, քաղաքացիք, հաւատան, սոված կը կոտորուին:

Է. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Շունը հաջում է. շունը կծում է. շունը փախչում է: Թռչունը թռչում է. թռչունը երգում է, բուն է շինում, ձագ է հանում, մեծղներ բռնում, ձուտերին կերակրում:

§ 12. Նշանակած բառերը՝ հաշում է, թռչում է, երգում է... ոչ առարկաների անուններ են և ոչ որպիսու թեան. նրանք միայն ցոյց են տալիս, թէ առարկան ինչ է անում, ինչ է գործում: Իրանք գործողութիւն ցոյց տուող բառեր են:

Առարկայի գործողութիւնն էլ մարդս ճանաչում է իւր հինգ զգայարանքների միջնորդութեամբ:

§ 13. Գործողութիւնն էլ, որպիսութեան պէս, առարկայի համար է գրւում: Որպիսութիւնը ցոյց է տալիս թէ առարկան ինչպիսի է, իսկ գործողութիւնը՝ թէ նա ինչ է անում, ինչ է շինում:

§ 14. Ինչպէս որ առարկաներն ու իրանց որպիսութիւնները, այնպէս էլ առարկաների գործողութիւնները շուրջով բառերով ենք նշանակում:

19. Հետևեալ խօսքերի մէջ գտէք գործողութիւն ցոյց տուող բառերը և նրանց տակը դիժ քաշեցէք:—Որսորդն սպանեց մի գայ: Գայը պատահել էր հովուի ոչխարները: Կարգալսար առաւօտները վեր է կենում, չորերը հագնում, երեսը լուանում, աղօթք է անում և առաւօտուայ հայն ուսում ու գնում դաշտը: Մանր սողաններն ուսումնարան են գնում: Չին բեան է կրում: Օձք սողում է: Զուկը լողում է: Թռչունը թռչում է: Արծիւք սլանում է օդի մէջ: Գեար հոսում է: Քամին փչում է: Ամպը որոտում է:

20. Արտագրեցէք առաջ գործողութիւն ցոյց տուող բառերը,

յետոյ առարկաների անունները:—Գիւղացին մաքրում է վարկա-հողը, վարում է օրավարը, սերմում է, ցաքանում և Աստուած կանչում, որ ժամանակին տայ արև, անձրև և օրհնէ նրա վաստակը: Գիւղացին գնում է պարտէզ, հողը մշակում, մարգեր է շինում, բանջարներ ցանում, կարտօփիլ սերմում և պարտէզի չորս կողմն էլ ցանկով պատում, որ անասուններ չմտնեն, իւր աշխատանքը չուանն, չտրորեն: Գիւղացին էլի շատ բան է շինում, շատ գործեր գործում:

21. Ամեն մի առարկայի մօտ գրէք իւր յարմարաւոր գործողութիւնը և աւելացրէք, թէ առարկան ինչ բան է շինում և ինչից:—Հայրթուխը թխում է հացը ալիւրից: Քոյրս կարում է շապիկներ քաթանից: Գարբինը շինում է պայտեր... կօշկակարը... պղնձգործը... սակերիչը... նկարիչը... խոհաբարը... Ջաղացպանը... դերձակը... հիւսնը... ջուլհակը... որմնագիրը... ճարտարապետը... հնձողը... ձկնորսը...

§ 15. Մի առարկայ կարող է միքանի տարբեր գործողութիւններ կատարել:—Գիւղացին վերցրեց մանգաղը, դուրս գնաց դաշտը և ձիու համար խոտ հնձեց: Մանուկները ժողովեցին իրանց գրքերը, դարսեցին պայուսակի մէջ և գնացին վարժատուն:

22. Հետևեալ առարկաներից ամեն միին տու՛ք միքանի յարմարաւոր գործողութիւններ:—Ձին, կովը, ոչխարը, հաւը, քաղաղը, կատուն, շունը, գայը, աղաւը, ծիծեռնակը, սոխակը, կրկուն, մեզուն, խոզը, ագանին, գորտը, բազը, թռչունը, ձուկը, օձը, մարդը...—Բերանայի և գրաւոր:

§ 16. Միևեոյն գործողութիւնը կարող է զանազան առարկաների ձևերով կատարուիլ:—Զուկը լողում է, գորտը լողում է, բազը լողում է, մարդն էլ լողում է:

23. Ի՞նչ առարկաների կարող ենք յատկացնել հետևեալ գործողութիւններից ամեն միին:—Լոյս է տալիս (ծրաղը լոյս է տալիս, կրակը լոյս է տալիս, լուսինը լոյս է տալիս, աստղերը լոյս են տալիս, արևը լոյս է տալիս...), արթնանում է, թռչում է, բառաչում է, մայում է, հանգչում է, որոտում է, դուրս է գալիս, մայր է մտնում, վառում է, վայր է բնկնում, փայլում է, ծագկում է, աճում է, մեռնում է:

24. Հետեակ բառերից որոնք են ցոյց տալիս առարկայ, գործողութիւն և որպիսութիւն:—Մշակ, մշակել, մշակող, մշակութիւն: Կտարեցի, կտարած, կտոր: Փշրանք, փշրուն, փշրում էր: Կերակուր, կերած, կերել եմ: Կըզրեմ, զիրք, զրութիւն, զրիչ, զբրող: Խմիչք, խմեցի, խմած: Խելք, խելօք, խելազայտ: Խաղ, խաղում է, խաղասէր, խաղալիք: Ծամում է, ծամ, ծամելի: Կար, կարած, կարող, կարկատան, կարեց: Կըհնձէ, հունձ, հնձող, հնձած: Չայն, ձայնաւոր, ձայնել, անձայն: Ճանապարհ, ճանապարհել, ճանապարհորդ, ճանապարհորդութիւն: Մանուկ, մանկական, մանկանալ: Յիշատակ, յիշատակել, յիշատակող, յիշատակարան: Կերել, ներողամիտ, ներողութիւն: Ծնորհ, շնորհել, շնորհած, շնորհաւորէք, շնորհաւորեցիր, շնորհաւորող: Չար, չարանալ, չարութիւն, չարչարանք, չարչարուել: Սուր, սրոց, սրել: Ոյժ, ուժեղ, ուժեղանալ:

Ը. ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԹԻԻԸ

- ա. Ես կարդում եմ: Դու գրեցիր: Հնձողը հնձեց:
- բ. Մենք կարդում ենք: Դուք գրեցէք: Հնձողները հնձեցին:

§ 17. Առաջին տողի մէջ գործ կատարող առարկաները մէկ-մէկ են. նրանց կատարած գործողութիւնն էլ մէկ է—միանգամ է կատարում: Երկրորդ տողի մէջ գործողները շատ են. նրանց կատարած գործողութիւնն էլ շատ է—միքանի անգամ է կատարում: Գործողութիւնն էլ, առարկայի ու որպիսութեան պէս, կարող է մէկ և շատ ցոյց տալ: Գործողութիւնը շատացնելիս՝ վերջից աւելացնում ենք ն և ք տառերը մենակ կամ ուրիշ տառերի հետ:

25. Հետեակ օրինակները փոփոխեցէք այնպէս, որ առարկաներն ու գործողութիւնները մէկից շատ ցոյց տան:—Աշակերտը կարդում է իւր դասը: (Աշակերտները կարդում են իրանց դասերը): Կո՞նք արածում է գաշտումը: Թռչունը երգում է իւր քաղցրահնչիւն երգը: Որմնագիրը պատում է պատը: Վարժապետը սովորեցրեց աշակերտին: Աշակերտը լսեց վարժապետի ասածը: Քահանան մկրտեց մանկանը: Մանուկը մեծացաւ, ուժեղացաւ և իւր հօրն օգնող եղաւ: Ամառը ևս կըզնամ զիւրը, աչնանը նորից կըվերադառնամ:

26. Հետեակ օրինակների մէջ գործողութիւնները փոփոխեցէք՝ շատը մէկ շինեցէք:—Հացը թխում են տանտիկիները կամ հացթուխները: (Հացը թխում է տանտիկինը կայն): Հացը թխում են խմորից: Խմորը հունցում են ալիւրից, ջրից և խաչից: Ալիւրն աղում են ջաղացում ցորենից: Հացահատիկները հասնում են արտերում, հասկերի մէջ: Գիւղացիք դաշտը մշակում են. նրանք հերկում են հողը—ցել են անում, յետոյ ցելումը սերմում են ցորեն և ուրիշ հացահատիկներ:

§ 18. Մեր սովորած ըստերից միքանիսը առարկայի անուն են, միւսները որպիսութեան, իսկ ոմանք գործողութեան:

27. Հետեակ խօսքերը՝ վերլուծեցէք և ասայէք իւրաքանչիւր բառի նշանակութիւնը:—Փայլուն արևը մայր մտաւ (փայլուն՝ ցոյց է տալիս արևի որպիսութիւնը. արևը՝ անշունչ և նիւթական առարկայի անուն է. մայր մտաւ՝ ցոյց է տալիս արևի գործողութիւնը): Լուսինը վաղուց գնաց, թագկացաւ: Փոքրիկ աստղերը ամպի տակ մտան: Բարեպաշտ մարդիկ ժամ գնացին: Ծոյլ մանուկները տանը մնացին: Աշխատասէր աշակերտները դասերը սովորում են: Ազօտ լուսինը լուսաւորում է քնած երկիրը: Պայծառ աստղերը փայլում են պարզ երկնքի վրայ: Սե-սե ամպերը ծածկեցին կապոյտ երկնքի երեսը: Գիշերը մթնեց: Վայրենի գաղանները զարթեցին: Չար մարդիկ սիրում են խաւար զիշերները:

Բ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ. ԲԸՈՒ ՎԸՆԿ ԵՒ ՏԸՈՒ

§ 19. Առարկային, նրա որպիսութեանն ու գործողութեանը մարդս առանձին-առանձին անուններ է տալիս: Առարկայի, գործողութեան և որպիսութեան անունները ըստեր են:

ա. Հաց, ծառ, քար, ջուր, ցուրտ, սե, լաւ, մոմ, միս, շէկ:
 ք. Բաժակ, գարի, ցորեն, բարակ, հասակ, սիրուն:
 գ. Բաժեկամ, աշակերտ, աշխատել, աշխատութիւն:

§ 20. Առաջին տողի մէջ նշանակուած բառերը կարգացուած են միանգամից. երկրորդ տողի մէջ նշանակուածները՝ երկու, իսկ երրորդ տողի մէջ նշանակուածները՝ երեք անգամից:

Բառի այն մասը, որ արտասանուած է միանգամից, վանկ է կոչուած:

§ 21. Վանկերի թուին նայելով բառերը լինում են՝ միավանկ, երկավանկ և բաղմավանկ:

§ 22. Ամենայն բառ մի կամ միքանի վանկից է շինուած, իսկ ամենայն վանկ շինուած է մի կամ միքանի հնչիւններից:

§ 23. Գրելու ժամանակ հնչիւնների տեղակ գործ ենք ածում առանձին նշաններ, որոնք տառ կամ գիր են կոչուած:

§ 24. Կան տառեր, որոնք հեշտ են արտասանուած և, առանց ուրիշ տառերի օգնութեան, պարզ հնչուած են. բայց կան և այնպիսի տառեր, որոնք միայնակ դժուար են հնչուած և հեշտ հնչուող տառերի օգնութեամբ են միայն արտասանուած:— Հեշտ հնչուող տառերն են՝ ա, ե, է, ը, ի, ո, օ, ու: Սրանք ձայնաւոր են կոչուած: Մնացած տառերը կոչուած են քաղաձայն:

§ 25. Առանց ձայնաւոր տառի վանկ չի լինիլ: Առանց բաղաձայն տառի վանկ կարող է լինել:

§ 26. Գրելու ժամանակ, բառի մի մասը մէկ տողից միւս տող անցկացնելիս, պէտք է ամբողջ վանկ կամ վանկեր անցկացնել:

Ա-սն, ա-րն, ա-ժան, գի-նի, բա-րի, դա-նակ, ե-ղան:

Ա-բե-դակ, ա-բե-դայ, ժա-մա-նակ, ժա-մա-ցոյց:

§ 27. Կանոնաւոր կարգալու և անսխալ գրելու համար պէտք է գիտենալ, թէ բառերն ինչպէս են վանկուած: Վանկելու հիմնական կանոնն այն է, որ բաղաձայն տառը, եթէ մենակ է, կաչում է իրանից յետոյ եկող ձայնաւորին:

28. Վերոյիշեալ կանոնին համաձայն վանկեցէք հետեւալ բառերը՝ կերայ, տեսայ, եկայ, բարակ, գաթայ, թաւայ, արեղակ, Արուսեակ, քահանայ, յիսուն, Յիսուս, գարի, ցորեն, ցերեկ, ցուցակ, կարաս, կացին, դաւաթ, գինի, Գարեգին:

Ար-ճիճ, աղ-քատ, աղ-ջիկ, ար-դար, եղ-նիկ: Ըն-դե-ղէն, ընտ-րու-թիւն, երկ-րա-չափ:

§ 28. Երբ քառի մէջ միքանի բաղաձայններ կան, միայն վերջին բաղաձայնն է կաչում իրանից յետոյ եղած ձայնաւորին, իսկ միւսը կամ միւսները մնում են նախորդ ձայնաւորին:

29. Վանկեցէք հետեւալ բառերը. ազբիւր, եղջիւր, երկինք, երգիկ, երկնաւոր, երկրագործ, իշխանաւոր, ինքնասէր, որկրամուր, որդեսէր, սրբակեաց, ընկոյզ, ընտանի, ընդեղէն, թարգմանել, մարդկութիւն, մաքրասէր, կարգաւոր, ընտրութիւն:

Բը-ժիշկ, բնակ, բիթ, դդում, դժողք, թթու, թզուկ, բըր-դել, խըն-դիր, զըն-դան, ճընճ-ղուկ:

§ 29. Եթէ քառի սկզբում միքանի բաղաձայն տառեր կան, վանկելու ժամանակ առաջին բաղաձայնից յետոյ դուրում է ը ձայնաւորը, իսկ միւս բաղաձայնները վարում են նախընթաց կանոնին համեմատ:

30. Վանկեցէք հետեւալ բառերը՝ բռնել, բրդել, գրիչ, գնտակ, գլուխ, գգակ, գրգել, արամիլ, գննել, գրկել, թթու, թզուկ, թռչուն, թշնամի, ժպիտ, ժլատ, ժժմակ, լուել, լրտես, խխունջ,

խնձոր, խնդիր, խրատել, ծնունդ, ծնկաչոք, ծղրիդ, կրթել, կրկնել, կռթնել, հնդիկ, հնդկահաւ, ձնծաղիկ:

§ 30. Բառի վերջում բաղաձայն տառերը միշտ կըցուում են իրանցից առաջ եղած ձայնաւորին՝ մէկ լինին, թէ միբանի. միայն ն կ ը տառերը հարևան բաղաձայնի հետ առանձին վանկ են կազմում (ծունր—ծուները):

31. Վանկեցէք հետեւեալ բառերը և ուր որ պէտք է, ը աւելացրէք:—Սանդ (գործիք), սանր, ծունկ, ծունր, ծածկ, ծանր, մարդ, մանր, կարծր, բարձր, սոք, սան, ձեռք, ձեռն, բերք, բեռն, կառք, դառն, դառն, սառն, դուռն, նուռն, բուռն, ծուռն, ամառն, ձմեռն, մեղր, կայսր, եզր, ծաղր:

Բըժիշկ, զըզում, զընդան, թըզուկ, ժըժմակ, լըրտես, խընդիր, ծընունդ:

Սկունդ—ըսկունդ. սպաս—ըսպաս. զբաղմունք—ըզբաղմունք. շտապ—ըշտապ:

Առաջին տողի մէջ բաղաձայն տառը վանկուելու համար իրանից յետոյ առել է ը ձայնաւորը, իսկ երկրորդ տողի մէջ բաղաձայնը իրանից առաջ է առել այդ ձայնաւորը:

§ 31. ս բաղաձայնը թ, կ, սլ, տ, ք տառերի հետ, զ բաղաձայնը ք, գ, մ՝ տառերի հետ և շ բաղաձայնը տ տառի հետ հանդիպելիս, բառի սկզբում, հնչւում են որպէս ամփոփ ըս, ըզ, ըշ և կազմում են կէս վանկ:

32. Աւելացրէք ը տառը, ուր որ հարկաւոր էք համարում:—Սթափուրի, սկեսուր, սկայ, սկունդ, սկուտղ, սպաս, սպունդ, սպի, սպիտակ, սպեղանի, սպասել, ստամոքս, ստէպ, ստոր, ստոյգ, ստանալ, ստինք, սիւիւռ, սիտիանք, սիւածաննիկ, սքողել, սքանչելի, սքանչանալ:—Զրօսանք, զբաղմունք, զգալի, զգեստ, զգոյշ, զգօն, զղայարանք, զմայլել, շտապել, շանմարան:

Սարդ (միջատ)—սարդ (այդ սարդ):
Ձին երկու ստի վրայ ծառս եղաւ (ծառացաւ):

Մասս արմատից կարուելաւ (այս ծառ):
Սարգն—սարգրն. տունն. բունն (այն տունը):

§ 32. ս, ղ. ն տառերը, եթէ բառի անանջատ մասը չեն, այլ՝ սրպէս եկամուտ տառեր՝ աւելացած են բառի վերջում, որ առարկաների դասաւորութիւնը ցոյց տան, իրանց նախորդ բաղաձայնի հետ միշտ մի վանկ են կազմում:

33. Ուր որ յարմար է՝ ը դրէք և վանկ կազմեցէք:—Կարդ—կարդալ: Կարգ կարիք: Բարդ—բարդել. մարդ—տղամարդ. մէրդ—մարդ—մայրդ. հորթ—հօրդ. կիրթ—գիրդ. սերտ—սերդ. բանդ—բանդարկել. բանդ շինիր, յետոյ խաղն. մարս—մարսել. մերս—մերսել. մէրս—մարս—մայրս. սարս—սարսել—սարսափ. սարս ձիւնապատ, ամպերս մթին, անտառներս խիտ:


§ 33. կ տառը իբրև մասնիկ դրւում է բառի սկզբում և եթէ մօտի տառը բաղաձայն է, առանձին վանկ է կազմում: իսկ եթէ մօտի տառը ձայնաւոր է, այն ժամանակ նա յաջորդ ձայնաւորի հետ մի վանկ է կազմում: (Վը դրեմ, կ'ատեմ):

§ 34. Հայերէն տառերը դրւում և կարգացւում են հետեւեալ կարգով. այբ, բեն, գիմ, դա, եչ, զա, է, ըթ, թոյ, ժէ, ինի, լիւն, խէ, ծա, կէն, հոյ, ձա, զադ, ճէ, մէն, յի, նու, շա, ո, չա, պէ, ջէ, ոա, սէ, վէվ, տիւն, րէ, ցոյ, ւիւն, փիւր, քէ, օ, ֆէ*):

§ 35. Բոլոր տառերը միասին վերցրած կազմում են Հայերէն այբուբենը, իսկ այստեղ առաջ բերած կարգը կոչւում է այբբենական կարգ: Հայերէն այբուբենի տառերը 38 են:

*) օ և ֆ տառերը վերջին ժամանակներն են մտած Հայերէն այբուբենի մէջ. օ-ի փոխանակ առաջ գործ էր ւծում աւ, իսկ ֆ այժմ էլ շատ քիչ գործածութիւն ունի մեզանում. ֆ-ով դրւում են միմիայն օտարազգի բառերը:

95-96



յ ՏԱՌԻ ԳՈՐԾԱՄՈՒԹԻՒՆԸ

յարկ, հարկ, յամառ, համար, եզրայր—եզրաիր, քոյր—քուիր, այրի—աիրի, այծ—աիծ: Քահանայ—քահանա, երեկոյ—երեկո, յետոյ—յետո, գաթայ—գաթա:

§ 36. Հայերէն այբուբենի մէջ յ տառը երեք տեսակ գործածութիւն ունի՝ ա. կարգացում է որպէս բաղաձայն տառ, բ. հնչում է որպէս կիսաձայն ի և գ. բոլորովին համր է մնում:

Յառաջ—առաջ, յետոյ—ետոյ, յիսուն—իթսուն, Յիսուս—Իսուս:

§ 37. Բառի սկզբում յ կարգացում է որպէս փափուկ հ: Յ-ով սկսուող բառերից միքանիսը առանց յ տառի էլ պահպանում են իրանց նշանակութիւնը, շատ թէ քիչ հասկանալի են լինում:

34. Հետևեալ խօսքերի մէջ գտէք յ-ով սկսուած բառերը և տակը գիծ քաշեցէք:—Յիսուսը յամառ և յանդուգն մանուկներին չէ սիրում: Յակոբը յանդիմանեց մի յիմար տղայի: Յուսիկը յարձակուեցաւ Յովսէփի վրայ և յափշտակեց նորա ձեռքի յամիկը և յամբարը: Յուգան սպանեց մի յովազ և մի յամոյր—վայրի այծ: Յարէթը յամր քայլերով յածում էր գետի եզրքին: Կատուն յառած աչքերով նայում էր յատակին և ուզում էր նորա տակը բուն գրած մուկը յաջողութեամբ բռնել: Յարութիւնը յարատն աշխատում է և ամենքը յարգում են նորան: Ես տեսել եմ յակինթ և յախճապակ: Յանկարծ յարզի տակից դուրս սողաց օձը. դիւղացին ան-յապազ սպանեց նորան: Ուսուցիչը յայտնեց յանցաւոր մանուկներին, որ ինքը յատուկ կրնեղանայ նորանցից, եթէ իրանց ծուրութեան չեն յաղթիլ և յաջողութեամբ չեն պատրաստիլ յաջորդ օրերի դասերը: Իմ գիրքն ունի յաւելուած և յառաջարան: Ձեր յարկի տակ յարդարեցէք ձեզ համար յարմարաւոր բնակարան: Յաճախ Յովհաննէսը չէր կարողանում յագնեալ իրանց պարտիզի


յաւերժական գեղեցկութեամբ: Յուսիկը յանձնեց Յովսէփին և Յովակիմին իւր քրոջ յուրունքները, որոնք գեղեցիկ կերպով յարայարած էին: Մենք յաւիտեան չենք կարող ազատուել մեր ծնողաց երախտիքից:

35. յ-ով սկսուած բառերի տակը գիծ քաշեցէք:—Մերունին՝ յենած իւր ձեռնափայտին, յետ էր նայում դէպի գետը, որի յատակ ջուրը յեղցեղալով հոսում էր նորա մօտից. ձերունին յիշում էր իւր մանկութիւնը և յորդորում էր իւր թոռներին, որ յոռի կեանք չվարեն և յիմար մանուկների պէս իրանց յոյսը ուրիշների վրայ չդնեն: Մանուկները միշտ յօժարութեամբ ականջ էին դնում և յիրաւի կատարում էլ էին նորա խօսքերը: Յունիս և յուլիս ամիսներին մարդիկ չօքի սաստկութիւնից յուտ են յոգնում: Յոպոպը յունապի ծառի վրայ յուշարարի պէս յարունակ կանչում էր: Յոյնը յղկեց պողպատէ թիթեղը և յղեց իւր ընկերին: Մոյլերը թէ դասից առաջ և թէ դասից յետոյ յարունակ յօրանջում էին: Յինանց ուտիսը յիսուն օր է տեսում: Հայրս մի միտք յղացաւ և չինեց գեղեցիկ յոսնակ—սայլակ: Յովստը մի չնչին նշանախեց է: Առիւծը յօշոտեց մի ոչխար: Յիշոց տալը անվայել և պախարակելի բան է: Յոգնակի թիւ: Յորեկեան տարի: Մտքի յիշողութիւն: Ջուրը յուղել: Մատների յօդերը համարել:—Ոչ ոք չի ասիլ, թէ աչքիդ վերեը յօնք կայ: Ել չիսուց Արաքսը, յորձանք տուեց անագին, Օղակ—օղակ օձի պէս յառաջ սողաց մողեգին:

36. Վերևի երկու վարժութիւնների մէջ հանդիպած բոլոր յ-ով սկսուող բառերը ջոկեցէք այբբենական կարգով և ձեզ համար աղիւսակ կազմեցէք: Աշխարհաբար լեզուի մէջ այդ բառերից զատ յ-ով սկսուող ուրիշ բառեր հազիւ թէ պատահեն:

§ 38. Բառի մէջ յ տառը կցուելով ա և ո ձայնաւորներին՝ կարգացում է որպէս կիսաձայն ի և այդ ձայնաւորների հետ մի հնչիւն է կազմում, որ կոչում է երկբարբառ:—Երկբարբառը տողադարձի ժամանակ մի տառ է համարում և չի բաժանում:

§ 39. Բառերի վերջում ա և ո ձայնաւորները երբէք միայնակ չեն մնում (§ 42), այլ միշտ իրանցից յետոյ յ են առնում:



§ 40. Միավանկ բառերի վերջը յ տառը կարդացու-
ում է որպէս կէս ի, իսկ բազմավանկները վերջը համր
է մնում—չի կարդացուում (§ 36):

37. Ես տեսայ մէկ հայ: Յովհաննէսը թէյ էր խմում: Թէյին
ասում ենք չայ: Նոյր ունէր երեք որդի: Ճայ թոչունը ճահճային
տեղեր է սիրում: Այն-պէս անենք, որ վերջը գլխներին վայ չաանք:
Գործողութիւն—բայ—Հայրս գնեց կաթսայ: Մայրս գաթայ թխեց:
Ես տեսայ մէկ քահանայ: Այս երեկոյ ես կրդնամ եկեղեցի. յետոյ
տուն կրգամ և գործերս կրվերջացնեմ: Ամառուայ տաք օրերին մի
տղայ նստած էր ծառի տակը. ես տեսայ նորան, մօտեցայ և կող-
քին նստեցայ:

Էսօրուայ գործը վաղուան մի գլխի էսօրուայ փուշը, էգու-
ցուայ նուշը:

§ 41. Գործողութիւն ցոյց տուող միավանկ բառերի
վերջը յ տառը համր է մնում:

38. Վարժապետը կրգայ ուսումնարան և մեզ դաս կրտայ:
Պայուսակիս մէջ կայ գիրք և տետրակներ: Ռուբէնը կրմնայ մօտս:
Երեխան որ լայ, մայրը ծիծ կրտայ:

§ 42. Գործողութիւնը հրամայական ձևով գրուելիւ
և սա, դա, նա, ահն, քո, այն բառերի վերջում յ տառը
վերանում է, իսկ յատուկ անունների վերջում յ տառը
կարելի է գրել և չգրել^{*)}:

39. Գնա և ասա ընկերիս, որ ինձ մօտ դայ: Դու կարդա
գասգ, իսկ նա կըլսէ. յետոյ նա կըկարդայ, դու կըլսես: Մնա այս-
տեղ: Այն, ես կըմնամ: Սա ու դա միասին գնացին ուսումնարան:
Ահն նա էլ եկաւ: Քահանան եկեղեցում ասում է. «Կեցո՛, Տէր»
զժողովուրդս քո և օրհնեան զժառանգութիւնս քո:—Խոնարհեցո՛
ապրեցո՛:

Վ Ե Ի Լ Տ Ա Ռ Ե Բ Ի Գ Ո Ր Ծ Ա Ծ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

§ 43. Հայերէն այբուբենի մէջ վ հնչիւնը երկու նշա-

*) Յատուկ անունների վերջում յ գրելը աւելի ուղիղ է (Աննայ—Աննայի և
ուշ Աննա—Աննայի):

նագիր ունի՝ վ և ւ. և դործ է ածուում միշտ ձայնաւորից
յետոյ, իսկ վ՝ ձայնաւորից առաջ, միայն ուից առաջ վ չի
դըրում և ոչ ուից յետոյ և (ինչի՞^{*)}:

Բարդութիւնների մէջ ձայնաւորից յետոյ վ կարող է
գրուել, եթէ բարդուող բառերից վերջինը վ-ով է սկսուում
(նաւավար):

40. Վ հնչիւնը բառի սկզբում և վերջում:—Վարդ, հաւ, վար,
ցաւ, վազ, կաւ, վեղար, վերեւ, համբաւ, վարտակ, վասակ, վա-
ղարչ, վարդան, բարի, արև, անձրև, տերև: Վահան, վանք,
վազ, վուշ, կախ, անիւ, աղնիւ, թիւ, եկաւ, տեսաւ, կերաւ, տա-
քաւ, բերաւ:

41. Վ հնչիւնը ուից առաջ և յետոյ.—Ոսկի (վօսկի), որդի,
ոչինչ, Ոսկան, ոգի, ոլոգ, ոլոր, ոլորակ, ողբ, ողն, ողկոյզ, ողնա-
չար:—Կով, սով, հով, ծով, բով, կողով, բարով, կորով, ժողով,
խորոված, սովորել:—Տեսնելով, ստելով, անելով, գնալով, գալով,
տալով, մնալով:

42. Վ հնչիւնը բառի մէջ:—Աւազ, աւագ, աւագան, աւելի,
աւետիս, աւետարան, Անուշաւան, բաւական, բաւարար, գաւառ,
Դաւիթ, դաւակ, թագաւոր, ժապաւէն, խաւար, հաւատ, հաւան,
հիւանդ, հեռաւոր, Դեռնդ, նաւակ, Շաւարչ, սուան, Սեւան, տա-
ւիղ, առաւօտ:

43. Հետեւեալ բառերից ամեն մինը երկու մաս բաժանեցէք,
միայն այնպէս, որ ամեն մի մասը առանձնապէս մի նշանակութիւն
ունենայ:—Նաւավար (նաւ և վարել) զօրավար, կառավար, վար-
դավառ, բոցավառ, մրգավաճառ, հացավաճառ, Խոջիվանք, օրավար,
համավաստակ, բազմավտանդ, երկարավիզ, հոգևվարք:

Ո Ե Ի Լ Ե Բ Կ Բ Ա Ր Բ Ա Ռ Ե Ե Բ Ի Գ Ո Ր Ծ Ա Ծ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

§ 44. և տառը գրուելով ո և ի տառերի յետևը՝
ոչնչացնում է նոցա ձայնը և մի առանձին նոր հնչիւն է

*) Որովհետև ո տառը իրան մէջ ունի վ հնչիւնը (որդի—վօրդի, ոսկի—վօս-
կի), բառի վերջում էլ ուից յետոյ եթէ ւ գրուէր, ո տառը կըկորցնէր իւր բուն
հնչիւնը և ու կըգառնար (հոգով—հոգու, բարով—բարու, սիրով—սիրու):

կազմում, որ երկբարբառ է կոչուում. ու և իւ երկբարբառները տողադարձի ժամանակ անբաժան են մնում:

§ 45. ու երկբարբառը պարզ հնչիւն ունի, միայն երբոր իրանից յետոյ որեւիցէ ձայնաւոր է ունենում՝ մեղմ վի ձայն է հանուում, իսկ երբ երկու ու միենոյն բառի մէջ հանդիպում են իրար, առաջին ուի ո տառը՝ ներգաշնակութեան համար դուրս է ձգուում *):

44. ու որպէս պարզ հնչիւն:—Տուն, բուն, անուն, դարուն, աշուն, կանգուն, շուն, նուշ, անուշ, կատու, բու, թութակ, յունաբ, աղուն, ուղտ, ուս, ուրագ, ուտել, ունենալ: Եւ կարգում է ուղիղ և անսխալ: Ռուբէնը գնում է խաղալու: Ես պատրաստում եմ դասս:

ու որպէս մեղմ վ:—Հայրս ինձ մի գիրք նուիրեց: Վարժապետը պատուիրեց, որ մեր տետրակները մաքուր պահենք: Գայլը հովուի ոչխարներից մինը յափշտակեց: Չմտը գետը ծածկուել էր սառուցով:

ու—ու—Ատում են՝ որ դաս չիմանալը անպատուութիւն (անպատուութիւն) է: Ես ազնուութեամբ կրկատարեմ իմ պարտքը: Երկու մանուկ այսօր փողոցում ծեծուում էին: Թշնամիք իրար հետ կուում են: Քոյր ու եղբայր համբուրուում էին իրանց մօր հետ: Ստախօս մարդուն արժանապատուութիւնից հեռու պէտք է համարենք: Յորակը լուացուում է, մաքրուում, սանրուում և յետոյ ուղևորուում է դէպի ուսումնարան:

§ 46. իւ երկբարբառ է, երբ իրանից յետոյ մի որեւիցէ արմատական բաղաձայն ունի՝ իւ-ղ. իւ-ը. հիւ-սն:

իւ պարզ վանկ է և կարգացուում է որպէս իվ, եթէ իրանից յետոյ արմատական բաղաձայն չունի՝ թիւ, անիւ—թիվ, անիվ:

45. Հետեւեալ խօսքերի մէջ գտէք թէ որակ է իւ երկբարբառ

*) երկու ու իրար հանդիպելիս՝ ոմանք մէկ ուն ամբողջապէս փոխում են վ տառի, հիմնուելով այն կանոնի վրայ, թէ ձայնաւորից առաջ կամ բաղաձայնից յետոյ անմիջապէս ւ չպէտք է գործածուի: Ուրիշները նկատում են, որ այդտեղ (կորուսման կանոնին համաձայն) ո տառը զեղջուում է, իսկ նորա միւս բաղադրիչ մասը—ւ պահում է իւր դիրքը:

բառ և որակ սոսկ վանկ, բոլոր օրինակները երկու կարգ բաժանեցէք:

Թիւ—թիւն, ազնիւ, ազնուութիւն, անիւ, ձիւն, կոիւ, նիւթ, պատիւ, իւղ, միւս, հիւանդ, հիւան, գիւան, գիւղ, գիւտ, բիւր, հիւր, ձիւթ, հիւթ, գիւահար, սուղ ու չիւան, ճիւղ, իւր, կիւրակէ, կիւրեղ, հիւսիս, սիւնակ, գիւրին: Անիւ, անիւներ: Սալը անիւներով է պարտուում: Ազնիւները անազնիւներից միշտ հեռու պէտք է մնան: Աղբիւրի ջուրը շատ առողջարար է: Տունը շինում են աղիւտից: Մարդու արիւնը տաք է և կարմիր:

ո եի օ ՏԱՌԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

§ 47. Հայերէն լեզուի մէջ ո և օ տառերը շատ անգամ միմեանց նման են հնչուում, բայց նոքա տարբեր ուղղագրութիւն ունին:

ա. Բառի սկզբում ո և օ պահում են իրանց նախնական հնչիւնը (օր, որ, օղ, ողն):

բ. վ բաղաձայնից առաջ միայն՝ ո կորցնում է իւր ձայնը և կարգացուում է օ՝ (ով):

գ. Բառի վերջում օ չէ գործածուում, այլ միշտ ոյ կամ ո (յետոյ, կեցո՛):

դ. Բառի մէջը ո և օ տառերը միապէս օ են կարգացուում (մօր, մօր, հօր, հօր):

46. Հետեւեալ բառերը երեք խմբի բաժանեցէք՝ ո և օ տառերի ուղղագրութեանը նայելով:—Օր, որ, օրթի, որդի, օղ, ողն, օղ, որդ, որթ, օրօրոց, օգնական, օժանդակել, ողբալ, որսալ, սոստակ, օժել, օթեանել, օձ, օտար, օրիորդ, սակի, սալ, օրինակ, օրէնք, օրհնութիւն, օձիք, օղի:

Ով, ովկիանոս, ովաղիս, ովսաննա:

Յետոյ, երեկոյ, յարգոյ, ապրեցո՛, կեցո՛, խոնարհեցո՛, զշտոյ, Յարոյ, Կարոյ, արտաքոյ, ներքոյ:

47. Հետեւեալ խօսքերից՝ մէջը օ ունեցող բառերը ջոկեցէք և տակները գիծ քաշեցէք:—Գիւղացին արօրով վարում էր ցեղը և խորխոր ակօսներ էր ձգում: Առաւօտը անօթուց ես գնացի ար-

տօրայքը դքսանելու: Անօրէն տաճիկը, ամօթը կորցրած, խլեց մեր կողմը՝ արօտից բերած. մայրս՝ աչքերից արտօսք թափելով, տան անօթները վաճառեց շուտով, զօչաքաղ տաճիկ պարտքը վճարեց, կողք յետ բերեց: Այսօր՝ աղօթելուց յետոյ, գնացինք բացօթեայ տեղ: Ճանապարհի մօտ մի արօսի ծառ կար, ծառի վրայ արօս թըռչունը բռն էր շինել: Լուսնեակի աղօտ լոյսը կրդիկըը ներս թափանցեց: Աղօրիքով մայրս աղ էր աղում, երբոր բօթաբերը համբաւ բերեց նորան իւր սպանուած որդու մասին:

48. Քրիստոսի մօտ բերին մի հիւանդ, որի ձեռքը գօսացած էր: Մեր ուսումնարանում գիշերօթիկ աշակերտներ կան: Աղասին գօտին կապեց, թուրը կախեց, դուրս վազեց: Ահն, եղբայր, քեզ մի դրօշ, որ իմ ձեռքով գործեցի: Եօթը զգօն ճանապարհորդներ՝ թեղօշի թօշնած տերևների հովանին արհամարհելով, թօթափեցին իրանցից յոգնածութիւնը, թողը, ամօթը և իրանց զօրեղ ոտներին ոյժ տալով՝ առաջ գնացին: Իմ եղբոր-որդին դարբին է. նա կրակի մէջ զօթում է երկաթը: Գորտի մի տեսակին ասում են դօրօշ, իսկ մողէսի մի տեսակին՝ քարադօրօշ: Քահանայք այսօր թափօր արին: Մանուկը թօթովելով աչքերը՝ կարդում էր մօր նամակը: Կարապետը աննշան թօշակ է ստանում: Նօքա լեզօնի պէս առաջս դուրս եկան: Հացթուխը լօշ է թխում: Պարտիզի պատերից կախուած են լօշտակի կակուղ ցօղունները: Գիւղացիք յօւնից աւել են կապում: Վերարկուի մի տեսակին ասում են լօղիկ: Սօլամիտ մարդուն խօսք չես հասկացնիլ: Ծանօթիս ծնօտը խօթայել է: Մանուկը ծօղակով թռչուն բռնեց թօնուտ խտերի մէջ:

49. Պօղոսը համառօտ նամակով իւր կարօտը յայտնեց եղբորը: Աղքատը օտին կօշիկ չունէր: Կրօնի ուսուցիչը հօրաքրոջն կարճառօտ պատմեց գասի բովանդակութիւնը: Առիւծը որջի մէջ կօշում էր. յետոյ նա իւր հզօր ձայնով մռնչաց և՛ հօտն ու հօրանը, եզն ու հօտաղը սարսափի մէջ ընկան: Քամին զօղանջում էր. մանկիկի ձօճը և ժամացոյցի ձօճանակը շարժուած էին: Վատերը ձօշում են լաւերին: Մի մրայօն աղջիկ իւր անդրանիկ ձեռագործը մօրաքրոջը ձօնեց: Տղան անձրևաճրի առաջը մօր կապեց: Գայլը յօշոտեց մի գառը: Պօղոսը յօժարութեամբ մի յօղուած գրեց: Կապիկի մատների յօգեղը երկար են: Երկարամօրուք այժը հպարտ-հպարտ ման էր գալիս: Այգեպանը յօնքերը կիտած յօտում էր որթան փափուկ սատերը—մասն էր կտրում: Մի բան յօրինելիս՝ արթուն եղիր, մի՞

յօրանջիր: Նախատօնակից յետոյ երկխային մկրտեցին. քահանան նարօտը կապեց, անունը նօտը տառերով գրեց տօմարի մէջ և իւր պաշտօնը վերջացրեց: Եկեղեցում կան ոսկեզօծ պատկերներ, իսկ նոցա երեսներին փաւած են ոսկեզօծ ծածկոյններ:

50. Պօղոսը պարեպօտը հազաւ և Սօսի հետ գնաց լեռները քօշ որսալու: Սօսի ծառի սօսափունը սաստիկ դուր են գալիս ինձ: Տօտախի (շիւշիլի) փայտից ամաններ են շինում: Գիւղացի հարսը՝ քօղը երեսին, քօչերը հազին, ցօղաթաթախ մարդերից կանաչի էր քաղում: Նօտարները տօն օրերին իրանց դրասենեակները չեն բաց անում: Ծօշափելով կարելի է իմանալ առարկայի նօսը ու թանձրը: Ծօթի հաց: Պրօնից (ղույթուկ) շինում են բարձեր: Գօշ Մխիթարը լաւ-լաւ առակներ ունի գրած: Նաւթին նօթ էլ են ասում: Նօթ են ասում նմանապէս մի տեսակ պատուական կարմիր ներկի:

51. Այն մարդուն շատ առօք-փառօք ընդունեցին: Խնօք երեսխան իրօք պատիւ է վայելում: Կարծեօք ամենքը գնացին: Արդեօք ուսումնարանից էր գալիս: Մարդկօրէն գործած սխալներդ Աստուած կըներէ:—Գործել—գործօն: Կարել—կտրօն: Թերթել—թերթօն: Կոչել—կոչօնք:

52. Վերոյիշեալ վարժութիւններից այբբենական կարգով ջոկեցէք բոլոր օ ունեցող բառերը և ձեզ համար աղիւսակ կազմեցէք: Աշխարհարար լեզուի մէջ այդ բառերից դատ՝ օ-ով գրուող բառեր հազիւ թէ պատահեն:

Ե ԵՒ Է ՏԱՌԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

§ 48. Հայերէն այբուբենի մէջ կան էլի երկու տառ, որոնք բառերի մէջ համարեան միանման հնչիւն ունին, թէև դոցա ուղղագրութիւնը տարբեր է իրարից: Գոքա են և և է:

ա. Բառի սկզբում և և է տառերը պահպանում են իրանց նախնական հնչիւնը:

բ. Բառերի վերջերում և տառը երբէք չի գործածուում:

դ. Բառերի մէջը Մ և է միատեսակ են հնչում:

53. Ես, էս, եղ, եղևնի, էգ, էակ, երգ, եղև, եղ, եղևակ, էշ, էրէ, էութիւն, եզր, ելնի, եկաւ, էկաւ, եղաւ, էլաւ, եկեղեցի, եղան, եղաման, էծ, էջ, էր, էհ, էլ, եղբայր, եղեամ, եղէգն: Հայրս, եղևնի է կտրում: Քոյրդ եղինջ է քաղում: Եղջերուն խոտ է ուտում: Գայիանէ-ն վերցրեց մի եռասանի: Վառվառէ-ն եպիսկոպոսի ձեռքը համբուրեց: Հոփիսիմէ-ն եռանդոտ աղջիկ է: Մամբրէ-ն երեք երկար երգ երգեց: Մարգարէ-ի հրամանով երկրի երեսը մանանայով ծածկուեցաւ: Եօթը հողի կերան մեր եփած կերակրից: Երկինքը ծածկուել է ամպերով:

§ 49. Բառի մէջը է գործ է ածւում.

ա. Միքանի որոշ վերջաւորութիւն ունեցող բառերում:

բ. Այն բառերում որոնք փոփոխուելիս, է հնչիւնը կամ փոխում են կամ կորցնում:

գ. Միքանի բառերի մէջ, որոնցում է հնչիւնի փոփոխութիւնը կամ գործածութիւնից ընկել է կամ դեռ ևս գժուար է ձեզ հասկանալ:

54. Հետևեալ բառերի վերջաւորութիւնների տակը գիծ քաշեցէք և այդպիսի վերջաւորութիւն ունեցող բառերում միշտ է տառը գործ ածեցէք:

- ա. Գիննւէտ, հոտաւէտ, ծաղկաւէտ, մրգաւէտ...
- բ. Քաջապէս, արիապէս, մեծապէս, զրականապէս, այսպէս...
- գ. Հացեղէն, քարեղէն, հողեղէն, մսեղէն, կանաչեղէն...
- դ. Մարդկօրէն, քաջօրէն, ինքնօրէն, կատաղօրէն...
- ե. Հայերէն, տաճկերէն, ռուսերէն, պարսկերէն, ֆրանսերէն...
- զ. Թագընկէց, գահընկէց, պատընկէց, շանթընկէց...
- է. Զրօրհնէք, գնացէք, եկէք, տարէք, կրտսնէք, կրխօսէք...
- ը. Կըզըէր, կըբերէր, կըտանէր, կ'ուտէր, կըխմէր, կըհագնէր...
- թ. Յովհաննէս, Վրթանէս, Արիստակէս...
- ժ. Նաթանայէլ, Իսրայէլ, Էմանուէլ, Աբէլ...
- ժա. Կայէն, Ռուբէն, Բարկէն, Սուբէն...

55. Փոփոխեցէք հետևեալ բառերն այնպէս, որ է հնչիւնը տեղը ի գրուի:

Ապաւէն—ապաւինել: Անէծք—անիծել: Վրէպ—վրիպակ: Ասպարէզ—ասպարիզանալ: Գէջ—գիջանալ: Լէզ—լիզել: Գէշ, գէս, գէտ, գէր, գէզ, գէպ, գէպ, —գիպչել, դէտ, դէմք, դէպք—գիպուածք: Զէնք, ընդդէմ, ծէս, կէս, հանդէպ, հանդէս, հրկէզ, ձէթ—ձիթէնի, մէզ, մէջ, մէջք, յառաջադէմ, շէկ, շէն, շէնք, շէջ, պատուէր, նուէր, հրաւէր, պարտէզ, ջրվէժ, սէզ, սէր, ստէպ, վէճ, վէմ, վէրք, վէպ, տղէտ, տէզ, տէր, անօրէն, փոխարէն, քէն, սէզ—սիզապատ:

56. Հետևեալ խօսքերի մէջ գտէք է ունեցող բառերը և նոցա տակը գիծ քաշեցէք:—Պատից կախած է մի բարտէզ: Ախտաժտ և աղէտաւոր մարդիկ եկեղեցում աղօթում և ալէլուիա էին կարգում: Ծաղիկների առէչքները բացուեցան: Աղուէսը իւր որջը մտաւ: Գէթ ամեն մի մարդ կարողանար պարտաճանաչ լինել: Ծառերի տերևները ծածկուեցան զազպէնով: Եկեղեցու գմբէթին նստած էր բուէճը: Գոմէջը ուժեղ է: Երէկ մեր տանու երէցը թեմակալի մօտ էր: Թէպէտ թատրոն չեմ գնում, բայց այնտեղ պատահածները հակամէտ եմ լսելու: Ծոյլ տղան իմ աչքումս երբէք մէկ կոպէկի արժէք չէ ունեցել: Զուլճակի սանրի բանիլքը բէջ է կոչւում: Նազարէթը ժապաւէն գնեց: Եղևնի ծառից խէժ է դուրս գալիս: Դեղձի ծառին կռէզ կար: Ծէգը բացուելիս՝ զիւզային անտառում խէչակ էր կարում: Կայէնը Աբէլի գէմ խէթ ունէր: Ուղտի կռնակի աւելամիսը կուտկէն է կոչւում:

57. Կոճղէզաւոր բոյսերը մեծ մասամբ կծու համ ունին: Դարբինը ձեռում է հրաչէկ երկաթը: Հէնց մաթէմատիկայից եմ ես շատ դասեր առնում: Մի հէք աղջիկ մեն-մենակ աղքատութիւն էր անում: Հրէան պարէն էր վաճառում: Հայրս տան առաջ պատնէշ քաշեց: Ես նարդէս ցանեցի: Կօշիակարը շրէշ էր գործածում: Ծառէնը զիշատող թռչուն է: Զէզոք մարդիկ զխացաւանք չեն քաշում: Ամենքը պէտք է սակաւապէտ լինին: Ռուբէնը վէզ էր խաղում: Քամին վէտ-վէտ փչում էր: Սա վէս-պնդաղլուխ մարդ է: Որդին հօր պատուին վրէժիմնդիր է: Սալամ թռչունին տուռէճ են ասում, շորի ծայրի կտրուածքին—արէզ, խեղճ, թռչաւոր մարդուն—փէք: Քրիստոնէական օրէնքը քրէական յանցաւորին պատիժ է սահմանում: Մի ֆէսաւոր մարդ ինքն իրան խօսում էր:

58. Վերոյիշեալ երեք վարժութիւնների միջից է-ով գրուող բառերը ջոկեցէք և այբբենական կարգով ձեզ համար մի աղիւստեկ կազմեցէք: Բացի այդ բառերից՝ աշխարհաբար լեզուի մէջ ուրիշ է-ով գրուող բառեր հազիւ թէ պատահեն:

Փոքրիկ	Փոքրիկ-ը՝ ցոյց է տալիս Հայկանուշի որպիսութիւնը.— Ինչպիսի Հայկանուշը: Երկավանկ բառ է, ունի երկու ձայնաւոր—ո, ի և չորս բաղաձայն—փ, ք, ը, կ:
Հայկանուշը	Հայկանուշը՝ չնչաւոր առարկայի անուն է: Գործ կատարողն է.— ո՞վ տեսաւ: Բաղաձայնի բառ է. ունի երկու ձայնաւոր—ա, ը, երկու երկբարբառ—այ, ու և չորս բաղաձայն—կ, հ, ն, շ:
տեսաւ	Տեսաւ՝ Հայկանուշի գործողութիւնն է.— Ինչ արեց Հայկանուշը: Երկավանկ բառ է, ունի երկու ձայնաւոր—ե, ա, և երեք բաղաձայն—տ, ս, լ:
հօրը:	Հօրը՝ չնչաւոր առարկայի անուն է: Գործ կատարողը չէ: Ո՞ւմ տեսաւ: Երկավանկ բառ է. ունի երկու ձայնաւոր—օ, ը և երկու բաղաձայն հ, ը:

59. Հետևեալ խօսքերի մէջ դտէք առարկան, որպիսութիւնը և գործողութիւնը: Իմացէք թէ ամեն մի բառ քանի վանկ ունի և իւրաքանչիւր վանկի մէջ ինչ ձայնաւոր և բաղաձայն ստաւեր կան. բոլոր խօսքերը լուծեցէք ձեր տետրակների վրայ վերի օրինակի պէս:

—Փոքրիկ Հայկանուշը տեսաւ հօրը: Հայրը բռնով մանր ու փայլուն սերմեր էր ցանում: Անուշ խօսքը տուն կրչինէ: Դառը խօսքը տուն կրքանդէ: Թունդ քացախը իր ամանը կը ծաքացնէ: Կարմիր ձուն Զատիկին կը սաղայ: Աշխատասէր մարդու դռանը քաղցածութիւնը չի մօտենալ: Մլաւան կատուն մուկ չի բռնիլ:

Գ

ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԵՆԹԱԿԱՑ

Հաւր խօսեցաւ:—Այս խօսքի մէջ հ աւ ի մասին ենք խօսում: Օրը քացուեցաւ:—Այստեղ խօսում ենք օրի մասին:

55. Հետևեալ օրինակների մէջ գծով նշանակեցէք թէ ում կամ ինչի մասին է խօսքը:—Խոտը կանաչում է: Արևն է փայլում: Ծիծեռը դարնան հետ մեզ մօտ է թռչում: Ծագեցաւ արեգակը: Ծաղկեցաւ մանուշակը: Մեղուն թողեց իւր փեթակը: Արշալոյսը շուտ քացուեցաւ: Գրիստոս յարեաւ: Առուները խոխոջացին: Ծառերը բողբոջ արձակեցին: Դաշաը սիրուն զարդարուեցաւ: Գեղեցկագոյն դարուն եկաւ:

Ձուկը լողում է: Թռչունը թռչում է: Ծառերը ծաղկում են: Սկսում է գարունը: Հալում են ձիւները: Գալիս է ամառը: Հասնում են արտերը: Աշունն է դալիս: Ծառերը լաւ-լաւ պտուղ են տալիս:

Երկրագործը վարեց հողը:—Այստեղ մենք խօսում ենք երկրագործի մասին. ասում ենք՝ թէ ո՞վ վարեց: Չկնորսը ծովը զցեց մեծ ուռկան:—Այստեղ խօսում ենք ձկնորսի մասին. ասում ենք՝ թէ ո՞վ զցեց:

Ջուրը հոսում է:—Այստեղ խօսում ենք ջրի մասին. ասում ենք՝ թէ ինչն է հոսում: Գետը սառչում է:—Այստեղ խօսում ենք գետի մասին. ասում ենք թէ՛ ինչն է սառչում:

§ 50. Այն առարկան, որի մասին խօսում ենք, նմութակայ է կոչւում:

ա. Ենթական գլխաւոր առարկան է, որի մասին խօսում ենք:

բ. Ենթական գործ կատարող առարկան է, որի մասին խօսում ենք:

դ. Ենթական իմացում է՝ ո՛վ և ի՛նչ հարցմունքներով:
 դ. Ո՞վ հարցականը շնչաւոր առարկաների համար է:
 է. Ի՞նչ հարցականը անշունչ առարկաների համար է:

60. Հետեւեալ օրինակների մէջ գտէք ենթական և նորան համապատասխան հարցը:—Մպիտակ ձիւնը ծածկեց երկիրը: Ծառը մերկացաւ: Առուն սառեցաւ: Բարկացաւ արևոր ձմեռը: Թռչունները հեռացան դէպի տաք երկիրներ: Ծննդուն իրան գործն սկըսեց: Կարմիր արևը բարձրացաւ երկինք: Արտուտը թրպրտաց: Եղբայրն ուսումնարանից եկաւ տուն: Ուսուցիչը նստում է աթոռի վրայ: Դասատանը գրատախտակ կայ: Աշակերտների առջ գրած են քարեախտակներ: Ուսուցիչն ուսուցանում է: Աշակերտներն ուսանում են: Քանոնը կտրուեցաւ: Պատը քանդուեցաւ:

Ս Տ Ո Ր Ո Վ Ե Ը Լ

Աշակերտը գրում է:—Այս խօսքի մէջ ենթական աշակերտն է: Ենթականի մասին ասուած է՝ թէ նա ի՛նչ է անում:—գրում է: Գրում է բառը ցոյց է տալիս աշակերտի արածը:

Մանուկները խաղում էին:—Այս խօսքի մէջ ենթական է մանուկները: Մանուկների մասին ասուած է՝ թէ նոքա ի՛նչ էին անում:—խաղում էին: Խաղում էին բառը ցոյց է տալիս ենթականի արածը, գործածը:

61. Հետեւեալ օրինակների մէջ գտէք ենթական և այն բառը, որ ցոյց է տալիս նորա արածը, գործածը: Գործողութիւն ցոյց տուող բառի տակը դիժ քաշեցէք:

—Սոխակը երգում է: Ծիծեռնակը ծլլում է: Գորտը կրկուում է: Մանուկները գնացին դաշտը: Երկրագործը երկիրը վարեց: Խոտը հաւաքեցին հնձողները: Մշակը բանելու գնաց: Գիւղացին կրկալսէ կալը: Աղունն աղում է ջաղացպանը: Հացը թխում է հացթուխը: Կօշկակարը կարում է կօշիկներ: Կօշկակարը կօշիկներ է կարում: Կօշիկները կարում է կօշկակարը: Կօշկակարն է կօշիկներ կարում: Ծառը մերկացաւ:—Այս խօսքի մէջ ծառը ենթական է: Ծա-

ռի մասին չէ ասուած, թէ նա ի՛նչ արեց, ի՛նչ գործեց, այլ թէ նորան ի՛նչ եղաւ, ի՛նչ պատահեցաւ:—մերկացաւ:

Փայտը կտրուեցաւ:—Այս խօսքի մէջ ենթական է փայտը: Փայտի համար ասուած է, թէ նորան ի՛նչ պատահեցաւ, ուրիշները նորան ի՛նչ արին: Կտրուեցաւ բառը ցոյց է տալիս, թէ փայտին ի՛նչ եղաւ, ի՛նչ պատահեցաւ:

62. Հետեւեալ օրինակների մէջ գտէք ենթական և այն բառը, ինչ որ ենթականի մասին ասուած է:—Գետերը սառչում են: Դաշտերը ծաղիկներով լցւում են: Ծովը ալէկոծուեցաւ քամուց: Երկիրը ծածկուեցաւ ձիւնով: Արձիճը հալուեցաւ կրակի մէջ: Օրը տաքացաւ: Հունձը վերջացաւ: Թելը կրկտուի: Խոտը կըհնձուի: Զուրը կրխմուի: Հացը կ'ուտուի: Ծորերը կըմաշուին: Տները կըչինուին:

Մեղըը քաղցր է:—Այս խօսքի մէջ ենթական է մեղը: Ենթականի մասին չէ ասուած, թէ նա ի՛նչ արեց, կամ նորան ի՛նչ պատահեցաւ, այլ ասուած է, թէ նա քաղցր է: Զաղցր է բառը ցոյց է տալիս, թէ մեղըը ի՛նչպէս է:

Ապակին թափանցիկ է:—Այս խօսքի մէջ ենթական է ապակին, ապակու մասին ասուած է, որ նա թափանցիկ է: Թափանցիկ է՝ ցոյց է տալիս, թէ ապակին ի՛նչպէս է:

63. Հետեւեալ օրինակների մէջ գտէք ենթական և այն բառը, որ ենթականի մասին ասուած է. իմացէք թէ ենթականի մասին ասուած բառը ի՛նչ է ցոյց տալիս:

—Քացախը թթու է: Լեղին դառն է: Աշխատանքս ծանր է: Բարձր փափուկ է: Ծովը խոր է: Ծառը բարձր է: Աշակերտը աշխոյժ է: Աշակերտը պատրաստեց դասերը: Մայրս պառաւ է: Մայրս պառաւում է: Մայրս գնաց եկեղեցի: Լուսինը պայծառ է: Լուսինը աղօտանում է: Լուսինը լուսաւորեց երկիրը: Ամպերը թանձր են: Ամպերը թանձրացան: Ամպերը անձրե թափեցին:

ԽՍՆՈՐԸ պտուղ է:—Այս խօսքի մէջ խնձորը ենթական է: Ենթականի մասին ասուած է, որ նա պտուղ է. պտուղ բառը չէ ցոյց տալիս, թէ ենթական ի՛նչ է անում, չէ ցոյց տալիս, թէ ենթականին ի՛նչ է պատահում, կամ նա ի՛նչպէս է, այլ ցոյց է տալիս, թէ խնձորը ի՛նչ է, ի՛նչ բան է:

Գիրքը դասական առարկայ է:—Այս խօսքի մէջ գիրքը

ենթակայ է: Գրքի մասին ասուած է, որ նա առարկայ է: Առարկայ է՝ ցոյց տալիս թէ գիրքը ինչ է:

64. Հետեւեալ օրինակների մէջ գտէք ենթական և իմացէ՛, թէ ենթակայի մասին ինչ է ասուած:—Ծիծեռնակը թռչուն է: Գեղարքունին ձուկն է: Մանուշակը ծաղիկ է: Անանուխը խոտ է: Խոտը բոյս է: Երկաթը հանք է: Զուրը խմելիք է: Հացն ուտելիք է:—Յորենը հացաբոյս է: Յորենը օդատար է: Յորենը բուսնում է: Աշակերտը մարդ է: Աշակերտը փոքր է: Աշակերտը հիւանդա-ցաւ: Աշակերտը գրեց դասը: Հայրս մարդ է: Հայրս բարի է: Հայրս նեղացաւ ինձանից: Հայրս ներեց ինձ: Ծառը բոյս է: Ծառը բարձր է: Ծառը պտուղ է տալիս: Ծառը կորուսւմ է:

§ 51. Այն բառը, որ ցոյց է տալիս թէ ենթական ինչ է անում, թէ նորան ինչ է պատահում, թէ նա ինչ-պէս է և թէ նա ինչ է, կոչուում է ստորոգեալ:—Ենթա-կայի մասին պատմածը կոչում է ստորոգեալ*):

Ենթական գտնելու համար պէտք է ստորոգեալին հարց տալ, իսկ ստորոգեալը գտնելու համար՝ ենթակային:

65. Հետեւեալ օրինակների մէջ գտէք ենթական և ստորոգեալը և իմացէք, թէ ինչ հարցերի են նորա պատասխանում:—Թռչունը նստած էր վանդակի մէջ: Մի մարդ վանդակից արձա-կեց թռչունը: Թռչունն ուրախ երգ երգեց: Թռչունը գեղեցիկ էր: Թռչունը արտուտիկ էր: Գարունն սկսուեցաւ: Գարունը մեղմ է: Գարունը տարուայ գեղեցիկ եղանակն է: Ծոբ ամառն եկաւ: Մարդ-կանց գործերը շատացան: Աշունն անձրևային էր: Աշունը թռչուն-ները գնում են հետու երկիրներ:

- Մենք արժանացանք ուրախ մայրսին.
- Ծառեր, ծաղիկներ ողջ կանաչեցին.
- Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը
- Ուրախ ու զուարթ առաջ վազեցին:

§ 52. Ենթական և ստորոգեալը մի ամբողջացած միտք են յայտնում: Ամբողջացած միտքը ասում է նա-

*) Ստորոգեալ նշանակում է ստուգապէս ասուած:

խաղասութիւն: Ենթական և ստորոգեալը նախադասու-թեան անդամներն են*):

Ամեն մի ամբողջացած նախադասութիւնից յետոյ գրւում է ստորակէտ կամ վերջակէտ:

Ստորակէտ գրւում է՝ երբոր մի նախադասութիւն միւս նախադասութեան մասն է կազմում:

Վերջակէտ գրւում է՝ երբոր նախադասութիւնը կապ չունի իւր հարեան նախադասութեան հետ և նորա մասը չէ կազմում:

Նախադասութիւնը միշտ պէտք է գլխատառով սկսել: Վերջակէտից յետոյ ևս նոր նախադասութիւնը գլխատա-ռով է սկսւում:

66. Գտէք ենթական և ստորոգեալը:—Մարդը ման է գալիս: Զուկը լողում է: Թռչունները թռչում են: Գորտերը ցատկոտում են: Օձերը սողում են: Արևը լոյս է տալիս: Աքաղաղը կանչում է: Ճրագը վառւում է: Աչքը մարմնու ճրագն է: Մարմնու ճրագն աչքն է: Գեղեցկապէս փայլում են աստղերը: Ուրախ թռչկոտում է թռչնիկը:

67. Կազմեցէք նախադասութիւններ, որոնց ստորոգեալը ցոյց տայ, թէ առարկան ինչ է անում, իսկ ենթակայ լինին հետեւեալ անունները՝ դարբինը, ատաղձագործը, ուսուցիչը, աշակերտը, սո-խակը, հաւը, սքաղաղը, լուսինը, անձրևը, արևը, մոմը, ձկնորսը, որսորդը, ձուկը, շունը, քամին, ծաղիկը, կայծակը, գետը, հովիւը, սայլորդը, քահանան, ձին, կովը, հայրը, մայրը, խոհարարը, վար-ժապետը:

*) Կարող է պատահել այնպիսի նախադասութիւն, որի մէջ թէև ենթական չէ գրուած, բայց հարցի միջնորդութեամբ՝ կամ առանց հարցի էլ պարզ հասկա-ցում է, թէ որն է ենթական: (Գնում եմ: Հնձեց: Երգեցիր):

Բայց երբեմն պատահում է և այնպիսի նախադասութիւն, որի մէջ ենթակայ չկայ և հարցմունքի միջնորդութեամբ էլ որոշ չէ իմացում, թէ որն է ենթական: (Ցուրտ է):

68. Նախադասութիւններ կազմեցէք, որոնց մէջ հետեւալ բառերը ստորոգեալ լինին՝ բզզում է, կրկնում է, կրկնում է, մկրկում է, մայում է, բառաչում է, խառանչում է, խրխնջում է, մրթմրթում է, մրմռում է, կաղկանձում է, կկանչում է, հաջում է, ոռնում է, մոնչում է, մլաւում է, ծլծլում է, որտում է, փայլատակում է, ճայթում է, ճրճում է, քանդում է, լուսաւորում է, տաքացնում է, այրում է, այրում է, վառում է, վառում է, լալիս է, երգում է, կարգում է, կարգացնում է, ուսանում է, ուսուցանում է, կարում է, կարում է, մաշում է, մաշում է:

69. կազմեցէք նախադասութիւններ, որոնց մէջ ստորոգեալը ցոյց տայ, թի առարկան ինչպէս է, իսկ ենթակայ լինին հետեւալ բառերը՝ վարչը, միսը, արիւնը, բամբակը ձուն, աղակին, բարը, քացախը, շաքարը, խաղողը, ջուրը, իւղը, ածելին, կացինը, թելը, թուղթը, պողպատը, ոսկին, արծաթը, մանուկը, հացը, փայտը, օձը, դետը մանդաղը, դարունը, ամառը, աշունը, ձմեռը:

70. կազմեցէք նախադասութիւններ, որոնց ստորոգեալը ցոյց տայ, թէ առարկան ինչ է, իսկ հետեւալ բառերը ենթակայ լինին՝ ուռնին, տանձնին, յունվարը, մայիսը, դարունը, գետը, նապաստակը, դորսը, կաղինը, բազը, շունը, արջը, ձուրթը, ոտը, դաստակը, մասները, դուխը, դէմքը, մեղուն, թիթեռը, կտանը, բրինձը, դեղալը, գրէչը, գիրքը, սեղանը, արօրը, աթոռը, հացը, ջուրը, հինգչարթին:

Պ Ե Լ Ե Բ Ե Ն Ը Դ Բ Ե Ի Բ

Գարնանային գեղեցիկ օրերն սկսուեցան:—Այս նախադասութեան մէջ գարնանային բառը ցոյց է տալիս թէ ո՞ր օրերն սկսուեցան. գեղեցիկ բառը ցոյց է տալիս, թէ ինչպիսի օրերն սկսուեցան:

Գարնանային և գեղեցիկ բառերը դրուած են օրեր բառի համար:

71. Հետեւալ նախադասութիւնների մէջ գտէք թէ ոտք դրած բառերը ինչին են վերաբերում, ո՞ր բառի համար են դրուած:—Յուրտ գիշերն անցաւ: Պայծառ առաւօտը բացուեցաւ: Գեղեցիկ

ցիկ թռչունները զարթեցան: Կանաչ դաշտը փայլուն ցօղով ծածկուեցաւ: Ընտանի կենդանիներն արօտ դուրս եկան: Վայրենի դաղանները բնբրը մտան: Հարուստ ամառն անցկացաւ: Խոնաւ աշունն սկսուեցաւ:—Սպիտակ ձիւնը ծածկեց սարեր ու ձորեր:—Պայծառ աստղերը փայլում էին երկնքում: Առաջին աշակերտը կարգաց դասը: Վերջին նստարանի վրայ նստած են հինգ աշակերտ: Երեք ճանապարհորդ միասին դնում էին:—Սննեակի պատերը բարձր են: Եկեղեցու դմբէթը գեղեցիկ է: Զիու պարանոցը կոր է: Յովհաննէսը վերցրեց ընկերի գիրքը: Գեղեցիկ թռչունը երգում է: Երկրորդ թռչունը երգում է: Արամի թռչունը երգում է:

Զինորսը չանգալով ձուկ բռնեց:—Այս նախադասութեան մէջ ձուկը ցոյց է տալիս թէ ձկնորսը ինչ բռնեց. չանգալով բառը ցոյց է տալիս, թէ ինչով բռնեց: Զինորսը գետից չանգալով ձուկ բռնեց:—Այս նախադասութեան մէջ էլ գետից բառը ցոյց է տալիս, թէ ո՞րտեղից բռնեց:—Զուկ, չանգալով, գետից բառերը դրուած են ընկեց բառի համար, ստորոգեալին են վերաբերում:

72. Հետեւալ նախադասութիւնների մէջ գտէք, թէ ոտք դրած բառերը ինչ են ցոյց տալիս, ո՞ր բառի համար են դրուած:—Մարդիկ ձմեռը տաք շորեր են հագնում: Ամառը ծառերի պտուղները հասունանում են: Աշխատասէր աշակերտները սովորում են իրանց դասերը: Տանը եղբայրը սարքում էր իւր գութանը: Այսօր հովիւը ծախեց երեք փափլիկ գառնուկներ: Երէկ հայրս գնեց մեզ համար հարկաւոր գրքեր: Կօշկակարը շատ է աշխատում խանութում: Դարբինը մեծ մուրճով ուժգին խփում է տաք երկաթին: Դարբինը երկաթից շինում է լաւ-լաւ կացիկներ: Զմեռը ջուրը սառչում է ցրտութիւնից: Ամառը տաքութիւնից ջուրը գոլորշիանում է: Կովը սեղանատամներով որոճում է խոտը: Մարդիկ իրանց ձեռքով հաւաքում են երկրի առատ տուրքը: Ստեղծողը ամենայն ժամանակ վարձատրում է աշխատատուրներին: Փրկիչը օրհնում է ըարի մանուկներին:

§ 53. Այն բառերը՝ որոնք դրուած են ենթակայի կամ ստորոգեալի համար և նոցա միաբը պարզում ու լրացնում են, կոչւում են պարզաբանող բառեր:

Պարզաբանող բառերը միմիայն ենթակայի և ստորոգեալի համար չեն գրուում, նորա մէկ-մէկու ևս կարող են պարզաբանել:

Պարզաբանող բառերից ոմանք գրուում են առարկայի համար, իսկ ոմանք գործողութեան համար:

73. Վերևի վարժութեան մէջ իմացէք, թէ պարզաբանող բառերից որոնք են առարկայի համար գրուած և որոնք գործողութեան: Արտագրեցէք առարկայի և գործողութեան համար գրուած բառերը ջոկ-ջոկ՝ այն բառերի հետ, որոնց համար գրուած են, երկու խումբ բաժանելով նոցա: (Տաք շորեր:—Հազնում են անոր):

§ 54. ա. Ենթական և ստորոգեալը նախադասութեան գլխատր անդամներն են:

բ. Պարզաբանող բառերը նախադասութեան երկրորդական անդամներն են:

գ. Առանց ենթակայի և ստորոգեալի նախադասութիւն չի լինիլ:

դ. Առանց պարզաբանող բառերի նախադասութիւն կարող է լինել:

74. Հետեւալ նախադասութիւնների մէջ գտէք պարզաբանող բառերը, որոշեցէք թէ ինչ հարցերով են իմացոււմ և որ բառին են վերաբերում:

—Փոքրիկ Հայկանուշը տեսաւ իւր հօրը: Հայրը բռնով մանրու փայլուն սերմեր էր ցանում: Հայրը սերմերը ցանում էր վարած ցելում: Երկու շաբաթից յետոյ ցելը ծածկուեցաւ կանաչ մետաքսեայ խոտերով: Կանաչը փոքր առ փոքր բարձրացաւ: Յողունների գլխներին կապապոյն ծաղիկներ երևեցան: Երբոր վուշը հասաւ, Հայկանուշի ծնողները արմատից պոկեցին նորան: Փետած վուշից մանրիկ խուրձեր կապեցին: Վուշից ստանում են համեղ ձէթ և պատուական թել: Վուշի թելից գործում են սպիտակ քաթան:

75. Հետեւալ նախադասութիւնները հարցերով լուծեցէք:—

Անուշ խօսքը քար կըծակի:—Թունց քացախը իւր ամանը կըճաքացնի:—Կուշտը սովածին մանր կըբրդի:—Ուրագն իր կոթը չի տաշիլ:—Ճրագն իր տակը լոյս չի տալ:—Անշնորք մարդու լեզուն երկար կը լինի:—Սուտ ստողի տունը կրակ ընկաւ, ոչ որ չհաւատաց:

ՊԱՐԶԱԲԱՆՈՂ ԲԱՌԵՐԻ ՏԵՍԵԿՆԵՐԸ

ա. Պարն անային գեղեցիկ օրերն սկսուեցան:

բ. Երկու մանուկ խաղում էին միմեանց հետ:—Առաջին մանուկը մեծ էր իւր ընկերից:

գ. Թագաւորի պալատը գեղեցիկ կերպով զարդարած է:

§ 55. Նշանակած բառերը գրուած են առարկայի համար և նրան պարզաբանում են: Առարկային պարզաբանող բառերը կոչոււմ են որոշող: Որոշող բառերը մի որեիցէ առարկայ ջոկում են իրան նման ուրիշ առարկաներից:

Որոշող բառերը երեք տեսակ են. որպիսութիւնը որոշող՝ գեղեցիկ, զարնանային. որքանութիւնը—քանակութիւնը որոշող՝ երկու, առաջին, երկրորդ. պատկանելութիւնը—ուժը լինելը որոշող՝ թագաւորի, գիւղացու, քաղաքացու*):

76. Հետեւալ նախադասութիւնների մէջ գտէք որոշող բառերը:—Յուրա ձմեռն անցաւ: Գեղեցիկ զարուն սկսուեցաւ: Բացուեցան անուշահոտ ծաղիկները: Չարգարուեցան ձմեռային մերկ ծառերը: Տարագնաց թռչունները տաք երկրներից վերադարձան մեր աշխարհը: Ծառերի տերևները բացուեցան: Խոտերի ցողունները հասան: Վայրենի գազանները թողին իրանց որջերը:—Երկնային մարմինները գիշերները փայլում են հանդարտ:—Տաք ամառը կըգայ. օգտակար պտուղները կըհասնեն. հարուստ հացարոյսերը կըծածանուեն գաշտերում:—Մեր ուսումնարանում

*) Ծանօթ.—Վերջին տեսակ որոշողներին յատկացուցիչ էլ են ասում:

կան շատ աշակերտներ. առաջին նստարանի վրայ նստած են հինգ հոգի:—Ես նստում եմ երկրորդ նստարանի վրայ:—Վերջին նստարանը դատարկ է:—Իմ ընկերը շատ լաւ է սովորում:—Ես վերջրի ընկերիս գիրքը:—Ուսումնարանի բակը շատ մեծ է:—Մեր պարտէզն ընդարձակ է:—Պարտիզի ծառերը պտղատու են:

- ա. Յովհաննէս աշակերտը կարդում էր:
- բ. Իմ ընկեր Յովհաննէսը կարդում էր:
- գ. Մասիս սարը ձիւնապատ է:

§ 56. Վերևի օրինակների մէջ նշանակուած բառերը միևնոյն առարկայի անունն են, որին պարզաբանում են: Նոքա բացայայտ կերպով ցոյց են տալիս, թէ առարկան ո՞վ է կամ ո՞րն է.—*«Որ աշակերտը՝ Յովհաննէս. «Որ Յովհաննէսը՝ իմ ընկեր. «Որ սարը՝ Մասիս:*

Միևնոյն առարկայի երկու անուններից մինը, որ պարզաբանում է միւսին, կոչւում է քացայայտիչ:

Բացայայտիչն առարկայի երկու անուններից այն է՝ որ որոշեալ յօդ չունի և սովորապէս նախադաս է:

77. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք բացայայտիչ բառերը:—Հայոց Աբգար թագաւորը հաւատաց Քրիստոսին: Վարդան սպարապետը ազատեց Հայաստան աշխարհը պարսկական բռնութիւնից: Տրդատ թագաւորը Հայաստան աշխարհի հզօր վեհապետներից մինն էր: Հրազդան գետակը իւր սկիզբն աւնում է Գեղամայ լճից և անցնելով Երևան քաղաքը, Մասիս սարի ստորոտում խառնում է Երասխ գետի հետ:

- ա. Աշակերտը գրում է:
- բ. Աշակերտը գրում է դասը գրչով:

§ 58. Առաջին նախադասութիւնը համառօտ է: Երկրորդ նախադասութեան մէջ պարզաբանող բառերը զը-

բուած են ստորոգեալի համար և նախադասութեան միտքը լրացնում են: Լրացնող բառերը իմացում են՝ ո՞ւմ, ի՞նչ ո՞ւմը—*ինչին, ումնից—ինչից, ումնով—ինչով հարցերի միջնորդութեամբ:*

78. Հարցերով գտէք լրացնող բառերը:—Հայրս սիրում է իւր որդուն: Որդին յարգում է իւր հօրը: Հայրս որդուն գիրք տուեց: Որդին հօրը շնորհակալութիւն արեց:—Գիւղացին կտրեց ծառը:—Որսորդը սպանեց մի եղնիկ:—Մայրը կանչեց իւր աղջկան:—Ես փողերս գրքի տուի:—Ձուրը հարկաւոր է թոչուններին և կենդանիներին:—Վաղելիս դու ոտդ քարին խփեցիր:—Մենք ծառից պտուղ քաղեցինք:—Դուք բարեկամից նամակ կըստանաք:—Վարպետը ոսկուց շինեց գեղեցիկ շրթաներ:—Ես վաճառականից գնեցի մի գլխարկ:—Երկրագործն օրավարը վարում է արօրով:—Հայրն ուրախանում է իւր զաւակներով:—Մենք աչքով տեսնում ենք, ականջով լսում ենք, քթով հոտոտում են, լեզուով ճաշակում ենք, իսկ մատներով շօշափում ենք:

Այժմ աշակերտը տանը ուշի ուշով կարդում է դասը: Աշակերտը մի քանի անգամ կրկնում է դասը սովորելու (որ սովորի): Ես գնում եմ աշխատանքի:—Մանուկը ուրախութիւնից ոստոստում էր:

§ 58. Նշանակեալ բառերը դրուած են գործողութեան համար, բայց նորա միտքը չեն լրացնում. նոքա ցոյց են տալիս գործողութեան այլ և այլ պարագաները. ա. ժամանակը՝ թէ Նրը է կատարում գործողութիւնը, բ. տեղը՝ թէ ո՞րտեղ է կատարում, գ. ձևը՝ թէ ի՞նչպէս է կատարում, դ. քանակով ինչը՝ թէ ի՞նչքան կամ քանի անգամ է կատարում և ե. նպատակը կամ պատճառը՝ թէ ինչն, ի՞նչ պատճառով է կատարում:

Ուրեմն պարագայական բառերը լինում են հինգ տեսակ՝ ժամանակական, տեղական, որակական, քանակական, նպատակը և պատճառը ցոյց տուող:

Պարագայական բառերը գլխաւորապէս հետևեալ հարցերին են պատասխանում. Էրբ, ուր—ո՞րտեղ, ի՞նչպէս, ո՞րքան—ի՞նչքան—քանի՞ անգամ, ի՞նչո՞ւ, ի՞նչի՞ց, ի՞նչ պատճառից:

79. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք պարագայական բառերը և որոշեցէք նոցա տեսակները:—Ի՞նչպէս գեղեցիկ էր երգում սոխակը իւր երգը վարդի նորաբաց կոկոնի վրայ: Հազիւ միջնել էր և անս մեզ սաստիկ տանջում էին ցուրտը և անձրևը: Այսօր սաստիկ հրդեհ յայտնուեցաւ քաղաքի մի ծայրում բարեբաղդաբար կրակը շուտ հանգաւ: Ես գիտեմ հայերէն կարգալ: Դու գիտես ուսերէն և գաղիերէն խօսել: Մենք վրացերէն էլ գիտենք: Մէկգի կանգնեցէք, պաշտպանուեցէք քաջաբար և կամաւ անձնատուր մի լինիք: Կամայ-ակամայ պիտի տաք ձեր զէնքերը: Կամաց գնացէք, մենք էլ շուտով կըհասնենք ձեզ: Ամենևին չգիտեմ դասերս: Ես բոլորովին պատրաստ չէի: Իսպառ մոռացել էի: Շուտով գնանք, էլ աւելի շուտով սկսենք գործը: Բնաւ չի կարելի յետաձգել այն:

80. Բնութեան գեղեցկութիւնը էլ չէր սիրտում ծերունուն. նորա երեսը չէր ժպտում այլևս. մահուան մերձաւորութիւնը բոլորովին շփոթել էր նորան: Գիւղացին միայնակ կանգնած էր բլուրի վրայ և ուշիուշով գիտում էր շրջակայքը, ուր Արարիչը ձրի պիտել էր իւր սուստ պարզկները: Յաճախ մարդս այնպիսի բաներ է լսում, որ ստուգիւ գժուարանում է հաւատալ: Մայրը ստէպ թուղթ էր գրում իւր որդուն, որ անիրաւաբար գրեթէ մոռացել էր նրան: Յանկարծակի՝ այն նեղութիւնից յետոյ, արեգակը կըլսաւարի: Ուրիշների մասին խօսելիս՝ մեծապէս պէտք է գզուշանաս: Աստուած յայտնապէս խօսեցաւ Մովսէսի հետ: Մովսէսը ուժգին զարկեց դաւազանով և ապառաժից անմիջապէս առատ աղբիւր բղխեց: Վերջապէս՝ քառասուն տարուց յետոյ, Իսրայելացիք հասան քանանացոց երկիրը: Հայր և որդի ընտանեբար խօսում էին. հայրը մեղմաբար ցոյց էր տալիս որդուն կեանքի չարիքները: Բամբասանքը չարաչար խոցոտում է մարդու սիրտը: Անշուշտ կըհասկանանք, եթէ մինչև անգամ հարևանցի պատմէք: Ուշադիր մանուկը պիտի աւելի լսէ և սակաւ

խօսէ: Ո՞ւր ես առաջ գնում: Ո՞րտեղից ես գալիս: Ուստի՞ կըգաս, գնիրիբ բլբուլ: Արտաբուստ զարդարած էր, բայց ներքուստ լի էր ապականութեամբ:

81. Ե՞րբ էք տեսել, որ այրին ոտից գլուխ պճնուի իւր զարդերով թանկագին: Աշխատասէրը միշտ հաց կ'ունենայ, երբէք չի սովիլ: Երբեմն էի լոյս, իսկ այժմ եմ խաւար: Մերթ որոտում ես, մերթ ամպում ես, մերթ միջնում ես շատ, անձրևում ես կաթ-կաթ: Մերթ հարաւային հողմի նման հնչում ես խիստ սաստ, ես ընում եմ դգաստ: Լաւ է երբէք, քան անագան: Լաւ է ուշ, քան երբէք: Բժիշկը դեռ չէր հասել, հիւանդն արդէն մեռած էր: Առաւօտը կանուխ մենք եկեղեցի գնացինք: Յառաջագոյն լսել էինք, որ քահանան քարոզ պիտի կարդայ: Առայժմ մենք կարիք չունինք. ձեր օգնութիւնը առաջ ուրիշներին հասցըրէք: Նախ մտածիր և ապա խօսիր: Նախ և առաջ նիւթը պատրաստիր և յետոյ գրիր: Աստուծոյ նախախնամութիւնը յաւիտեան կայ:

82. Հարցերի օգնութեամբ վերոգրեալ վարժութիւնների պարագայական բառերը չորս խմբի բաժանեցէք՝ որակական, քանակական, ժամանակական, տեղական, և ձեր յիշատակարանում արտագրեցէք ապագայի համար:

Աստուած իմ, Աստուած իմ, ինչի՞ թողեցիր ինձ:

Հ ա յ ը, հ ա յ ը, վիշտը հոգիս իմ ճնշում է չարաչար:

§ 59. Այն առարկայի անունը՝ որին մենք խօսելիս գլխում ենք, կոչական բառ է ասուում: Կոչական բառերը իրարից և նախադասութեան միւս անդամներից բաժանուում են ստորակէտով: Կոչական բառի առաջին վանկի վրայ շեշտ է դրւում, եթէ նորա նախընթաց բառը շեշտ չունի: Իսկ եթէ կոչականը երկու բառից է, շեշտը դրւում է նախընթաց բառի վերջին վանկի վրայ:

83. Գտէք կոչական բառերը:—Աստ գու ինձ, սատղ վարդի, ուր ես ծլել, ուր ես ծաղկել: Տէր, օրհնիր իմ ձեռքի վաստակը:

Օրհնիր, Տէր, իմ ձեռքի վաստակը: Օրհնիր իմ ձեռքի վաստակը, Տէր: Ի՞նչ ես խրինջում, իմ ձի եռանդուն: Քոյրիկ, կանչեց քաջ պատանին: Ո՛վ լուսին, լուսին, արդէն քանի դար...: Գնա, եղբայր, Աստուած քեզ հետ: Հնչիրիկ, դարձեալ մի ասող թուա: Քոնն եղիր, բալաս, աչքդ խնկի արա: Հագար երանի՛ քեզ, մանուկ անբիծ, որ շուտ հեռացար դու այս աշխարհից:

Գ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՀԵՐԵԹՕՏ ԵՒ ԸՆԳԵՐՉԵԿ ՆԵԽՈՒԹԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Աշակերտը կարդում է:

բ. Աշխատասէր աշակերտը կարդում է իւր դասը:

Առաջին նախադասութիւնը կազմուած է միմիայն գլխաւոր անդամներից: Երկրորդ նախադասութեան մէջ կան նաև պարզաբանող բառեր:

§ 60. Այն նախադասութիւնը՝ որ միայն գլխաւոր անդամներից է բաղկացած, կոչւում է համառօտ նախադասութիւն:

Այն նախադասութիւնը, որի մէջ կան և պարզաբանող բառեր, կոչւում է ընդարձակ նախադասութիւն:

84. Գտէք համառօտ և ընդարձակ նախադասութիւնները:— Թոչուներ թոչում է: Երգող թոչունները ձմեռը հեռանում են օտար երկիրներ: Գիւղացին աշխատում է: Գիւղացին գարնանը արօրով վարում է հողը: Արտերը կանաչում են: Հնձողներն արտերը հնձում են սուր մանգաղներով:

Ծառերը ծաղկում են: Պտուղ կանաչում է: Ձիւնը սպիտակ է: Սոխակը տարազնաց թոչուն է: Հաւը ընտանի թոչուն է: Գարնանը ձիւնի տակից գլուխը հանում է սիրունիկ ձնծաղիկը: Կապուտակ մանուշակը գարնան կարապետն է:

85. Հետևեալ նախադասութիւններն ընդարձակեցէք:— Կովը բառաչում է: Շունը հաջում է: Ձին ուտում է: Պտուղ բուսնում է: Աշակերտը գրում է: Արեւը լուսաւորում է: Վարժապետն ուսուցանում է: Մայրս կարում է: Երկրագործը հերկում է: Հացթուխը թխում է: Դերձակը կարում է:

ՊԵՐՉ ԵՒ ՄԻՆԻՈՐԵԸԼ ՆԵԽՈՒԹԵՍՈՒԹԻՒՆ

ա. Աշակերտը կարդում էր, գրում էր և նկարում:

բ. Ապակին թափանցիկ է, կոկ և դիւրաբեկ:

գ. Կարապետը, Յովհաննէսը և Մկրտիչը գնացին ուսումնարան:

դ. Արեգակը, լուսինը և աստղերը երկնային մարմիններ են:

ե. Ուսուցիչը բերեց կապոյտ, կանաչ և կարմիր թանաք:

զ. Որսորդն սպանեց վայրենի եղնիկ, այծ և կիստար:

Լուծելով տուած նախադասութիւնները, մենք նկատում ենք..

ա. Առաջին և երկրորդ նախադասութեան մէջ մի ենթակայ միբանի ստորոգեալներ ունի:

բ. Երրորդ և չորրորդ նախադասութեան մէջ մի ստորոգեալ միբանի ենթակայ ունի:

գ. Հինգերորդ նախադասութեան մէջ մի առարկայի համար գրուած են միբանի միանման որոշողներ:

դ. Վեցերորդ նախադասութեան մէջ մի գործողութեան համար գրուած են միբանի միանման լրացնողներ:

ե. Այդ նախադասութիւններից իւրաքանչիւրը կարող ենք այնքան նախադասութեան վերածել, որքան կրկնած անդամ կայ: օրինակ՝ առաջին նախադասութիւնից մենք կրկնակնք՝ 1. աշակերտը գրում էր: 2. Աշակերտը կարդում էր: 3. Աշակերտը նկարում էր:

§ 61. Այն նախադասութիւնը, որի մէջ կրկնուած անդամներ չկան, կոչւում է սլարզ նախադասութիւն:

§ 62. Այն նախադասութիւնը՝ որի մէջ անդամներից մինը կամ միւսը կրկնուած է միքանի անգամ, կոչուած է միատրեալ նախադասութիւն, որովհետեւ նա կազմուած է միքանի պարզ նախադասութիւնների միախառնութիւնից:

§ 63. Պարզ նախադասութեան մէջ գլխաւոր և երկրորդական անդամները միմեանցից ոչ մի կէտով չեն բաժանուում:

§ 64. Միաւորեալ նախադասութեան մէջ կրկնուած անդամները միմեանցից բաժանուում են ստորակէտներով: Ստորակէտ չի գրուում ևւ բառից առաջ միայն, եթէ դա կրկնուած չէ:—Ես գիտեմ և՛ կարգալ, և՛ գրել, և՛ նկարել:—Ես գիտեմ կարգալ, գրել և նկարել:

86. Հետեալ պարզ նախադասութիւններից կազմեցէք միաւորեալ նախադասութիւններ:—Յորենն արգէն հասել է. գարին արգէն հասել է: Գետերը սառել են. լճերը սառել են: Խնձորենին ծաղկում է գարնանը. տանձենին ծաղկում է գարնանը: Բզէզները վրաս են տալիս ըոյսերին. թրթուրները վրաս են տալիս ըոյսերին: Մոծակները տաք եղանակին են լոյս ընկնում. մլակները տաք եղանակին են լոյս ընկնում: Աղուէսը խորամանկ է. աղուէսը ճարպիկ է: Արջը թանձրամիտ է. արջը դանդաղկոտ է: Սկիւռը մազլցում է ծառերի վրայ. սկիւռը ցատքոտում է ծառերի վրայ: Ծունը մսակեր կենդանի է. կատուն մսակեր կենդանի է: Ծիծեռնակը տարագնաց թռչուն է. սոխակը տարագնաց թռչուն է: Ձին ընտանի կենդանի է. ձին խտակեր կենդանի է: Կովը ընտանի կենդանի է. կովը կաթնասուն կենդանի է. կովը չորքոտանի կենդանի է:

87. Հետեալ նախադասութիւնները պարզի վերածեցէք:— Բուն և չղջիկը գիշերային կենդանիներ են: Կովը և ձին ընտանի կենդանիներ են: Ձին և շունը մարդու հաւատարիմ ընկերներն են: Այծերն ու ոչխարները մեղ կաթ և միս են տալիս: Խնձորը և տանձը ախորժանամ պտուղներ են: Գազարը, սոխը, սխտորը և բոգիկը բանջարանոցի բոյսեր են: Բազերը թռչում են, լողում են և ման են գալիս: Գայլերն զգոյշ են և երկչոտ: Եղջիրուն

վաղում է արագ, խրամատներից ցատքում է համարձակ և գետերից լողալով անցնում է:

88. Հետեալ զոյգ նախադասութիւններից միաւորեալ նախադասութիւններ կազմեցէք, կապելով նոցա ըայց, այլ բառերով:—Կետը կաթնասուն կենդանի է. կետը չորքոտանի չէ: Երկիրն է շարժում. արեգակը չի շարժում: Կշտանալու համար չի կծում օձը. չարութեան համար է կծում օձը: Լուսինը լուսաւորում է. լուսինը չի տաքացնում: Յորենը գեղեցիկ չէ. ցորենն օգտակար է: Մանուկը ընդունակ է. մանուկը ծոյլ է: Աստուած երկար է սպասում. Աստուած խիստ է պատժում: Եղէգը քամու ճնշումից կուսնում է. էղէգը քամու ճնշումից չի կոտրում: Տանձը համեղ է. տանձը թանգ չէ:

Բ Ե Ղ Ը Գ Բ Ե Ը Լ Ն Ե Թ Ը Գ Ը Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ա. Ներսէսը, որ մեր նշանաւոր կաթողիկոսներից մինն էր, շատ ազգօգուտ գործեր է կատարել:

բ. Կան այնպիսի մարդիկ, որոնք իրանց պարտականութիւնը սրբութեամբ չեն կատարում:

գ. Ես կատարում եմ, ինչ որ ինձ յանձնում են:

դ. 1. Ո՛ւր որ գէշն է, այնտեղ արիւծներ են ժողովում:

2. Բոյսերը զուարթանում են, երբոր ածրեւ է զալիս:

3. Մանուկներն աշխատեցին, որքան կարողացան:

4. Գու կըպատժուես, ինչպէս պատժում են ծոյլերը:

5. Ես աշխատում եմ, որպէսզի լաւ մարդ դառնամ:

Վերոգրեալ նախադասութիւններից իւրաքանչիւրը երկու մասից է բաղկացած, որոնցից ամեն մի մասն առանձին նախադասութիւն է և ունի իւր գլխաւոր և երկրորդական անդամները: Այդ երկու նախադասութիւններից մինն անկախ է, ինքն իրան պարզ և որոշ հասկացում է, իսկ միւսը կախումն ունի առաջինից և առանց նորան պարզ չի հասկացում: Նօտրագիր նախադասութիւնները, ընդհակառակն, գրուել են միւս նախադասութիւնների միտքը պարզաբանելու համար: Եթէ անկախ նախադասութիւններին հարց տանք, մենք կըտեսնենք, որ նօտրագիր նախադասութիւնները ճիշտ այն հարցերին կըպատասխանեն, որոնց պատասխանում են պարզ նախադասութեան երկրորդական անդամները:

§ 65. Ենթական, ստորոգեալը, որպէս և նախադասութեան միւս անդամները, կարող են պարզաբանուել ո՛չ միայն առանձին բառերով, այլև ամբողջ նախադասութիւններով:

Այն նախադասութիւնը՝ որ պարզաբանում է միւս նախադասութեան որևիցէ մի անդամը, կոչւում է երկրորդական նախադասութիւն:

Այն նախադասութիւնը՝ որից երկրորդականը կախումն ունի, կոչւում է գլխաւոր:

Գլխաւոր և երկրորդական նախադասութիւնը միասին կոչւում են ըստաղբնալ նախադասութիւն:

§ 66. Երկրորդական նախադասութիւնը գլխաւորից բաժանուում է ստորակէտով, իսկ եթէ նա ընկած է գլխաւոր նախադասութեան անդամների մէջը, ապա բաժանուում է երկու ստորակէտով:

§ 67. Երկրորդական նախադասութիւնները, իրանց կատարած պաշտօնին նայելով, լինում են՝ բացայայտիչ, որոշող, լրացնող և պարագայական:

89. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէք երկրորդականները, հարց տուէք և լուծեցէք, որոշելով թէ գլխաւոր նախադասութեան ո՞ր անդամի համար են դրուած:—Երուսողէմի դռները փակուում են, երբ արեգակը մայր է մտնում: Երբոր հասկերի մէջ ցորենի հատիկներն ամրանում և մգանում են, այն ժամանակ հնձում են: Երբոր վառարանի կրակը մոխրով ծածկուում է, ծածկուում են ծխնելոյզը: Մեր նախահայրերն ապրում էին այնտեղ, որտեղից բղխում են Տիգրիս և Եփրատ գետերը: Այնտեղ է մարդկութեան օրօրոցը, ուր բարձրանում է ձերունի Արարատը: Սոխակը երգում էր այնպէս, որ աշխարհ ամենայն նորան էր լըսում: Առիւծն այնպէս մոնչաց, որ բոլոր գազանները սարսեցան:

90. Որտեղն ունի մի հրացան, որ շատ ձիւտ է զարկում նպատակին: Ծառի վրայ թառած էր մի թռչուն, որի փետուրները գեղեցկապէս փայլում էին: Փոքրիկ ձուտերը, որոնք դեռ ևս չգիտէին իրանց թևերի ոյժը, զարհուրական ձայներ էին բար-

ձրացնում: Աշխատասէր մեղուն, որ ծաղիկներից իրան համար մեղր էր հաւաքում, ծանրաբեռնուած թռաւ դէպի փեթակը:

§ 68. Երբեմն խօսող անձը՝ իւր ասածներին որպէս հաստատութիւն, բերում է ուրիշների ասած բառերը նոյնութեամբ: Այն նախադասութիւնը՝ որ ուրիշի խօսքերից է կազմուած, կոչւում է յանելալ նախադասութիւն:

§ 69. Յաւելեալ նախադասութիւնից առաջ դրուում է միջակէտ և երկու կողմից չակերտներ: Երբոր միջանի անձանց խօսակցութիւն է պատմուում, այն ժամանակ մէկի ասածից առաջ դնում են չակերտներ, իսկ միւսինի առաջ՝ ենթամնայ և չակերտ (« » — « »), կամ սոսկ ենթամնայ:

91. Կէտերը և հարկաւոր նշանները գրէք:—Յիսուսը, երբ վերջին գիշերը գնում էր աղօթք անելու, ասաց իւր աշակերտներին Արթուն կացէք և աղօթեցէք, որ փորձութեան մէջ չընկնէք:

Գարունն ասաց ես եմ գիւղացուն հաց տուողը:

Ամառը պատասխանեց Ձեա կարող տալ, եթէ ես չկամեամ:

Գիւղացին մտածեց ինքն իրան Ամենայն ինչ Աստուծոյ ձեռքին է:

§ 70. Շատ անգամ գլխաւոր նախադասութեան անդամների մէջ մտնում է մի առանձին նախադասութիւն, որ ամենեկին կապ չունի այդ նախադասութեան հետ և կարող է՝ առանց մտքի պարզութեանը խանգարելու, դուրս ձգուել: Այդպիսի նախադասութիւնը կոչւում է միջանկեալ:

—Դուք, երեւի, շուտով կրվերադառնաք քաղաքից: Մենք, շատ հաւանական է, ամենեկին չենք վերադառնալ:

§ 71. Շատ անգամ բաղադրեալ նախադասութիւնը կարող է կազմուած լինել մի քանի ընդարձակ պարզ նախադասութիւններից՝ համազօր նշանակութեամբ: Համազօր նախադասութիւնները բաժանուում են միմեանցից սիջակէտով, իսկ եթէ շատ համառօտ են՝ ստորակէտով են բաժանուում:

92. Հասել է ծիրան, տանձը մեղրածոր.
 Կարմիր վարդի պէս փայլում է խնձոր.
 Սաթանման դեղին կախուած է ողկոյգ.
 Մանկտին գրաւում է շրթ, նուս և թուզ.
 Սեխով, ձմերկով լիքն է բուրաստան.
 Ոսկեայ հոսանքով ծփում անդաստան.
 Եւ արտօրայքի ծանրացած հասկեր
 Խիտ հիանալի նկարում պատկեր:

§ 72 Երբոր գլխաւոր նախագասութիւնից յետոյ գալիս է միաւորեալ նախագասութիւն, որի կրկնուած անդամները մի տեսակ համրանքի ձև են ընդունում, այն ժամանակ այդ երկու նախագասութիւնների մէջ բուժ (՝) է գրւում: — Գիւղացին քաղաքում շատ իրեղէններ գնեց՝ շաքար, թէյ, շորեղէն, կաւեղէն, պղնձեղէն և ուրիշ տնային պարագայք:

§ 73. Բաղադրեալ և միաւորեալ նախագասութիւնները բարդ նախագասութեան մէջ բաղադրեալ նախագասութիւնը միաւորեալից և միաւորեալը բաղադրեալից բաժանւում է միջակէտով:

93. Հետեալ նախագասութիւնները կարգացէք մինչև վերջակէտը, գլխաւոր մասերն անջատեցէք իրարից և նախագասութեան ամեն մի մասն առանձին առնելով՝ լուծեցէք ներքև գրած օրինակի պէս.

— Կանայք կթի կովերը բերում են, կաթը ժողովում, իւր ու պանիր շինում. տղամարդիկ տաւարը քշում են սարը, պանիրն ու իւղը տանում են շուկայ, ծախում են և իրանց տան պակասութիւնը լրացնում: Միայն այս չէ կանանց գործը. ցերեկը ճախարակ են մանում, շալ, գորգ կամ կապերտ են գործում և իրանց օրն ուրախ, միամիտ անցկացնում: Երբ սարումը հիւր է պատահում, էլ շաբաթով ու ամսով չեն թողնում, որ հեռանայ. աղբիւրների քջքչոցը, ջրերի խշխշոցը, ծառերի սլալոցը, թռչունների ձկկոցը, հովուի սրինգը, գառան, ոչխարի ու տաւարի

բառաչը, կարծես, ձեզ ասում են. «Դրախտ ես ուզում, այստեղ կաց, այսպէս կաց. սիրտդ անմեղ, միտքդ իստակ»:

Մինչև առաջին վերջա կէտը — բարդ նախագասութիւն է երկու մասից բաղկացած, երկուսն էլ միաւորեալ. առաջին մասը բաղկացած է հետեալ նախագասութիւններից, «Կանայք կթի կովերը բերում են, կանայք կաթն են ժողովում, կանայք իւր են շինում, կանայք պանիր են շինում»: Երկրորդ մասը բաղկացած է հետեալ նախագասութիւններից. «Տղամարդիկ տաւարը սարն են քշում, տղամարդիկ պանիրը տանում են շուկայ, տղամարդիկ իւղը տանում են շուկայ, տղամարդիկ պանիրն ու իւղը ծախում են, տղամարդիկ իրանց տան պակասութիւնը լրացնում են»:

Եյսպէս բաժանեցէք բոլոր նախագասութիւնները և սպա իւրաքանչիւրն առանձին լուծեցէք. (կանայք ենթակայ, բերում են ստորոգևալ, կովերը լրացնող, կթի որոշող բառ): Եւ առաջին ձևով լուծելուց յետոյ նորից կարգացէք բնագիւղը և բարդ նախագասութեան առաջին և երկրորդ կէտերը միանգամից լուծեցէք հարցերով և առանց հարցերի. (կանայք ենթակայ, բերում են, ժողովում, շինում ստորոգևալ, կովերը, կաթը, իւր ու պանիր լրացնող բառեր, կթի որոշող բառ):

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՎԵՐՋԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

I. ՄԱՍՈՒՆ-Զ-ԲԱՆԻ

Ա. ԳՈՅԱԿԱՆ ԸՆՈՒՆ

§ 74. Ամենայն առարկայ գոյութիւն ունի և անուն (§ 3): Առարկաների անունները կոչուում են գոյական անուն:

§ 75. Գոյական անունը նախադասութեան մէջ կատարում է ենթակայի, բացայայտիչի, լրացնողի և պատկանելութիւն ցոյց տուող—որոշողի (յատկացուցչի) պաշտօն. նա կատարում է և ստորոգեալի պաշտօն օժանդակ բառերի օգնութեամբ (եմ, լինիմ). երբեմն կարող է և պարագայական բառերի պաշտօն կատարել:

94. Հետեալ գոյական անունները ենթակայ ընդունելով, նոցա մօտ աւելացրէք գոյական ստորոգեալներ՝ է բառի օգնութեամբ:—Ոսկին, շուշանը, մանուշակը, ուռնին, Երևանը, Երասխը, էջմիածինը, հրացանը, խաղողը, ճնճղուկը, կովը, գայլը, արծիւը, առիւծը, ցորենը, գարին, տունը, ջուրը, հացը:»

95. Այնպիսի նախադասութիւններ կազմեցէք, որոնց մէջ հետեալ գոյականները ստորոգեալ լինին:—Պտուղ է. թուփ է. ծաղիկ է. բանջար է. վայրենի գազան է. ընտանի թռչուն է. չորքոտանի կենդանի է. խաղալիք է. գասական առարկայ է. սունկ է. թունաւոր միջատ է. օգտակար միջատ է. երկրագործական գործիք է. ձիու կերակուր է. մարդու ընկեր է:

96. Հետեալ նախադասութիւններին գոյական որոշողներ աւելացրէք:—... պատերը բարձր են (ինչի՞ պատերը):—... գրմբէթը փայլում է:—... ճիւղերը կտորատուում են:—... լանջը կահաչի է:—... թերթիկները թառամել են:—... դիրքը կորաւ (համ գիրքը):—... ոտը կտորուեցաւ:—... աչքը ցաւում է:—... թևերը թուլացան:—... շունչը կտրուեցաւ:—... տունը գեղեցիկ է:—... այգին մեծ է:

97. Հետեալ նախադասութիւններին աւելացրէք գոյական բացայայտիչներ:—... վարժապետը եկաւ (որ վարժապետը):—... ընկերս գնաց:—... եղբայրդ աշխատում է:—... կարապետը աշխատասէր է:—... թագաւորը պատերազմասէր էր:—... Հայկը յաղթանդամ էր:—... Արամը հզօր էր և հայրենասէր:—... գետերը բլխում են Հայաստանից:—... սարերը կանգնած են դէմ առ դէմ:—... քաղաքը շինուած է ծովի եզերքին:

98. Հետեալ նախադասութիւններին աւելացրէք գոյական լրացնողներ:—Գիւղացին հերկում է (ինչը, ինչով):—Գիւղացին կազմեց արօրը (ինչի՞ց):—Նա շատ փող տուեց (ինչի՞ն):—Ուսուցիչը պարզեցատրեց (համ, ինչով):—Հարուստներն օգնում են (համ):—Օղբ և ջուրը հարկաւոր են (համ, ինչի՞ն):—Ջուրը մենք ստանում ենք (ինչի՞ց):

99. Գտէք գոյական պարագայականները:—Առաւօտը մենք գնում ենք ուսումնարան: Երեկոները ուշադրութեամբ սովորում ենք մեր դասերը: Անցեալ տարի մենք ամարանոց գնացինք: Այս տարի մենք մնում ենք քաղաքում: Եկեղեցում մարդիկ աղօթում են: Ցերեկը շոք է լինում, գիշերը հով:—Ես նորան սրտանց սիրում եմ:—Նա երեսանց բարեկամ է քեզ:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՍՆ ՍԵՌԸ

Հայկը գնաց ուսումնարան, իսկ Հայկ-անուշը տանը մնաց: Աշակերտը պատրաստում էր դասը, իսկ աշակերտ-ուհին կար էր անում:

Հայկ և աշակերտ բառերը տղամարդու անուն են, Հայկանուշ և աշակերտուհի կին մարդու անուն են:

§ 76. Այն գոյական անունները՝ որոնք այր-մարդկանց են յատուկ, կոչուում են արական սեռի գոյականներ. նոքա՝ որոնք կին-մարդկանց են յատուկ, կոչուում են իգական սեռի գոյականներ:

Մարդկանց անուններից միքանիսը արականից իգական գարձնելու համար, վերջից առնում են անուշ, ունի և ղուխտ մասնիկները:

§ 77. Բայց գոյական անունների մեծագոյն մասը չի ընդունում իգական մասնիկներ. այդպիսիները սեռը որոշում ենք՝ իրանց նշանակութեանը նայելով:—Եղբայր, քոյր, մանուկ:

§ 78. Այն գոյական անունները՝ որոնք կարող են և՛ արական սեռի լինել, և՛ իգական, կոչուում են հասարակ սեռի գոյականներ:—Մանուկ հասարակ սեռի գոյական անուն է:—Հայոց լեզուն, ուրիշ լեզուների պէս, սեռական վերջաւորութիւններ չունի:

ՅԱՏՈՒԿ ԵՒ ՀԱՍՍՐԱԿ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

ա. Քաղաք, գետ, գիւղ. մարդ, զօրապետ, թագաւոր:

բ. Երեան, Երասխ, Մասիս, Երնջակ, Մինաս, Վարդան:

Առաջին տողի գոյական անունները առհասարակ շատ առարկաների են պատկանում:

Երկրորդ տողի գոյական անունները, ընդհակառակն, միայն մի-մի հատ առարկայի յատուկ են:

§ 79. Գոյական անունները երկու կարգ են բաժանուում՝ հասարակ գոյական անուն, որ բազմութիւն նոյնասեռ առարկաների կարող է պատկանել, և յատուկ, որ մի-միայն մի հատիկ առարկայի պիտի պատկանի:

§ 80. Յատուկ անունները միշտ գլխատառով են գրուում: Գլխատառով են գրուում նաև ազգանունն ու հայրանունը, որոնք նմանապէս յատուկ են:

100. Գրեցէք ձեր յատուկ անունը, հայրանունը և ազգանունը. գրեցէք ձեր հօր, մօր, վարժապետի անունը, հայրանունը և ազգանունը. գրեցէք, թէ ինչ թագաւորութեան մէջ էք ապրում, որ քաղաքում, որ գիւղում, որ գետի, ծովի, սարի մօտ:—Գրեցէք միքանի նախադասութիւններ, որոնց ենթական յատուկ անուն լինի, իսկ ստորոգեալը միևնոյն առարկայի հասարակ անունը:—Կարապետը դարբին է:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԹԻԻԸ:—ՀԱԻԱՔԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ա. Գիրք հաց, ծառ, քար, փայտ, կացին, բաժակ:

բ. Գրքեր, հացեր, ծառեր, քարեր, կացիներ, բաժակներ:

§ 81. Գոյական անունը երկու թիւ ունի՝ եզակի և յոգնակի (§ 6): Յոգնակի թիւը կազմուում է եզակիից բառի վերջից աւելացնելով նր կամ ներ մասնիկը, երբեմն էլ ք տառը:

Միավանկ բառերը նր մասնիկն են ընդունում յոգնակի թւում. բազմավանկ բառերն ընդունում են ներ մասնիկը: Եթէ բառը մի և կէս վանկ ունի՝ նա ևս ներ մասնիկն է առնում.—Ճրագներ, կրակներ:

Միավանկ բառերից կազմուած բազմավանկ բառերը ներ մասնիկի փոխանակ նր մասնիկն են առնում՝—տանուտէր—տանուտէրեր, նախահայր—նախահայրեր:

Յատուկ գոյական անունները յոգնակի թիւ չունին (ինչի՞):

101. Հետեւեալ գոյական անունները յոգնակի դարձրէք:—Քար, պատ, մեխ, միս, շուն, սեղան, գերան, բերան, մառան, դարան, գաւազան, մատանի գինի, հոգի, որդի, աղանի, եկե-

դեցի, տղայ, քահանայ, կաթսայ, գաթայ, ճամբայ:

Ոտ, ձեռ, կաթ, եղ, զառ, նուռ, դուռ, փուռ, թոռ (ոտն, ձեռն...*):

Ոսկր, աստղ, կրակ, ճրագ, գլուխ, բլուր, սրահ, մսուր, մեղր, մրուր:

Հօրաքոյր, մօրաքոյր, տանուէր, նախահայր, նախամայր:

Ոչխար, ոչխարներ—հօտ. զինուոր, զինուորներ—գօրք:

§ 82. Երբ շատ միատեսակ հասարակ գոյական անուններ՝ միասին ժողովուած, փոխում են իրանց հասարակ անունը և եզակի թուով մի նոր անուն են ստանում, այդ նոր ստացած անունը կոչւում է հաւաքական անուն: —Հօտ, գօրք:

102. Հետեալ յոգնակի հասարակ գոյական անուններից եզակի հաւաքական գոյական անուններ կազմեցէք:—Սոտեր, ծառեր, մարդիկ, թռչուններ, ձիեր, անասուններ, խոզեր, զինուորներ...

103. Հետեալ հաւաքական գոյականները հասարակ գոյականների դարձրէք.—Հօտ, ջուկ, անդեայ, երամակ, հորան, վոմակ, պար, երամ, դէզ, շեղջ:

Ը. ԸԹԸԿԸՆ ԸՆՈՒՆ

Պարտիզում կան զեղեցիկ ծաղիկներ:

Երկնային մարմինները զարդարում են երկնակամարը:

§ 83. Նշանակեալ բառերը ցոյց են տալիս առարկայի որպիսութիւնը: Առարկայի որպիսութիւնն էլ իւր որոշ անունն ունի (§ 8): Որպիսութիւն արտայայտող անուններին ասում են ածական անուն:

§ 84. Ածական անուան պաշտօնն է՝ դրուիլ գոյա-

* Այս տեսակ միավանկների ն տառը իրանց արմատական տառն է, որ եզակի թուով չի գործածուում:

կան անուան մօտ և ուրուշել նորան ուրիշ գոյական անուններինց. բայց ածականը՝ եթէ մենակ մնայ, կարող է կատարել նաև ենթակայի, լրացնողի և ստորոգեալի պաշտօն:

104. Հետեալ նախադասութիւնները վերլուծեցէք և գտէք որպիսութիւն ցոյց տուող—որոշող—ածական անունները:—Մենք արժանացանք ուրախ մայիսին:—Կապոյտ երկնքում փայլուն աստղերը պարզ գիշերին դիւթական գեղեցկութիւն են տալիս:—Գարնանային անձրևները կեանք են տալիս դաշտային բոյսերին և ցանքերին:—Հիւսիսային եղջերուները տեղացի աղքատ բնիկներին անփոխարինելի ծառայութիւններ են մատուցանում:

105. Հետեալ գոյական և ածական անուններից այնպիսի նախադասութիւններ շինեցէք, որ գոյականը ենթակայ լինի և նախադաս, իսկ ածականը՝ օժանդակ բառի հետ, ստորոգեալ:—Սուր դանակ (դանակը սուր է). ծանր մուրճ. թեթև կացին. պողպատէ դուր. փոքրիկ եկեղեցի. մեծ աշտարակ. բարձր գմբէթ. լայն փողոց. վատ ճանապարհ. սառը ջուր. թափանցիկ ապակի. սակ մատանի. փայտէ տուն. պարսկական կապերտ. արաբական նժոյգ:

106. Հետեալ ածական անունների մօտ դրէք իրանց համապատասխան գոյական անունները:—Կարմիր, կապոյտ, դեղին, կանաչ, գորշ, շագանակագոյն, մանիշագոյն, սպիտակ, սև, մեծ, փոքր, հաստ, բարակ, նուրբ, նօսր, թանձր, երկար, կարճ, լայն, նեղ, ընդարձակ, համառօտ, ծանր, թեթև, առողջ, հիւանդ:—Քաղաքային, ծովային, ջրային, ցամաքային, դաշտային, երկնային, հիւսիսային, հարաւային, երկրաւոր, երկնաւոր, բնական, կենդանական, արևելեան, արևմտեան, պարսկական, հայկական, առաւօտեան, երեկոյեան, տարեկան, ամսական, բուսեղէն, մսեղէն, խմորեղէն, քարեղէն, փայտեղէն...

ՈՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

Անուշ խօսքը տուն կըշինի, դառը խօսքը տուն կըքանդի: Փայտեղէն տունը քարեղէն տան չափ ամուր չի լինում: Անուշ, դառը, ամուր ածականները գոյականի իսկական

որպիսութիւնն են ցոյց տալիս. դոքա առարկայի անբաժան
յատկութիւններն են. փայտեղէն և քարեղէն ածականները թէև
նոյնպէս ցոյց են տալիս գոյականի որպիսութիւնը, բայց այդ որ-
պիսութիւնները առարկայի բնութիւնից չեն բխում, այլ ցոյց են
տալիս նորա ուրիշ առարկաների հետ ունեցած յարաբերութիւնը:

§ 85. Ածական անունը երկու տեսակ է՝ որակական
(որպիսութիւնը) և յարաբերական (յատկութիւնը ցոյց
տուող):

Որակական ածականը ցոյց է տալիս գոյական անուն
բնական որպիսութիւնը: Որակական ածականի ցոյց տուած
որպիսութիւնը կարող է աւելանալ և պակասել՝ մի ա-
ռարկայի վերաբերութեամբ շատ լինել, իսկ միւսի վերա-
բերութեամբ սակաւ:

Յարաբերական ածականը ցոյց է տալիս առարկայի
ստացական յատկութիւնը:—Յարաբերական ածականի ցոյց
տուած յատկութիւնը չի կարող աւելանալ կամ պակասել՝
—չի կարող մի առարկայի մէջ շատ լինել, իսկ միւսի
մէջ սակաւ:

§ 86. Որակական ածական անուններն ունին երեք
համեմատութեան աստիճաններ՝ դրական, բաղդատական
և գերադրական.—Քաղցր, աւելի քաղցր, ամենաքաղցր:

§ 87. Դրական աստիճանը պարզապէս գոյականի
ինչպիսի լինելն է ցոյց տալիս.—Մեծ, փոքր, թեթև,
ծանր, ցածր, բարձր:

Բաղդատական աստիճանը, մի առարկայ միւսի հետ
համեմատելով, ցոյց է տալիս բաղդատած առարկայի աւե-
լի կամ պակաս որպիսութիւնը:—Աւելի մեծ, աւելի փոքր,
աւելի թեթև, կամ՝ մեծագոյն, փոքրագոյն, թեթևագոյն:

Գերադրական աստիճանը որպիսութեան գերազանց
գրութիւնն է ցոյց տալիս:—Ամենամեծ, ամենածանր, կամ

ամենից մեծ, ամենից ծանր, երբեմն էլ շատ, անչափ,
սաստիկ բառերի օգնութեամբ՝ շատ գորաւոր, անչափ
մեծ, սաստիկ գժուարին:

Գերադրական է և ըստծրեալ ածականը, որ միայն
Աստծուն է սեպհական:

§ 88. Յարաբերական ածականները համեմատութեան
աստիճաններ չունին, նորա ծագում են ուրիշ բառե-
րից և ցոյց են տալիս գլխաւորապէս նիւթի, տեղի,
ցեղի և ժամանակի յարաբերութիւնը:—Մսեղէն, երկնային,
հայկեան, սուսուտեան (միս, երկին, Հայկ, առաւօտ):

107. Հետևեալ նախադասութիւնների մէջ որոշեցէք որա-
կական և յարաբերական ածականները:—Գարնանային անուշ
եղանակն անցաւ. եկան ամառային տօթ օրերը:—Աշնանային
յորդ անձրևները դադարեցան:—Երեկոյեան մեղմ գեփիւռը զս-
վութիւն էր տարածում:—Առաւօտեան թարմ օդը լիքն է անուշ-
շահոտութեամբ:—Անձրևային օրերը զիւղացիք ցաքսնում են
փափուկ ցելերը:—Փոթորկալի ծովը կատաղի ալիքներ ունէր:—
Ծովային փոթորիկը բանի գնաց, սաստկացաւ:—Ծաղկաւէտ դաշ-
տերում արածում են ընտանի կենդանիները:—Դաշտային ծաղիկ-
ներից զիւղացի համեստ օրիորդները իրանց համար գեղեցիկ
փնջեր կապեցին:—Բարի մարդիկ արժանաւոր գործեր են կատա-
րում:—Ընտանի կենդանիները լցուցանում են մարդուս առօրեայ
կարիքները:

Գ Թ Ո Ր Ը Կ Ը Ն Ը Ն Ո Ւ Ն

Տարին ունի տասներկու ամիս: Տարուայ ստաջին ամիսը
յունվարն է:

Տասներկու բառը որոշում է առարկան և ցոյց է տալիս
նորա թիւը (քանի):

Առաջին բառը ցոյց է տալիս առարկայի կարգը (նր-երորդ)
և նոյնպէս որոշող բառ է:

Տասներկու և առաջին բառերը թուերի անուններ են:

§ 89. Այն բառերը, որոնք ցոյց են տալիս գոյական անուան թիւը և դասաւորութիւնը, կոչուում են թուական անուններ:

§ 90. Թուական անունները երկու տեսակ են լինում՝ բացարձակ, որ առարկայի քանի լինելն է ցոյց տալիս՝ մէկ, երկու, երեք, չորս, հինգ կայն. ղասաւորական, որ առարկայի սր-երորդը լինելն է ցոյց տալիս՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ կայն:

§ 91. Դասաւորական թուականները ծագում են բացարձակներից՝ նրորդ մասնիկն առնելով իրանց վրայ՝ հինգերորդ, քսան-երորդ, հարիւր տասնհինգերորդ, հազարերորդ:

Մէկ, երկու, երեք, չորս թուականների դասաւորականն է՝ առաջին (առաջներորդ), երկ-րորդ, եր-րորդ, չոր-րորդ:

§ 92. Բացարձակ թուական անունները, կրկնութեամբ գործածուած, ցոյց են տալիս, թէ գոյական անունը քանի անգամ է վեր առած՝ մէկ-մէկ, երկու-երկու, երեք-երեք, չորս-չորս: Մնացած բացարձակ թուականները առնում են ական մասնիկը՝ հնգական, վեցական, եօթնական, քսանական, հազարական:—Սոքա ըաշխական թուականներ են:

108. Կարգով գրեցէք բոլոր բացարձակ թուական անունները և նորա հանդէպ դասաւորականներն ու բաշխականները:

§ 93. Դասաւորական թուականներին եթէ աւելացնում ենք ական մասնիկը, ստանում ենք մասնական թուականներ, որոնք գոյական անուան մասները կամ կոտորակներն են ցոյց տալիս՝ ի՛նչ, քառորդ, երրորդական, հինգերորդական, հարիւրերորդական...

§ 94. Բացարձակ թուականներին աւելացնելով նոց մասնիկը՝ ստանում ենք արժէք և չափ ցոյց տուող թուա-

կան անուններ՝ մէկնոց կամ մէկանոց, երկուանոց, երեքնոց, չորսնոց, հինգանոց, վեցանոց—վեցնոց...

§ 95. Բացարձակ թուական անունները կարող են ստանալ նաև ատր և երկ մասնիկները:—Միատր, տասնատր, հարիւրատր, հազարատր. երկրքեան, երեքեան...*):

Փ. Փ Ե Ր Ը Ն Ո Ւ Ն

Յովհաննէսը վերցրեց զեղեցիկ գիրքը:

Նա վերցրեց այն գիրքը:

Նա բառը գրուած է Յովհաննէս յատուկ անուան տեղը. այն գրուած է զեղեցիկ որակական անգամի տեղը:

§ 96. Այն բառերը՝ որոնք գրուում են գոյական և անական անունների տեղը և կատարում են նոցա պաշտօնը, կոչուում են ղերանուն (ղեր-անուն):

§ 97. Գոյական անունները պաշտօնը կատարող բառերը կոչուում են գոյական ղերանուններ, իսկ անական անունների պաշտօն կատարողները՝ անական ղերանուններ:

109. Հետեւել նախադասութիւնների մէջ գտէք գոյական և անական ղերանունները:—Կովը, ձին և շունը վիճում էին միմեանց հետ, թէ տանուտէրը նորանցից որին աւելի է սիրում: Ի հարկէ նա ինձ աւելի է սիրում, ասաց ձին. ես նորա արօրը և ցաքանը քաշում եմ, դաշտից նորա համար փայտ են բերում, և նա ինքը հեծնում է ինձ ու քաղաք է գնում. առանց ինձ նա միանգամայն կորած կըլինէր:

Խնձորենին ասաց կաղնուն. «Իմ պտուղները թագաւորի սեղանն են զարգարում, իսկ դու միայն խոզերի կերակուր ես»:— Ամենքն իրանց գլուխն էին գովում:

*) երկրքեան, երեքեան, չորեքեան բառերը կրկնաւոր թուականի միտք ունին—երկուան էլ, երեքն էլ, և աւելի անորոշ ղերանուն պիտի համարուին, քան թուական անուն:

§ 98. Գոյական գերանունները նախադասութեան մէջ կատարում են ենթակայի և լրացնողի պաշտօնը. — Ես յարգում եմ նորան:

Ածական գերանունները կատարում են որոշողի պաշտօնը: Այս աշակերտը վերցրեց նորա գիրքը:

110. Վերևի վարժութեան (109) նախադասութիւնները վերլուծեցէք և ցոյց տուէք, թէ գոյական գերանուններն ինչ պաշտօն են կատարել:

111. Հետևալ օրինակները վերլուծեցէք արամարանօրէն՝ նախադասութեան անդամներով:—Այն տունը շինուած է այս վարպետի ձեռքով:—Սա լաւ աշակերտ է. ես յարգում եմ այս աշակերտին:—Երէկ մենք, բոլոր աշակերտներս, զբօսներու գնացինք:—Մարդս ինքը պէտք է հոգայ իւր համար:—Նորա իրանց գործերը կարգադրեցին:—Սա, դա և նա գնացին այգի:—Այս, այդ և այն սղանները գնացին այգի:—Ո՞վ եկաւ:—Ո՞ր մարդն եկաւ:—Այնպիսի բան պիտի անէք, որ ինքներդ չկարմրէք ձեր արածի համար:—Քո մատիտն էլ գեղեցիկ է, բայց իմն աւելի գեղեցիկ է:—Աստուած, որ ամենիս ստեղծողն է, ինամուտ է աշխարհս:—Դու, որ ընդունակութիւն ունիս, պէտք է աւելի աշխատես:—Ամենայն ոք մտաւ իւր տուն:

ա. Ես գնում եմ ուսումնարան, դու էլ եկ այնտեղ և թող ինքը միայն տանը մնայ:

բ. Սա, դա և նա գիտէին իրանց դասերը, իսկ այս, այդ, այն մանուկները չգիտէին:

գ. Թող նա վերցնի իմ, քո և իւր գրքերը:

դ. Ո՞վ է նա և ի՞նչ է կամենում: Ո՞ր սղայի մասին է ձեր խօսքը:

ե. Այն աշակերտը, որ դասատանն անուշադիր է, յառաջագէտ չի կարող լինել:

զ. Ոչ ոք չգիտէ, թէ վաղը ի՞նչ պիտի պատահի ամենքիս:

§ 99. Դերանունները՝ իրանց մասնաւոր նշանակութեան նայելով, վեց տեսակ են լինում.

ա. Էական կամ անձնական գերանուններ, որոնք գրւում են խօսող անձերի տեղը՝ ես, դու, ինքն (նա), մենք, դուք, իրանք (նրանք):

բ. Յուցական գերանուններ, որոնց մատնացոյց է անում խօսողը, որպէս իւր խօսակցութեան նիւթ եղողներին՝ սա, դա, նա. սորա, դորա, նորա: Այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն:

գ. Ստացական դերանուններ, որոնք ցոյց են տալիս, թէ առարկան ո՞ւմ է պատկանում, ո՞ւմ ստացուածքն է՝ իմ, քո, իւր, մեր, ձեր, իրանք:

դ. Հարցական գերանուններ՝ ո՞վ, ի՞նչ, ո՞ր:

ե. Յարաբերական գերանուն, որ գլխաւոր նախադասութեան մօտ բերում է մի երկրորդական որոշող կամ բացայայտիչ նախադասութիւն՝ որ:

զ. Անորոշ գերանուններ, որոնք ընդհանուր ձևով գրւում են գոյական և ածական անունների տեղը՝ ոմն, ոք, ոչ ոք, ոչինչ, ամենքը, միաւր...*):

112. Հետևալ նախադասութիւններից՝ վերոյիշեալ բաժանման համաձայն, արտագրեցէք նշանակած գերանունները.

Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վրայ: Ի՞նչ ես խրինջում, իմ ձի ետանդուն: Ո՞րն է Հայաստան աշխարհը: Ո՞րպիսի անձն էր Տիգրան Երուանդեանը: Ինձ ի՞նչ փոյթ, թէ դուք նեղութիւն ունիք: Ես գիտեմ, որ մենք ամառը ամառանոց ենք գնալու: Աստի դու ինձ, ստող վարդի: Դուք էք երկրի աղը, ասաց Յիսուս իւր աշակերտներին: Ինքն է ստեղծողը, ինքն էլ կը խնամէ: Իրանք եղան իրանք թշուառութեան պատճառը: Ո՞վ է սա, որ քամին էլ, ծովն էլ հնազանդում են սորան: Ես ինքն է թագաւոր փառաց: Դա է Աստուծոյ գառը, որ աշխարհիս մեղքը պիտի բռնայ: Այս այն Յովհաննէսն է, որի գլուխը կտրել տուեց Հերովդէսը: Այսքան մարդիկ այն եկեղեցում չեն տեղաւորուիլ: Ես այդպիսի փառաւոր հանդէս չեմ տեսած: Ճշմարիտ որթը ես

*) Տես գերանունների հարվումը:

եմ, իսկ իմ հայրը մշակ է: Տէր, քո ողորմութեամբդ պահպանիր մեզ: Մեր հայր, որ երկնքումն ես, սուրբ լինի քո անունը: Այն գետը, որ բղխում է Գեղամայ լճից, կոչւում է Հրազդան: Ոչ ոք չի կամենում իւր պարտքը կատարել: Այս ձեռնարկութիւնից մենք ոչինչ օգուտ չստացանք: Դուքսը ոքմին կայ կանգնած: Ոմն այս է ասում, ոմն այն: Ոմանք կարծում են, թէ արեգակը պտըտում է երկրի շուրջը: Իւրաքանչիւր մարդ հանգստանում էր իւր ծառի հովանիի տակ: Մէկ մարդ միւսին խրատում էր, որ նա իւր յոյսը ուրիշների օգնութեան վրայ չդնէ:—Ինչ կը ցանես, այն կը հնձես, ինչ որ աշխատես այն կ'ուտես:

Ե. Բ Ա Յ

- ա. Աշակերտը գրում է, կարդում է, նկարում է:
- բ. Աշակերտը պատժում է, սիրում է, պարգևատրում է:
- գ. Աշակերտը յոգնում է, հանգստանում է, քնում է:

Բոլոր ստորագեալները ցոյց են տալիս աշակերտի գործողութիւնը: Առաջին տողի ստորագեալները ցոյց են տալիս մանկան կատարած գործողութիւնը, երկրորդ տողի ստորագեալները ցոյց են տալիս նորա՝ ուրիշներից կրած գործողութիւնը, իսկ երկրորդ տողի ստորագեալները ցոյց են տալիս նորա դրութիւնը:

§ 100. Այն բառերը՝ որոնք ցոյց են տալիս առարկայի արած կամ կրած գործողութիւնն ու դրութիւնը, կոչւում են ըայ:

§ 101. Բայերը՝ իրանց ցոյց տուած գործողութեանը նայելով, երեք տեսակ են լինում.

ա. Ներգործական, երբ բայի գործողութիւնը գլխաւոր առարկայից անցնում է երկրորդական առարկային, կամ ենթակայից լրացնողին: Աշակերտը կարդում է, գրում է, նկարում է, (ի՞նչը) դասը:

բ. Կրաւորական, երբ բայի գործողութիւնը, ընդհակառակն, երկրորդական առարկայից գալիս է գլխաւորին,

այսինքն ենթական կրում է լրացնողի գործողութիւնը: Աշակերտը պատժում է, սիրում է, պարգևատրում է վարժապետից:

գ. Չէզոք, երբ բայի ցոյց տուած գործողութիւնը մնում է գործող անձի մէջ, այսինքն գլխաւոր առարկան չի ներգործում, բայց և չի կրում ուրիշի գործողութիւնը: Աշակերտը յոգնում է, հանգստանում է, քնում է:

Բայերի տարբեր տեսակները սեռ են կոչւում:

§ 102. Չէզոքական բայերը ձևով նման են ներգործականին, իսկ մտքով տարբեր:

Ներգործական է բայը, երբ իրան մօտ ունի բուն լրացնող: Բուն լրացնողը ի՞նչ և ո՞ւմ հարցմունքների պատասխանն է և կոչւում է ներգործական բայի սեռի խնդիր:

Աշակերտը գրում է ղասը (ի՞նչ է գրում): Աշակերտը յարգում է վարժապետին (ո՞ւմ է յարգում):

§ 103. Չէզոքական բայերը չունին բուն լրացուցիչ կամ սեռի խնդիր:—Աշակերտը յոգնում է, հանգստանում է, քնում է (չի կարելի ասել՝ ի՞նչ է յոգնում կամ ո՞ւմ է յոգնում):

§ 104. Կրաւորական բայը ձևով տարբեր է ներգործականից, բայց նորանից է ծագում: Կրաւորական բայն էլ ունի սեռի խնդրի, միայն այդ խնդիրը իմացւում է ոմանից, ինչից, երբեմն էլ ո՞ւմ ձեռքով:—Դասը գրւում է աշակերտից (ո՞ւմնից): Աշակերտը վարձատրւում է վարժապետից (ո՞ւմնից): Քարը տաշւում է քարտաշների ձեռքով:

Ամենայն ներգործական բայ իւր կրաւորականն ունի. ուրեմն ամենայն ներգործական խօսք կարող է և կրաւորական ձևով արտայայտուել:

§ 105. Չէզոքական բայերից երկուսը՝ եւմ և լինիմ, որոնք միշտ օժանդակում են ստորագեալի կազմութեանը,

կոչուում են էսական կամ օժանդակ բայեր:— Ես մարդ եմ, դու մարդ ես, նա մարդ է. նորանք աշխատասէր կըլինին, մենք աշխատասէր կըլինինք, դուք աշխատասէր կըլինիք:

113. Հետեալ նախագասութիւնները վերլուծեցէք և գտէք բայերի սեռը, նոցա համար գրուած բուն և երկրորդական լրացուցիչները (սեռի և բնութեան խնդիր):

Քարտաշները տաշում են կարծր քարերը: Քարը կտրում են ժայռերից: Չկնորսը ձուկ բռնեց: Չկները հանեցին ուռկանից: Հայրը կանչեց իւր որդուն և նորան գործի ուղարկեց: Վարժապետը գովեց և խրախուսեց յառաջագէտ աշակերտներին: Մայրը ժողովեց իւր զաւակներին և կերակրեց նոցա: Ես սառը ջուր լամեցի: Լոկնորդն աղատեց խեղդուողին: Իու կըհաւանես իմ գիրքը, եթէ տեսնես: Ջաղացում ցորեն են աղում: Լուացարարը սպիտակեղէն էր լուանում: Հացթուխը հաց է թխում: Ես նորան չեմ ճանաչում:

114. Վերևի վարժութեան բոլոր նախագասութիւնները փոփոխեցէք այնպէս, որ ենթական լրացնող դասնայ, լրացնող ենթական, իսկ ներգործական սեռի բայերը փոխուեն կրաւորականի.— Կարծր քարերը տաշում են քարտաշներից: Քարերը կտրում են ժայռերից: Չուկը բռնուեցաւ գետից ձկնորսի ձեռքով կայն:

115. Հետեալ վարժութիւնների մէջ գտէք բայերի սեռը.

Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է: Գողը գողէր գողացաւ, Աստուած վերէն զարմացաւ: Կուշար սովածին մանր կը բրդի: Թունդ քացախը իր ամանը կըճաքացնի: Շունը կըհաջի, քարվանը կըբռչի: Սուտ աստղի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չհաւատաց: Ինձ տես, ընդ լաց, սրտեղ որ ես, հաստատ կաց: Աղքատն ունի հաց ու պանիր, գիշերը քունը չի տանիլ: Մի բաժակ ջուր, սիլ ուզի՝ տուր: Հաց ու պանիր՝ կեր ու բանիր: Հացի կտրածը թուրը չի կտրիլ: Թրի կտրածը կըսաղանայ, լեզուի կծածը չի սաղանալ: Սարը սարին չի դիպիլ, մարդը մարդուն կըդիպչի: Պատուիր ծերին, որ ծերանաս: Երբ ծերանաս, ծերի պատիւը կ'իմանաս:

ԲՍՅԻ ԵՂԱՆԱԿԸ, ԺԱՄԱՆԱԿԸ, ԹԻԻԸ ԵՒ ԴԷՄՔԸ

§ 106. Բոլոր գործողութիւնները միաձև չեն կատարուում. միևնոյն գործողութիւնը տարբեր ձևերով կարող է կատարուել. կարելի է, օրինակ, սլատմել, թէ ինչպէս է մի գործողութիւն սկսուում և վերջանում, կարելի է նաև հրամայել կամ խնդրել, որ չսկսած գործողութիւնն սկսուի և կատարուի, կարելի է վերջապէս կասկած յայտնել գործողութեան կատարման մասին:

Ամենայն գործողութիւն, ամենայն բայ կատարման երեք ձև կամ եղանակ ունի. ա. սահմանական եղանակ՝ երբ գործողութեան սկիզբը և վերջը—սահմանները մեզ որոշ յայտնի են. բ. հրամայական եղանակ, երբ գործողութիւնը չի սկսուած, բայց մենք հրամայում և խնդրում ենք, որ սկսուի կամ կատարուի. գ. ստորադասական եղանակ, երբ գործողութեան կատարման մասին որևիցէ տարակուսանք կամ կասկած ունինք.— կարողում եմ, կարողն, որ կարողամ:

§ 107. Ամենայն գործողութիւն կատարուում է որևէ ժամանակամիջոցում: Ժամանակները երեք են՝ ներկայ, անցեալ և ապանի.— կարողում եմ, կարողացի, կըկարողամ:

§ 108. Անցեալը չորս է. կայ գործողութիւն, որ անցել է, բայց կիսակատար է մնացել, դա կոչուում է անցեալ անկատար—կարգում էի. կայ՝ որ վերջացել է մօտ ժամանակում—կարգացի. սա կոչուում է անցեալ կատարուալ ժամանակ. կայ՝ որ համեմատաբար աւելի կանուխ է կատարուել—կարգացել եմ. սա կոչուում է վաղակատար ժամանակ, և վերջապէս, կայ ևս՝ որ ամենից կանուխն է ցոյց տալիս—կարգացել էի. սա գերակատար ժամանակն է:— Անկատար, կատարեալ, վաղակատար, գերակատար:

§ 109. Ապառնին էլ երկու է՝ ապառնի պարզ՝ կը կարգամ, և ապառնի պայմանական՝ կը կարգայի:

§ 110. Սահմանական եղանակն ունի բոլոր յիշած ժամանակները:

Հրամայական եղանակն ունի միայն մի ժամանակ՝ ներկայ, որովհետև հրամայել կարելի է միայն ներկայում:

Ստորադասական եղանակն ունի երկու ժամանակ՝ ապառնի—որ կարդամ, և անկատար—որ կարդայի:

§ 111. Գործողութիւնը կարող է խօսողը կատարել, կարող է կատարել լսողը, կարող է կատարել և այն անձը, որի մասին մենք խօսում ենք. վերջապէս ամենայն գործողութիւն կարող է մէկ անձն կատարել միայնակ, կարող են և շատերը միասին կատարել: Ուրեմն բայը ունի երեք ղէմք՝ առաջին, երկրորդ և երրորդ, և երկու թիւ՝ եզակի և յոգնակի—ես կարդում եմ, դու կարդում ես, նա կարդում է. մենք կարդում ենք, դուք կարդում էք, նոքա կարդում են:

Չ. Գ Ե Ր Բ Ը Յ

Ես կարդալ գիտեմ:

Կարդացած գիրքս շատ հետաքրքիր է:

Կարդալու գասեր ևս շատ ունիմ:

Կարդացող մարդիկ միշտ յարգանք են վայելում:

Վերոյիշեալ նախադասութիւնների մէջ նշանակեալ բառերը գործողութեան անուններ են. բայց դոցա ցոյց տուած գործողութիւնը չի կատարուած, միայն յիշուած է: Տարբեր են, օրինակ, կարդալ և կարդում եմ բառերը. երկրորդը կատարուող գործողութիւն է—բայ է, ունի եղանակ, ժամանակ, թիւ, ղէմք. իսկ առաջինը բայի սկզբնական ձևն է, բայի անունն է միայն: Այսպէս են և միւս նշանակած բառերը:

§ 112. Այն բառերը՝ որոնք գործողութիւն են ցոյց

տալիս, բայց իրանց ցոյց տուած գործողութիւնները կատարման գրութեան մէջ չեն, կոչոււմ են դերբայ:

§ 113. Դերբայերը երկու պաշտօն են կատարում. էական բայերի օգնութեամբ նոքա դիմաւոր բայի դեր են կատարում—կարդացած եմ, կարդալու եմ, կարդացող եմ: Առանց էական բայերի նոքա կատարում են գոյական և ածական անունների պաշտօն և իսկապէս ըսյ-անուն են:

§ 114. Դերբայերը չորս են՝ ա. անորոշ, որ բայի սկզբնական ձևն է և ունի չորս վերջաւորութիւն՝—ել, իլ, ալ, անալ՝ (գրել, խօսիլ, կարդալ, զարմանալ):

բ. Անցեալ դերբայ, որ կատարուած ու վերջացած գործողութեան անունն է՝ գրած, խօսած, կարդացած, զարմացած:

գ. Ապառնի դերբայ, որ դեռ ևս չսկսած գործողութեան անունն է՝ գրելու, խօսելու, կարդալու, զարմանալու:

դ. Ներկայ դերբայ, որ կատարող գործողութեան անունն է՝ գրող, խօսող, կարդացող, զարմացող:

Ի. Մ Ը Կ Բ Ը Յ

Ի՛նչպէս դժուար է մարդ ճանաչելը:

Հազիւ ազատուեցանք փորձանքից:

Ո՛ւր գնացիք, ինձ այստեղ միայնակ թողիք:

Ե՛րբ էք վերադարձել քաղաքից, երէ՞կ թէ այսօր:

Ուշ է. առայժմ՝ ես քշող գո՛հ կըլինիմ:

Ո՛րչափ մեծ եղաւ զարմանքս, երբ ձեզ տեսայ:

Շատ անգամ մենք մեզ յետս ենք տալիս:

Ինչո՞ւ էք տխուր, ո՛ւր է ձեր զուարթութիւնը:

Արդեօք այսօր ներկայ էիք հանդիսին:

Այո՛, ես գնացել էի. արդարեւ շքեղ հանդէս էր:

Նա երբէք տանից դուրս չի գալիս գիշերը:

Քա՛ւ լիցի. ես այդպիսի բան չեմ անիլ:

Տրամաբանօրէն լուծելով վերոյիշեալ նախադասութիւնները, մենք տեսնում ենք, որ նշանակեալ բառերը ցոյց են տալիս գործողութեան այլեայլ պարագաները:

§ 115. Գործողութեան համար դրուած և նորա պարագաները ցոյց տուող բառերին ասում ենք մակբայ (մակբայ):

§ 116. Մակբայերը գլխատրաստէս եօթը տեսակ են.
ա. Հարցական՝ ո՞ւր, ի՞նչպէս, արդե՞ք, ե՞րբ, ինչի՞, ո՞րքան, քանի, քանի անգամ:

բ. Հաստատական՝ այո՛, արդարեւ, իրաւ, իրաւցնէ, իսկ և իսկ, հէնց, յատկապէս, ճիշտ:

գ. Բացասական՝ երբէք, քա՛ւ լիցի, ամենևին, բնա՛ւ, ո՛չ:
դ. Որակական՝ սաստիկ, հազիւ, շուտով, շտապ, բոնի, կամաւ, կամաց, շուտ-շուտ, արագ:

ե. Բանականան՝ շատ, սակաւ, քանիցս, շատ անգամ, հինգ անգամ, կրկին, դարձեալ, էլի:

զ. Տեղական՝ դուրսը, ներսը, մօտը, ուր, վերև, այստեղ, այնտեղ, ներքևը, մէջը...

է. Ժամանակական՝ այժմ, յետոյ, վաղը, միշտ, երբեմն, առայժմ, գիշերը, ցերեկը:

Պատճառ ցոյց տուող պարագայական բառերը գոյական անուններ են, իսկ նպատակ ցոյց տուող պարագայականները՝ գերբայեր:

Ը. Ն Ա Թ Ա Վ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն

Ծիտը կանգնեց ծառի վրայ:

Ծիտը իջաւ ծառի տակը:

Ծիտը թռաւ դէպի ծառը:

Ծիտը կանգնած է ծառի մօտ:

Ծիտը կանգնած է ընկերի հետ:

Ծիտը երգում է ընկերի համար:

Ծիտը չի երգում ինչպէս ծիծեռնակը:

Ամեն մի նախադասութեան մէջ երկու գոյական անուն կայ: Նօտրագիր բառերը՝ որոնք ինքնին ոչինչ նշանակութիւն չունին, գրուել են գոյականներից մէկի մօտ և ցոյց են տալիս երկու գոյականների մէջ եղած յարաբերութիւնը:

§ 117. Այն բառերը՝ որոնք դրուած են գոյական անունների մօտ և ցոյց են տալիս առարկաների փոխադարձ յարաբերութիւնները, կոչւում են նախադրութիւն:

§ 118. Հին-Հայերէնի մէջ նախադրութիւնները շատ էին և դրուած էին գոյականից նախադաս. այս է պատճառը, որ նոքա կոչւում էին նախադրութիւն: Նոր-Հայերէնի մէջ նախադրութիւնները սակաւ են և գլխաւորապէս գոյականից յետադաս են դրուած (և պիտի կոչուէին յետադրութիւն):

§ 119. Միևնոյն բառը կարող է և՛ նախադրութիւն լինել, և՛ մակբայ: Եթէ բառը գոյականի մօտ է դրուած, նա նախադրութիւն է, իսկ եթէ բայի մօտ ու առանց գոյականի, նա մակբայ է:

—Վրան կանգնեց: Տակը գնաց: Մօտովն անցաւ: Հետը մի՛ գնաք: Ի՞նչպէս էք ապրում:

Թ. Յ Ա Ղ Կ Ա Պ

§ 120. Կան բառեր, որոնք այլեայլ նախադասութիւններ կամ միևնոյն նախադասութեան այլեայլ անդամներ կապում են միմեանց հետ: Դոքա կոչւում են շաղկաւ.—իսկ, բայց, որ, և, ու, կամ, այլ, թէ, էլ, մանաւանդ թէ, սակայն և այնպէս, թէև, նաև, այսու ամենայնիւ, ոչ միայն...

Փ. ԶԵՅՆՆԵՐԿՈՒԹԻՒՆ

§ 121. Այն բառերը՝ որոնք մարդու հոգեկան զգացմունքներն ու կիրքն են արտայայտում, կոչուում են ձայնարկութիւն կամ միջարկութիւն.—էյ, սյ, սիւ, սիւ, աւնդ, երանի...

§ 122. Բանի - մասունքները տասն են՝ գոյականն անուն, ածական անուն, թուական անուն, դերանուն, բայ, դերբայ, մակբայ, նախադրութիւն, շաղկապ և ձայնարկութիւն:

II. ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ԲԱՌԻ ԱՐՄԱՏԸ ԵՒ ՎԵՐՉԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Շարժ, շարժ—ուն, շարժ—ող, շարժական, շարժողութիւն, անշարժ:

Մեղ, մեղ—ք, մեղ—աւոր, ան—մեղ, անմեղութիւն, մեղանշել, մեղանշական:

Առաջին տողի բոլոր բառերում կրկնում է շարժ վանկը, երկրորդ տողի բառերում կրկնում է մեղ վանկը:

§ 123. Միանման բառերի մէջ անփոփոխ վանկը՝ որից շինուում են միւս բառերը, կոչուում է արմատ: Արմատից շեռայ գրուած մասը կոչուում է վերջաւորութիւն:

116. Չեք դասի մէջ գտէք բոլոր բառերի արմատը:

ՆԱԽԱՅԱՐ ՄԱՍՆԻԿՆԵՐ

ա. Յոյց, գատել, խոհեմ, բերք, անուն:
բ. Ալպցոյց, բաղդատել, անխոհեմ, չրերք, մնականուն:
Երկրորդ տողի բառերը շինուել են առաջին տողի բառերից՝

սկզբից աննելով մի կամ միքանի տառից բաղկացած աննշան մասնիկներ:

§ 124. Բառի սկզբից կցուած աննշան մասնիկները՝ որոնք նոցա սկզբնական նշանակութիւնը փոխում են, կոչուում են նախալար մասնիկներ:

117. Հետեւեալ բառերի մէջ նախալարը ենթամնայով բաժանեցէք և իմացէք, թէ բառին ինչ նշանակութիւն է տալիս:— Մարդ ես—մարդ չես, կայ—չկայ, ծառի բերքը հաւաքեցէք: Հըրէից մէջ չբերք կանայք յարգանք չէին վայելում: Անանուն, անխոհեմ. անեղն Աստուած. տգեղ, տմարդ, տձե, տհաս, տկար. ահամայ. ածուխ:

118. Արտագրեցէք և նախալարները գծուր բերէք տետրակի լուսանցքը.—Առ—արկայ, առարկել, առանձին, առողջ, առանին, առհասարակ, առաւել, արտագրել, արտագրել, արտասանել, արտուղի, արտասուք, արտահանել, բաղդատել, բաղդատող, բաղդարութիւն, բաղածայն, բացառիկ, բացայայտ, բացօթեայ, բացարձակ:

119. Գերակշիռ, գերբնական. գերանուն, գերասան, գերբայ. ենթակայ, ենթամնայ. հակասել, հակառակ, հակադիր, հակամիտ. համամիտ, համագոյ, համածայն, համախոհ, համազգի, համարուեստ, համակրել. մակառ, մակդիր, մակբայ, մակարդակ. յարարերութիւն, յարացոյց:

120. Ներկայ, ներհակ, ներշնչել, ներմուծել. շաղկապ, շաղկարատ, շարագրել, շարունակել. պարբերութիւն, պարագայ, պարունակ, պարփակել. ստորագրել, ստորաբաժին. վերարբերել, վերաստուգել, վերանորոգել, վերականգնել. տարբեր, տարագիր, տարագնաց, տարօրինակ. տրամագիր, տրամախօս. փոխարբերել, փոխարբերել:

Նախալարները կարգով արտագրեցէք և նոցանից նշանականները աննշաններից զանազանեցէք:

ՎԵՐՉԵՑԵՐ ՄԱՍՆԻԿՆԵՐ

ա. Նաւ, հայր, հանճար, քար, գանձ:
բ. Նաւակ, հայրիկ, հանճարեղ, քարեղէն, գանձանակ:

Երկրորդ տողի բառերը շինուել են առաջին տողի բառերից՝ վերջիցը աննշան մասնիկներ առնելով:

§ 125. Այն աննշան մասնիկները՝ որոնք կցւում են բառերի վերջից և նոցա սկզբնական նշանակութիւնը փոխում են, կոչւում են վերջայար մասնիկներ:

121. Գտէք հետևեալ բառերի վերջայար մասնիկները, դուրս բերէք ձեր տետրակներին լուսանցքը և իմացէք, թէ նոքա բառի սկզբնական նշանակութեանը ինչ փոփոխութիւն են տուել:— Երկնային, դաշտային, ձմեռային, ամառային: Արևելեան, արևմտեան, Հայկեան, Արամեան, Թորգոմեան: Իշխանական, գեղջկական, գաւառական, գիւղական: Թղթեայ, քարեայ, քրիստոնեայ, արևմտեան: Հոգեղէն, լուսեղէն, մտեղէն: Ջրի, աղի, արծանի, մոլի, երկայրի, ջրարբի, պղնձի, արծաթի, երկաթի. կաղնի (ծառ), ծիրանի, սալորի, թթենի, ընկուզենի, նոնենի. խոզենի (միս), առլեծենի, գայլենի. գառնենի (մորթ):

122. Նախընթաց վարժութեան վերջայարները ջնջեցէք և բառերը իրանց սկզբնական ձևին վերածեցէք—ածականը գոյական դարձրէք.— Երկինք, դաշտ, ձմեռ, կայսր:

123. Հետևեալ օրինակների մէջ վերջայարների տակը գիծ քաշեցէք և իմացէք, թէ բառին ինչ նշանակութիւն են տալիս:

— Հանճարեղ (հանճար ունեցող), զօրեղ, հանճարաւոր, թագաւոր, հոգևոր, արևոր, չքաւոր, ձիաւոր, ոտաւոր, սպասաւոր, մտաւոր: Ծակոտ, ալտոտ, աղտեղի, սակրոտ, բորոտ, եղոտ, նախանձոտ, երկչոտ, պարծենկոտ, ամաչկոտ...

124. Բնիկ, գոնհիկ, ուսուցիկ, թափանցիկ, կոկիկ, ընթացիկ, կանխիկ, ապառիկ:

Պարսիկ, հնդիկ, խափշիկ: Հեզիկ, մեզմիկ, հայրիկ, մանկիկ, թռչնիկ, ոտիկ, Աննիկ, Թաղիկ: Փափուկ, հեղուկ, հանելուկ, կապուկ, գալտուկ, կարմրուկ, հեղուկ—հեզիկ, տաքուկ, խորուկ—խորունկ:

Տեղացի, գիւղացի—գեղացի, տնցի, գաշտեցի, քաղաքացի, Կարին—կարնեցի, Գառնի—գառնեցի, կորնթացի, Հայաստանցի:

Մանիքեցի—մանիքական, փարիսեցի—փարիսական, իսրայելացի—իսրայելեան—իսրայելական: Մտացի, խելացի:

125. Ի՞նչ բառերից են շինուել հետևեալ ածական անուն-

ները.—Ներքին, արտաքին, յետին, միջին, վերջին, խորին, մթին, անջրգին, խաւարին:

Հնոտի, սնոտի, օտարոտի, մեռելոտի, ցնցոտի: Ազգու, ահարկու, հատու, հուժկու, վերակացու: Մահացու, պահացու, մացու, հալաւացու:

126. Հետևեալ վերջայարներն ի՞նչ նշանակութիւն են տալիս բառերին.

Տնակ, բնակ, նաւակ, թիակ, որդեակ, հոգեակ մանեակ, աղաւնեակ:

Ընդունել—ընդունակ, խառնակ, բոլորակ, մոլորակ, ճաշակ, դիտակ, վրիպակ, իմաստակ, ժողովակ, արուեստակ (վերջին երեքը նախատական են):

Շուրջ—շրջան, նիշ—նշան, կարկատել—կարկատան, վազան—վազկան, խոտվիան, տափան, կոան, մզան, եղան, ջնջան:—Վարդանանք, Թորոսանք, հօրանք, մօրանք.—Ութօրէք, Ջրօրհնէք, տնօրհնէք,—տնօրհնանք:

Սողուն, թռչուն, սահուն, շարժուն, երբուն, զեղուն: Յարդինք, նախատինք, բաժինք:

127. Ի՞նչ բառերից են շինուած հետևեալ գոյականները.— Գոչիւն, մունչիւն, հնչիւն, թնդիւն, սօսափիւն, շաչիւն, շառաչիւն: Գոչումն, ողբումն, զարմացում, զղում, հիացում:

Ջօրանոց, աղքատանոց, հիւրանոց, փայտանոց, գրուանքանոց, փթնանոց, լղբանոց:

Չմերոց, գպրոց, ծաղկոց:

Սոց, կտրոց, հատոց, կապոց, փաթթոց, ջարդոց, կտրտոց, պահարան, դեղարան, դարան, աղօթարան, գործարան, ննջարան, բնակարան:

Ծառաստան, բուրաստան, այգեստան, անդաստան, կուսաստան (կուսանոց). Հայաստան, Պարսկաստան, Ռուսաստան:

128. Որտորդ, ճամբորդ, յաճախորդ, առաջնորդ, միջնորդ, յաջորդ, նախորդ, պահնորդ, բաժանորդ, ժառանգորդ, փոխնորդ:

Պահապան, պարտիզպան, այգեպան, դոնապան, ջաղացպան, ձիապան:

Գողունի, արքունի, Ամատունի, Արշարունի, Ռշտունի, Բզնունի, ձերունի:

129. Վերջայարները գտէք.— Գանձակ, մրցանակ, եղանակ, կոչ—նակ:

Մատանի, հարսանիք, հովանի:

Լեզուանի, պիտանի, եռտանի—երեքտանի:

Թագուհի, Տիգրանուհի, կոմսուհի, քանանուհի, հայկուհի,

Սրբուհի, որբուհի, բարեպաշտուհի, ազնուհի:

130. Ծնունդ, սնունդ, ժողովուրդ, խառնուրդ:

Իեղնուց, սպիտակուց, նեղուց, էգուց:

Ուրաստ, իմաստ, զգաստ, ուտեստ, պահեստ, գովեստ, հրածեշտ:

Թագուստ, փախուստ, ապրուստ, գալուստ, հագուստ:

Սուրբ—սրբազան:

131. Մակրայակերտ վերջայարներ.— Լալագին, ուժգին, ողբագին, սրտագին, ցաւագին:

Բռնցի, աքացի, մագլցի*)

Ուղղակի, կողմնակի, շեշտակի, յանկարծակի, թեթևակի:

§ 126. Շատ անգամ վերջայար մասնիկը ընկնում է արմատի և վերջաւորութեան մէջ, մանաւանդ բայերում՝ տեղաւոր-ել, շնորհաւորել, դիմաւորել, զգեստաւորել, հարկաւորել, վերջաւորել—վերջաւորուել, ջր-ոտ-ել, մրտաւել, աղտոտել, կեղտոտել, ժանգոտել—ժանգոտուել:

§ 127. Պատահում է երբեմն, որ վերջայար մասնիկը չի փոխում բառի նշանակութիւնը:

132. Արքունի—արքունական, անմեղ—անմեղական, պատրաստ—պատրաստական, թշուառ—թշուառական, տէրունի—տէրունական, հայրենի—հայրենական, արժանի—արժանաւոր, հեռու—հեռաւոր, մօտ—մօտիկ, մօտաւոր: Աոր—խորին, դժուար—զրժուարին: Պիտանի—պիտանացու, ժառանգ—ժառանգորդ, յառաջարան—յառաջարանութիւն, քանակ—քանակութիւն:

§ 128. Կան միքանի վերջայարներ, որոնք ընկնում են բայերի արմատի և վերջաւորութեան մէջը և գործո-

*) Տես մակրայիբի մէջ:

ղութեան մանր կրկնութիւնը կամ անընդհատ տևողութիւնն են ցոյց տալիս:

133. Թռչել, թռչոտել, կտրել, կտրտել, կտրատել, կտորել, կտորտել, կտորատել, պատուել, պատուտել, պատուտորել, խոցել, խոցոտել, կրճել, կրճատել, կտուել, կտուտել, շարչարտել, հանտել, ցանտուել, կծոտել, խածոտել, ճանկուել, ճանկուտել, քաշել, քաշկուտել, խառնել, խառնչտորել, յօշել, յօշտուել:

ՆԱԽԱՏԻՊ ԵՒ ԱԾԱՆՅԱԿԱՆ ԲԱՌԵՐ

§ 129. Այն բառերը, որոնք նախայար և վերջայար մասնիկներ չունին, կոչուում են նախատիպ, իսկ մասնիկներ ունեցողները կոչուում են ւծանցական բառեր:

§ 130. Ածանցական մասնիկները կցուում են բառի սկզբից կամ վերջից. բայց նոքա կարող են ընկնել նաև արմատի ու վերջաւորութեան մէջ (§ 126):

ՊԱՐԶ ԵՒ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

§ 131. Եթէ բառը մի արմատ ունի, նա պարզ է կոչուում՝ աչք, ձեռք, ծառ:

Եթէ բառը երկու արմատ ունի, նա քալիլ է կոչուում՝ աչք-ա-կապ, ձեռն-ա-սուն, ծառ-ա-տունկ:

Երկու արմատ միմեանց հետ կապող տառը կոչուում է յօղակապ:

§ 132. Բառերը բարդուում են երեք կերպ.

ա. Երկու բառ կցուում են իրար առանց յօղակապի՝ արիւն-լուայ, կրճ-կալ, սոււտ-զրոյց, քմ-ծիծաղ, տըն-օրհնէք, հացթուխ, լուացարար, ձեռնթափ...

բ. Երկու բառ կցուում են իրար ա յօդակապով՝ անաշէն, նաւ-ա-բեկ, մայրապետ, նաւապետ, քայլափոխ, ծառատունկ, հաստապարանոց...*):

գ. Երկու բառ կցուում են իրար ու շղկապով՝ աճուղոյ, աղուհաց, կերուխում, տակնուվրայ, ջարդուբուրդ:

ԿՈՐՈՒՍՄԱՆ ԵՒ ՓՈՓՈԽՄԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 133. Բարդութեան և ածանցման ժամանակ ձայնաւոր տառերից ումանք դուրս են ձգուում, փոփոխուում են. Ա. Կորուսումք:

§ 134. Բառը բարդելիս կամ ածանցելիս՝ երբ հարկ լինի նախընթաց վանկի բաղաձայնը յաջորդ վանկին տալ, միայնակ մնացող ձայնաւորը պիտի վերանայ, եթէ ու, ի ձայնաւոր է:

134. ա. Մաքուր, մաքուրել—մաք—րել, ամուր—ամրացնել, մուր—մրտոել, Մուշ—մշեցի, մուգ—մգանալ, անասուն—անասնա-կան, գարուն—գարնան, տուն—տնային, բուն—բնակարան, երե-տուն—երեսնական, լուծ—լծած, լծել, լծորդ, բազում—բազմու-թիւն, տխուր—տխրութիւն, աշուն—աշնանային, քուն—քնել, արտում—արտամած:

բ. Գիր—գրել, գրութիւն, գրասէր, գրավարժ. կիծ—կծել, կծող, կծու. զիծ—զծել, զծող, զծագիր. բժիշկ—բժշկել, բժշկու-թիւն, բժշկական: Պարսիկ—պարսկերէն, պարսկահայ. հող—կացի, տած—կամուլ, ռամ—կական, մօտ—կանալ, բոր—կանալ, աղջիկ—աղջկան, մանուկ—մանկական:

§ 135. Մնացած ձայնաւորների վերաբերութեամբ այս կանոնը պարտաւորեցուցիչ չէ.—բերան, բերնի, բե-րանի, քաղաք, քաղ-քի, քաղաքի, քաղքցի, քաղաքացի, աւել, աւելել. աւեր, աւրել, աւերել:

*) Երբեմն ա յօդակապի տեղ հանդիպում է ն յօդակապը՝ այցեսոմս, հաշուետես...

§ 136. ի և ու տառերով սկսուած միավանկները ևս չեն հետևում վերի կանոնին.—իբ—իբական, իժ—իժա-կորիւն, ուղա—ուղապան, ութ—ութերորդ:

§ 137. Բարդութիւնների ժամանակ՝ եթէ յօդակապը դուրս է ընկած, բաղաձայնը առանց յաջորդ վանկին տա-լու էլ, նախընթաց ձայնաւորը կորչում է.—զուր և պար-տել՝ դառնում է զրպարտել, փոխանակ զրապարտել, սրամաշուք—սրտամաշուք, քմ—ծիծաղ, քամածիծաղ-անտես, ջրկիր, ջրհոր, ջրհոս, զբբաց, հացթուխ, քթկալ:

Բ. Փոփոխումք:

§ 138. Ածանցման ժամանակ՝ նոյն կանոնի հիման վրայ, է ձայնաւորը փոխուում է ի ձայնաւորի, ոյ երկ-բարբառը դառնում է ու, ևա երկբարբառը պարզ է, իսկ իւ երկբարբառը փոխուում է ու: Միևնոյն է լինում և բարդութիւնների ժամանակ:

135. ա. Սէր, սիրել. դէս, գիտել. կէս, կիսել. դէզ, դիզել: Այնպէս, այնպիսի. որպէս, որպիսի:

բ. Լոյծ, լուծել, բոյս, բուսական, յոյս, յուսահատ, լոյս, լուսաւոր, գոյն, գունաւոր, ծոյլ, ծուլութիւն, կոյս, կուսական:

գ. Ատեան, ատենի, մատեան, մատենագիր:

դ. Պատիւ, պատուել, պատուական. ազնիւ, ազնուական. կուիւ, կուարար. թիւ, թուել, թուական:

§ 139. Բարդութիւնների և ածանցման ժամանակ ջ տառը դուրս է ձգուում, եթէ նա արմատական չէ. իսկ եթէ արմատական է, չի կարող դուրս ձգուել.—Սեղք, խել-ացի, խելօք, խելահաս: Մեղք, մեղաւոր. մեղապարտ-փառք, փառաւոր, փառասէր:

Բացառութիւն են՝ հանք (հանքային), փորձանք (փորձան-քաւոր). մեղք (մեղաւոր և մեղքանալ):

§ 140. Բառերը՝ ածանցուելիս կամ բարդուելիս, մեծ մասամբ յօդակապով են բարդուում կամ ածանցուում: Յօ-դակապ չի դրուում.

ա. Երբ ածանցական մասնիկը կամ բառը ձայնաւորով է սկսուած.— հանճար-եղ, ուժ-եղ, մտեղէն, աղտեղի, հայրենի:

բ. Ի վերջացած բառերը ածանցուելիս ա յօդակապ չեն առնում, այլ ա և ի տառերից կազմուած է և յօդակապը՝— հոգի—աւոր—հոգեւոր, տարի, տարեկան, կղզի—կղզեցի, գինի—գինեւէտ, որդի—որդեսէր:

գ. Երբեմն ի կորչում է.— եկեղեցի—եկեղեցական, պիտանի—պիտանացու:

դ. Միավանկ բառերը ի պահում են.— մի—միանալ, թի—թիաւոր, գի—գիակ, գիակակիր, որդի—որդեական, կղզի—կղզիանալ, ձի—ձիաւոր, ձիարշաւ:

III. ՄԱՍԱՆՑ-ԲԱՆԻ ՓՈՓՈՒՍՈՒԹԻՒՆԸ

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

- Բառը ջրային թռչուն է:— ենթակայ:
- Բառի ոտները թաղանթոտ են:— Որոշող (յատկացուցիչ):
- Բառի-ն կուտ են տալիս:— Երկրորդ լրացնող (սւմբ):
- Որտորդն սպանեց այն ըսողը:— Բուն լրացնող:
- Բառից պոկոտեց փետուրները:— Երկրորդ լրացնող (սւմնից):
- Բառով յագեցրեց իւր քաղցը:— Երկ. լրացնող (սւմնով):
- Բառում լողալու շնորհք կայ:— Երկ. լրացնող (սւմնում):
- Վերլուծելով վերոյիշեալ նախադասութիւնները, մենք տեսնում ենք.

ա. Բառ բառը նախադասութեան մէջ կատարել է գլխաւոր և երկրորդական անդամների պաշտօն:

բ. Այլևայլ պաշտօն կատարելու համար նա փոփոխել է իւր վերջաւորութիւնը, բայց չի ածանցուել:

141. Անունների վերջաւորութեան փոփոխութիւնը կոչւում է հոլով:

Անունները եօթը ձևով միայն կարող են փոփոխել իրանց վերջաւորութիւնը. ուրեմն հոլովներն էլ եօթն են: Իրանց կատարած պաշտօնին նայելով, հոլովները լինում են՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, քացատական, գործիական, ներգոյական:

Բոլոր հոլովները միասին առած կոչւում են հոլովումն:

- ա. Սազը, աղաւնի-ն և ձուկը ողնաւոր կենդանիներ են:
- բ. Սագ-ի, աղաւն-ու և ձկ-ան մարմինները նման չեն իրար: Նշանակեալ բառերը նախադասութեան մէջ միևնոյն պաշտօնն են կատարում—որոշող են. բայց նոցա վերջաւորութիւնը միատեսակ չի փոփոխուել, այլ տարբեր (ի, ու, ան):

§ 142. Անունները երեք ձևով են փոփոխում իրանց վերջաւորութիւնները:

Փոփոխման տարբերութիւնը նկատուած է սեռական հոլովի մէջ:

Սեռական հոլովի վերջաւորութիւններն են՝ ի, ու, ան (եան):

Մնացած հոլովները կազմուած են սեռականից և ուղղականից:

ՈՒՂՂԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՅԱԿԱՆ

§ 143. Անուան անփոփոխ ձևը կոչւում է ուղղական հոլով:

Ուղղականը նախադասութեան մէջ միշտ ենթակայ է. բայց նա օժանդակ բայերի հետ կարող է ստորոգեալի պաշտօն կատարել: Սազը, աղաւնի-ն և ձուկը ողնաւոր կենդանիներ են:— Սա սագ է:

§ 144. Հայցական հոլովը ձևով նման է ուղղականին: Հայցական հոլովը նախադասութեան մէջ կատարում

է բուն լրացնողի պաշտօն:—Ձկնորսը բանեց ձուկը: Որսորդը հրացանով սպանեց սագ և աղանի: Ես ունի որդի:

§ 145. Հայցական պէտք է համարել և այն անունը, որ ուղղականի ձևով ցոյց է տալիս գործողութեան տեղը:—Ես գնացի (նւր) տուն, ուսումնարան, պարտէզ, այգի...*):

Ուղղական հոլովը իմացուում է հարցերով՝ ո՞վ, ի՞նչ, իսկ հայցականը՝ ո՞ւմ, ի՞նչ և ո՞ւր:

136. Վերլուծեցէք հետևեալ նախադասութիւնները և գտէք ուղղական և հայցական հոլովները:—Նապաստակը երկչոտ է: Կատուն ընտանի չորրօտանի կենդանի է: Ժառը ունի շատ ոտեր, տերեւներ ու ծաղիկներ: Մանուշակը անուշ հոտ ունի: Կատուն մուկը բանեց: Հաւը ուտում է կուտ: Վարդը ծաղիկ է: Աշակերտը ամառը գիւղը գնաց: Գիւղը շինած է սարի վրայ: Մարդիկ անցկացան գետը: Վարպետը շինում է մատանի: Ոսկին թանգ է: Ես ոսկի չունիմ: Խաղողը համուում է աշնանը, Գինին անդարար խմիչք է: Շունը պահպանում է տունը, հօտը և գիւղացու հարստութիւնը: Ծունը հալածեց գայլը: Որսորդն սպանեց գայլը: Տարին ունի տասներկու ամիս: Ամիսն ունի չորս շաբաթ, իսկ շաբաթը՝ եօթն օր: Աշակերտը վերցրեց գրքերը և գնաց ուսումնարան: Աշակերտը չգիտէր դասը:

Ս Ե Ռ Ա Կ Ա Ն Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն

§ 146. Անուան այն ձևը՝ երբ նա ցոյց է տալիս, թէ առարկան նմն է կամ ինչինն է, կոչուում է սեռական հոլով:

Սեռական հոլովը նախադասութեան մէջ որոշողի (յատկացուցիչ) պաշտօն է կատարում.—Սագի, աղանու, ձկան մարմինը... սենեակի, եկեղեցու, տան պատերը... խաղողի, գինու, նուսն համը...

*) Գրարարի նախորդ-տրականը, որ աշխարհարարում նախորդից զրկուելով հայցականի ձև է ստացիլ. գրարարի մէջ ևս հայցականը կատարել է շատ անգամ տրականի պաշտօն:

§ 147. Եթէ գոյական անունը ձևով նման է սեռականին, բայց նախադասութեան մէջ երկրորդական լրացնողի պաշտօն է կատարում և ոչ որոշողի, կոչուում է տրական հոլով:

Տրական հոլովը ցոյց է տալիս թէ նմ կամ ինչին ենք մի որևէ բան յատկացնում, տալիս:

Տրական հոլովը ձևի կողմից որոշող յօդով է միայն զանազանուում սեռականից:—Սոհարարը ունեցած փողերը տուեց սագի, աղանու, ձկան:—Վաճառականը խաղողին, գինուն և նուսնը լաւ գին տուեց: Ոտս քարին կը դիպչի:

Տրական հոլովը շատ անգամ պարագայականի մտքով է վարուում:—Սարի լանջին արածոււմ էր հօտը: Հրացանը ձևուին՝ դուրս եկաւ որսի*):

137. Հետևեալ օրինակների մէջ գտէք սեռական և տրական հոլովները.—Աշակերտի գիրքը գեղեցիկ է. ես աշակերտին գիրք տուի: Գրքի կազմը շինած է գունաւոր թղթից: Կազմի բաւական փող է տուած: Սեւին սապոնը, խեւին խրատն ի՞նչ անէ: Կուշտը սովածին մանր կըրրդի: Յովհաննէսի եղբայրը գնաց ուսումնարան: Խաղ անելիս՝ ոտս քարին դիպաւ: Աշակերտներն ասացին Յիսուսին, որ աղօթել սովորեցնէ: Յիսուսի աշակերտները հասկերը կորցում էին և ուտում: Աշակերտը վարժապետին մի փունջ ծաղիկ ընծայեց: Վարժապետը աշակերտին մի գիրք տուեց: Ծառերին ջուր տուէք, ինչպէս որ տալիս էք կենդանիներին:

Ծիսն է ծառին, հաւն է թառին: Հովիւը մահակն ունին, սրինգը ընդանին ուրախ սրտով նայում էր իւր ապրանքին: Այն մարդը մէջքին գօտիկ ունի կապած, ոտներին տրեխ: Ակնոցը աչքին, զաւազանին յենած, ձեռունին գանգաղութեամբ յառաջ էր գնում:

*) Գրարարի նախորդի և նախորդի—վերջահոլով տրականի տեղը՝ հրացանի ձեռին: Եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր: Յորժամ գույորս ելցես ապանի վերի Մասիս:

ԲԱՅԱՌԱԿԱՆ, ԳՈՐԾԻԱԿԱՆ ԵՒ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈՂՈՎՆԵՐ

§ 148. Բացառական է կոչուում անուան այն ձևը, որ ցոյց է տալիս, թէ մի բան *նրտեղից, նմանից, ինչնից ենք ստանում*:

Բացառական հոլովը կրաւորական բայերի մօտ լինում է բուն լրացնող, իսկ միւս բայերի մօտ երկրորդական լրացնող և պարագայական (*նրտեղից, երբեմն և ինչնից հարցերի պատասխանը պարագայական է*):

138. Գիւղացին կտրեց ծառը: Ծառը կտրուեցաւ գիւղացուց: Ձկնորսը ձուկը բռնեց: Ձուկը բռնուեցաւ ձկնորսից: Հայրը որդուց նամակ ստացաւ: Ծառից պտուղ քաղեցինք: Ազբիւրից ջուր խմեցինք: Ջրհորից ջուր են հանում: Գետից առու է հանած: Ես վերադառնում եմ քաղաքից:

Յրտութիւնից ջուրը սառչում է, տաքութիւնից գոլորշիանում: Ծուլութիւնից մարդ միշտ վրաս է կրում: Մշակները վերագարձան գաշտից: Սարից վազում էր մէկ կարկաչուն վտակ:

§ 149. Գործիական է կոչուում անուան այն ձևը, որ ցոյց է տալիս թէ մի գործողութիւն *նմանով, ինչնով, նմ կամ ինչի միջնորդութեամբ և ինչպէս (նրը) ենք կատարում*:

Գործիական հոլովը նախադասութեան մէջ լինում է երկրորդական լրացնող և պարագայական:—Գիւղացին ծառը կտրեց կացնով:—Ես կարգում եմ ուշադրութիւնով (*ի՞նչպէս*):

139. Մանգաղով հսձում են խոտն ու ցորենը: Մեր պարտեզը լիքն է պտղատու ծառերով: Աշնանը երկրագործի կարասները լցում են զինով, ամբարներն ալիւրով ու ցորենով, իսկ մառանները տեսակ-տեսակ պտուղներով:

Գիշերով (երբ) մեր տունը հիւր եկաւ: Օրը ցերեկով գողերը մտան տուն և կողոպտեցին: Հայերը քաջութեամբ ընդդիմացան պարսկներին և պատուով պաշտպանեցին իրանց հայրենիքը:

Ուշադրութեամբ (*ի՞նչպէս*) լսեցէք ձեր վարժապետին և նշտութեամբ կատարեցէք նորա պատուէրները:

§ 150. Ներգոյական է կոչուում անուան այն ձևը, որ ցոյց է տալիս, թէ մի գործողութիւն *նմանով, ինչնով, նրտեղ է կատարուում*:—Ժողովուրդը եկեղեցում աղօթում էր: Ինձանում այդքան ուժ չկայ: Հողում աճեցական գորութիւն կայ:

Ունեում և ինչնով հարցերի պատասխանը երկրորդական լրացնող է, իսկ նրտեղ հարցի պատասխանը միշտ տեղական պարագայական բառ:

ԿԱՆՈՆԱԻՈՐ ՀՈՂՈՎՄՈՒՆԻՔ

§ 151. Բոլոր անունները սեռական հոլովի տարբերութիւն միայն ունին: Սեռական հոլովի կազմութեանը նայելով, բոլոր գոյական անունները չորս խմբի են բաժանուում: Իւրաքանչիւր խումբը կազմում է մի հոլովումն:

§ 152. Առաջին խումբը կամ առաջին հոլովումն կազմում են այն անունները, որոնց սեռականը ուղղակի շինուում է ուղղականից՝ ի տառը կցելով վերջից.—Հաց—հացի, քար—քարի, սեղան—սեղանի:

§ 153. Երկրորդ խումբը կամ երկրորդ հոլովումն կազմում են այն անունները, որոնց ուղղականը ի ունի, իսկ սեռականում այդ ի-ն փոխուում է ու.—Ոսկի, ոսկու, գիւղացի—գիւղացու:

§ 154. Երրորդ խումբը կամ երրորդ հոլովումն կազմում են այն բառերը, որոնք ուղղականում ն տառն են ունենում կից որևիցէ բաղաձայն տառի. սեռականում այդ ն տառը հեռանում է վերջին բաղաձայնից և իրանից առաջ առնում է ա տառը:—Ձուկն—ձկ-ա-ն, արիւն—արեան, մեծութիւն—թեան:

§ 155. Չորրորդ հոլովումն կազմում են միքանի Ժամանակ ցոյց առող անուններ, որոնք ուղղականում որոշ վերջաւորութիւն չունին, իսկ սեռականում ունենում են ուան (կամ ուայ).—Օր—օրուան, ամիս—ամսուան:

§ 156. Բոլոր չորս հոլովումները յոգնակի թւում միանման կազմութիւն ունին, այն է՝ առաջին հոլովման պէս սեռականում ի են առնում:

§ 157. Կանոնաւոր հոլովման մի օրինակ.

Եզակի

Ուղ.	հաց	զինի	արիւն	օր
Սեռ.	հացի	զինու	արեան	օրուայ կամ օրի
Տրակ.	հացի	զինու	արեան	օրուան. — օրին
Հայց.	հաց	զինի	արիւն	օր
Բաց.	հացից	զինուց	արիւնից	օրուանից. — օրից
Գործ.	հացով	զինով	արիւնով	օրով
			արեամբ:	

Ներգ. հացում զինում*) արիւնում օրում

Յոգնակի

Ուղ.	հացեր	զինիներ	արիւններ	օրեր
Սեռ.	հացերի	զինիների	արիւնների	օրերի
Տրակ.	հացերի	զինիների	արիւնների	օրերի
Հայց.	հացեր	զինիներ	արիւններ	օրեր
Բաց.	հացերից	զինիներից	արիւններից	օրերից
Գործ.	հացերով	զինիներով	արիւններով	օրերով
Ներգ.	հացերում	զինիներում	արիւններում	օրերում

*) Գործիական և ներգոյական հոլովները շատ անգամ ուղղականի ի տառը պահում են՝ զինով, մատանիով, զինիւմ, մատանիում:

140. Արմատական հոլովներ ընդունելով ուղղականն ու սեռականը, գտէք մնացած հոլովների կազմութիւնը՝ առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ հոլովման մէջ առանձին-առանձին:

141. Առաջին հոլովման տակ հոլովեցէք հետեւեալ գոյական անունները եզակի և յոգնակի.

ա. Վարդ, դաշտ, ջուր, ծառ, հոն, տանձ, բաղդ, գանձ, փիղ, զօրք:

բ. Բաժակ, կացին, դանակ, սեղան, աթոռ, սրցոց, խարտոց, անտառ, տերև, արև, ազուաւ աղուէս, մողէս, բանակ, զինուոր, բժիշկ:

գ. Ոտ, ձեռ, մատ, մաս (ոտը, ձեռը). ոտներ, ձեռներ:

դ. Յարութիւն, Համբարձում, Ամբակում, Մկրտում, Մեղքում...

ե. Հայելի, ածելի, բանալի, Գարիբալդի, Անի, Նապօլի. (հայելիի, ածելիի):

զ. Բուն, թռչուն, սողուն, զեռուն...

142. Ներկրորդ հոլովման տակ հոլովեցէք՝ ա. կկեղեցի, աղաւնի, մատանի, զինի, ձիթենի, ինձորենի, կերոսանի...

բ. Թի, ձի:

գ. Կարդալ, գրել, խօսել, ուրախանալ, զարմանալ...

դ. Մարդ*, Աստուած:

ե. Բազաքացի, դաշտեցի, սարըցի, Հայաստանցի, Պարսկաստանցի, կարնեցի, երևանցի (հոլովեցէք միայն եզակի թուով):

143. Երրորդ հոլովման տակ հոլովեցէք.

ա. Շուն, տուն, ձուկը, նուրը, եզը, դուռը, մուկը, թոռը, ծունկը...

բ. Արիւն, ծնունդ, ժողովուրդ, անուն, դարուն, աշուն:

գ. Խաւարումն—խաւարման, կործանում, հարցում, խոստում, օծում...

Յոգնակին՝ խաւարումներ կամ խաւարմունքներ, հարցումներ կամ հարցմունքներ...

դ. Աշխատութիւն, աշխատութեան, աշխատութեամբ, մեծութիւն, զօրութիւն, քաջութիւն, նուաստութիւն, առաքինութիւն, մոլութիւն, խնայողութիւն, զեղխութիւն, շոյալութիւն...

*) Մարդ բառի յոգնակին անկանոն է՝ մարդիկ, մարդկանց...

144. Ում, ինն, թիւն վերջացած բառերը հոլովեցէք անխը-
տիբ և առաջին հոլովման պէս.— Արին, արինսի, արինից, ա-
րինով. աշխատութիւնի, աշխատութիւնով. հարցումի, հարցումով:

145. Չորրորդ հոլովման տակ հոլովեցէք.

ա. Ժամանակ, տարի, ամիս, շաբաթ, առաւօտ, իրիկուն, կէսօր, ամառ, ձմեռ, ցերեկ, գիշեր, անգամ, հիմակ, առաջ, հերու, երէկ, վաղը...

բ. Մահ, մահուան, կնիկ, աղջիկ:

գ. Չորրորդ հոլովման բառերից շատերը հոլովեցէք և առաջին հոլովման տակ:

Ա Ն Կ Ա Ն Ո Ն Հ Ո Լ Ո Վ Մ Ո Ի Ն Ք

§ 158. Կան միքանի անուններ, որոնք եզակի թւում անկանոն են հոլովում, իսկ յոգնակի թւում կանոնաւոր-
կան և այնպիսիները, որոնք եզակիում կանոնաւոր են, իսկ յոգնակի ուղղական և սեռական հոլովներում ան-
կանոն:

§ 159. Եզակիում անկանոն հոլովուող անուններն են.

Ուղ. Հ.	հայր	քոյր	սէր
Ս. Տ.	հօր	քրոջ	սիրոյ
Քաց.	հօրից	քրոջից	սիրուց
Գործ.	հօրով	քրոջով	սիրով
Ներգ.	—	քրոջում	—

ա. Հայր բառի պէս հոլովեցէք՝ մայր, եղբայր, նախահայր, նախամայր և այլ բարդութիւնները:

բ. Քոյր բառի պէս հոլովեցէք՝ Տէր, կին, տիկին, տալ աներ, ընկեր:

գ. Սէր բառի պէս հոլովեցէք՝ Աստուած, սուրբ, սուր, լոյս- (սրբից, սուրբից, լոյսից, լուսից):

146. Որոշեցէք հետևեալ նախադասութիւնների մէջ նշանա-
կուած գոյականների հոլովական տարբերութիւնը.— Ես մի կնկա-

նից երեք հաւ գնեցի: Դու միւս կնոջից հարիւր ձու գնեցիր: Իմ ընկերի գրքերը շատ են, քո ընկերոջ գրքերը սակաւ: Յով-
հաննէսի աներոջ որդին քո տալոջ հետ մեզ մօտ եկաւ: Կարա-
պետի անօր որդին և տալիս տղան էլ պիտի գան: Պարտիզի
տիրոջից խնդրեցինք, որ մեզ ընդունի: Տէրից մի նամակ ստա-
ցայ:—Այս կնոջ այրը մի բարի մարդ է: Այս այրի միջից մի
զազան դուրս եկաւ: Մայրը հոգում է իւր որդիների պէտքերը:
Մայր ծառը աճում է շատ երկար տարիներ:

§ 160. Յոգնակիում անկանոն հոլովուող անուններ-
ըն են.

Ուղ. Հայք, Հրէայք, Յոյնք, Մամիկոնեանք, Արշա-
կունիք, Կարնեցիք:

Սեռ. Հայոց, Հրէից, Յունաց, Մամիկոնեանց, Արշա-
կունեաց, Կարնեցոց:

147. ա. Հայք գոյականի պէս հոլովեցէք՝ տղայք, որդիք,
երեխայք, ասորիք, պահք:

բ. Յոյնք բառի պէս հոլովեցէք՝ ծնողք—ծնողաց, ուսար,
քուրդք, մոնգոլք, հոնք, չէչէնք, լեհք:

գ. Մամիկոնեանք բառի պէս հոլովեցէք՝ ա. բոլոր եան
վերջացած տեղի և ազգի անունները յոգնակի թւում, բ. երրորդ
հոլովման թիւն վերջացած բառերի յոգնակիի երկրորդ ձևը—
թիւնը՝ աշխատութիւնք,—թեանց և գ. նոյն հոլովման ում՝ վեր-
ջացած բառերի յոգնակին—մոնը՝ ուսմունք, ուսմանց. նաև
աղջկունք,—անց, կանայք,—անց:

դ. Հրէայք բառի պէս հոլովեցէք՝ ծառայք:

ե. Արշակունիք բառի պէս հոլովեցէք բոլոր ունիք վերջա-
ցած բառերը՝—Ռշաունիք, Պորխոունիք, Մանգակունիք...

զ. Կարնեցիք բառի պէս հոլովեցէք՝ բոլոր եցի վերջացած
ածանցների ք—ով յոգնակին՝ քաղաքացիք, պիւղացիք, մանիքե-
ցիք, սաղուկեցիք...

§ 161. Յոգնակիում անկանոն հոլովուող բոլոր ա-
նունները կարող են առնել ներ յոգնականակերտ մասնի-
կը և կանոնաւորապէս հոլովուել առաջին հոլովման տակ:

— Հայեր, Հրէաներ, Յոյներ, Մամիկոնեաններ, Արշակունիներ, Կարնեցիներ:

§ 162. Կորուսման կանոնին համաձայն՝ գոյական անուններից շատերը, հոլովուելիս, վերջին վանկի ձայնաւորը կորցնում են, մանաւանդ ի, ու ձայնաւորները: Յոգնակի թւում կորուսման կանոնը հազիւ է գործադրւում: — Քիթ, քթի, օգուտ, օգտի կամ օգուտի. սէր, սիրոյ...

147. Հոլովեցէք՝ ա. երկիր, գետին, կաղին, սիրտ, գաւիթ, գիր, մոխիր, գիրք, միրգ, միս, մարմին...

գ. Օգուտ, հարուտ, ջուր, թուղթ, պտուղ, կերակուր, մուկը, դուռը, նուռը, փուռը, ուտում, ժողովուրդ...

§ 163. Փոփոխման կանոնին համաձայն՝ գոյական անուններից ոմանք, հոլովուելիս, վերջին ձայնաւորը փոխում են: Յոգնակի թւում փոփոխման կանոնը չէ գործադրւում:

148. Հոլովեցէք՝ ա. հանդէս—հանդիսի, սէր—սիրոյ, էշ—իշի. Յովհաննէս—Յովհաննիսի (և Յովհաննէսի):

բ. Պատանեակ—պատանեկի, վայրկեան—վայրկենի, գեհեան—գեհենի, վառեակ—վառեկի (վառիկ—վառիկի):

գ. Հաշիւ—հաշուի, թիւ—թուի, հովիւ—հովուի, պատիւ—պատուի:

դ. Լոյս—լուսոյ, սառոյց—սառուցի, հանգոյց—հանգուցի...

Ա Ն Ո Ւ Ա Ն Յ Օ Դ Ը

Ես խանութ մտայ և մարդ տեսայ:

Ես խանութը մտայ և մի մարդ տեսայ:

Առաջին նախադասութեան մէջ նշանակեալ անունները ընդհանուր գաղափար են ամփոփում իրանց մէջ. յայտնի չէ, թէ ինչ խանութ է մտել խօսողը և ինչ մարդ է տեսել:

Երկրորդ նախադասութեան մէջ միևնոյն բառերը, սկզբից կամ վերջից աննշան մասնիկ առնելով, ընդհանուր գաղափարը մասնաւորում են. խանութը մտայ ասելով, իսկոյն ըմբռնում ենք,

որ մի յայտնի ու որոշ խանութի է ակնարկում. իսկ մի մարդ ասելով, մենք ըմբռնում ենք, որ նորա տեսածը մի մարդ է եղել և ոչ թէ ընդհանրապէս մարդ արարածը:

§ 164. Այն տառը կամ մասնիկը՝ որ դրւում է անունի սկզբից կամ վերջից և նորա գաղափարը մասնաւորում է, կոչւում է յօդ:

Յօդը երկու է՝ որոշեալ՝ ն—ը, և անորոշ՝ մի:

Ն յօդը ձայնաւորով վերջացած բառի վրայ է դրւում՝ ձիւն, աղաւնիւն, որդիւն, ձուն:

Եթէ անունը վերջացած է յ տառով, յ սովորապէս վերանում է և նորան փոխարինում է ն յօդը՝ քահանան, երեխան, գաթան, Մարթան:

Եթէ անունն յետագայ բառը ձայնաւորով է սկսուած, նախընթաց անունը վերջից ն յօդ է առնում.—Այն աշակերան է յառաջագիմութիւն ցոյց տալիս, որ իւր յոյսն ուրիշի վրայ չի դնում:

Մնացած դիպուածներում ը է դրւում՝ մարդը, քարը, ծիծեռնակը:

§ 165. Մի յօդը դրւում է անունների սկզբում, երբ խօսքը մի մասնաւոր բայց մեզ անյայտ ու անծանօթ առարկայի մասին է՝ մի մարդ, մի ծառ, մի սեղան:—Դուրսը մի մարդ կայ կանգնած և քեզ է սպասում:

ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՂՎՈՒՄԸ ՈՐՈՇԵԱԼ ՅՕԴՈՎ

§ 166. Բառերը, որոշեալ յօդով հոլովուելիս, միքանի փոփոխութեան են ենթարկւում:

ա. Բոլոր հոլովները, թէ եզակի և թէ յոգնակի, կարող են յօդ առնել կամ չառնել, բայց ուղղականը, հայցականը և տրականը անպատճառ յօդ են ունենում, եթէ բառը որոշեալ է, իսկ սեռականը՝ հազիւ:

բ. Մարդկանց յատուկ և հասարակ անունները, որոշեալ յօդով հոլովուելիս, հայցականը նման են ունենում ոչ թէ ուղղականին, այլ տրականին:

§ 167. Անա որոշեալ յօդով գոյականի հոլովման պատկերը.

Ուղ.	հացը	թռչունը
Սեռ.	հացի	թռչունի
Տրակ.	հացին	թռչունին
Հայց.	հացը	թռչունը
Բաց.	հացիցը (հացից)	թռչունիցը
Գործ.	հացովը (հացով)	թռչունովը
Ներգ.	հացումը (հացում)	թռչունումը

§ 168. Ահաւասիկ և մարդու յատուկ և հասարակ անունը՝ որոշեալ յօդով հոլոված.

Ուղ.	հայրը	կարապետը
Սեռ.	հօր	կարապետի
Տրակ.	հօրը	կարապետին
Հայց.	հօրը	կարապետին
Բաց.	հօրից (ը)	կարապետից (ը)
Գործ.	հօրով (ը)	կարապետով (ը)
Ներգ.	—	կարապետում (ը)

149. Իմացէք թէ նշանակեալ բառերը ինչ հոլով են:

Մայրը սիրում է որդուն: Որդին մօրը պատիւ է տալիս: Որդին մօրը պատում է: Հայրը Յովհաննէսին ուսումնարան տարաւ: Ուսուցիչը Յովհաննէսին գրքեր և դասական պիտոյքներ տուեց: Ուսուցիչը քննեց աշակերտին: Ուսուցիչն ասաց աշակերտին, որ նա դասատունը փոխում է:

Ես տեսայ մի աշակերտ: Ես տեսայ այն աշակերտին: Մէկ աշակերտի գիրք կորել էր: Այն աշակերտի գիրքը կորել էր:

150. Որսորդն սպանեց մէկ թռչուն: Որսորդը սպանեց

թռչունը: Անտառապահը մի ծառ կտրեց: Անտառապահը ծառը կտրեց: Թռչնորսը թռչուն է որսում: Թռչնորսը որսում է թռչունը: Կացնով խփիր և կարիր փայտը: Կացնով փայտ կարիր: Կացնիցը սուր է դաշոյնը: Դաշոյնը կացնից սուր է:

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՄՆ ՀՈՒՈՎՈՒՄԸ

§ 169. Ածական անունը երկու տեսակ գործածուելիւն ունի՝ ա. գոյականի հետ, ը. մենակ, առանց գոյականի:

§ 170. Եթէ ածական անունը գոյականի հետ է, միշտ նախադաս է վարւում և անփոփոխ է մնում—չի հոլովւում:

Օրինակ՝

Ուղ.	բարի մարդ	սպիտակ թուղթը
Սեռ.	բարի մարդու	սպիտակ թղթի
Տրակ.	բարի մարդու(ն)	սպիտակ թղթի(ն)
Հայց.	բարի մարդ	սպիտակ թուղթը
Բաց.	բարի մարդուց	սպիտակ թղթից
Գործ.	բարի մարդով	սպիտակ թղթով
Ներգ.	բարի մարդում	սպիտակ թղթում

§ 171. Եթէ ածականը մենակ է, յօդ է առնում և գոյականի պէս է հոլովւում:

Օրինակ՝

Սպիտակ	սպիտակները
Սպիտակի	սպիտակների
Սպիտակին	սպիտակներին
Սպիտակից(ը)	սպիտակներից(ը)
Սպիտակով(ը)	սպիտակներով(ը)
Սպիտակում(ը)	սպիտակներում(ը)

ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ

§ 172. Թուական անուններն էլ՝ ածականի պէս, երկու տեսակ գործածութիւն ունին՝ մենակ և գոյականի հետ: Եթէ թուականը գոյականի հետ է, նախադաս է դրուում և չի հոլովուում:

Եթէ թուականը մենակ է, հոլովուում է որպէս գոյական անուն՝ յօդով և առանց յօդի:

§ 173. Բոլոր թուական անունները հոլովուում են առաջին հոլովման տակ:

Օրինակ՝

Ո. Հ. Հինգ — հինգերորդ — հնագական

Ս. Տ. Հնգի — հինգերորդի — հնագականի

Բաց. Հնգից — հինգերորդից — հնագականից

Գործ. Հնգով — հինգերորդով — հնագականով

Սեր. Հնգում — հինգերորդում — հնագականում

Յոգնակիում թուական անունները հազիւ են գործածուում, այն էլ միայն թուական գործողութիւնների մէջ: — Հնգերը եթէ միասին ժողովենք, կըստանանք...

§ 174. Երկու բառը, հոլովուելիս, առնում է ս կամ ք տառը — երկուսի, երկուքի:

Եօթը, ութը՝ հոլովուելիս՝ ը գիրը թողնում են — եօթի, ութի:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄՆԵՐԸ

§ 175. Գոյական դերանունները՝ գոյական անունների պէս, ունին թիւ և հոլով: Գոյական դերանունները որոշեալ են, այնպէս որ հոլովուելիս՝ հայցականը միշտ նման է լինում տրականին և ոչ ուղղականին:

§ 176. Անձնական դերանունները հոլովուում են հետևեալ կարգով.

ա. Ես, իմ, ինձ, ինձանից (ինձնից), ինձանով, ինձանում:

Մենք, մեր, մեզ, մեզանից (մեզնից) մեզանով, մեզանում:

բ. Դու, քո, քեզ, քեզանից (քեզնից), քեզանով, քեզանում:

Դուք, ձեր, ձեզ, ձեզանից (ձեզնից), ձեզանով, ձեզանում:

գ. Ինքն, իր, իրան, իրանից, իրանով, իրանում: Իրանք, իրանց, իրանցից, իրանցով, իրանցում:

151. Գտէք անձնական դերանունների հոլովը և կատարած պաշտօնը.

Ես սիրում եմ իմ հօրը: Հայրս ինձ մի գեղեցիկ պարգև տուեց: Հայրս գովեց ինձ և յողորեց, որ միշտ ջանասէր լինիմ: Մայրս ինձանից մի նամակ ստացաւ. նա հէնց ինձանով է մխիթարուում միայն: Ինձանում ես մեծ սէր եմ զգում դէպի բարին և առաքինին:

152. Նախադասութեամբ հոլովեցէք դու և ինքն դերանունները հետևեալ կարգով.

Ես ունիմ եղբայր: Իմ հօրեղբայրս բարի մարդ է, ևայն:

§ 177. Ցուցական դերանունները երկու են՝ գոյական և ածական:

Գոյական ցուցականները հոլովուում են հետևեալ կարգով.

ա. Սա, սորա, սորան, սորանից, սորանով, սորանում, կամ՝ սրա, սրան...

Սորանք, սորանց, սորանց, սորանցից, սորանցում, կամ՝ սրանք...

բ. Սոքա, սոցա, սոցա, սոցանից, սոցանով, սոցանում:

153. Հոլովեցէք նոյն ձևով դա և նա դերանունները:

154. Գրեցէք նախադասութիւններ, ուր սա և նա դերանունները կատարած լինին ենթակայի, բուն և երկրորդական լրացնողների և որոշողի պաշտօն զանազան հոլովներով՝ թէ կգալի և թէ յոգնակի:

§ 178. Հարցական դերանունները երկու են՝ գոյական՝ ո՞վ, ի՞նչ, և ածական՝ ո՞ր:

Ո՞վ հարցականը եզակի թուով է հոլովւում, իսկ յոգնակի միայն ուղղական հոլովն ունի:

Ո՞վ, ո՞ւմ, ո՞ւմ(ը), ո՞ւմնից, ո՞ւմնով, ո՞ւմնում:—Ո՞վքեր:

Ի՞նչ հարցականը հոլովւում է առաջին հոլովման տակ և, որպէս անշունչ առարկայի տեղ բանող, հայցականը նման է ունենում ուղղականին:

Ի՞նչ, ինչի՞, ինչի՞ն, ինչի՞ց, ինչի՞ով, ինչի՞ում:

Ինչէ՞ր, ինչէ՞րի, ինչէ՞րին, ինչէ՞րից, ինչէ՞րով:

§ 179. Ո՞ր հարցականը գործ է ածւում գոյական անունան հետ և ինքը անփոփոխ է մնում. բայց նա կարող է յօդ առնել և հոլովուիլ:

Ո՞րը, ո՞րի, ո՞րին, ո՞րից, ո՞րով, ո՞րում:

Ո՞րոնք, ո՞րոնց, ո՞րոնց, ո՞րոնցից, ո՞րոնցով, ո՞րոնցում:

§ 180. Միենոյն ձևով հոլովւում է և որ յարաբերական դերանունը:

155. Գրեցէք այնպիսի բաղադրեալ նախադասութիւններ, որոնց մէջ երկրորդական նախադասութիւնը կապուած լինի գլխաւորի հետ որ յարաբերական դերանունան զանազան հոլովներով:

Ս Ս Ա Յ Ա Կ Ա Ն Դ Ե Ր Ա Ն Ո Ի Ն Ն Ե Ր *)

§ 181. Գոյական դերանունների սեռական հոլովը կոչւում է ստացական դերանուն:

*) Ստացական դերանունները աշխարհաբար լեզուի մէջ իսկապէս առանձին դասակարգ չեն կազմում. սորա միւս դերանունների սեռականն են, որ գոյական ա-

Ստացական դերանունը միշտ ածական է և որոշեալ յօդով գոյական է առնում իւր մօտ: — Բայց նա կարող է յօդ առնել և հոլովուիլ իբրև գոյական. ձայնաւորով վերջացածները կրկին յօդ են առնում—իմ—իմը. քո—քոնը. նորանը...*)

Դ Ե Ր Ա Ն Ո Ի Ա Ն Ա Կ Ա Ն Յ Օ Դ Ե Ր

§ 182. Դերանունների արմատական տառերը՝ ս, ո, ն, գրւում են գոյական անունների վրայ և որոշում են նոցա դէմքը, ուստի և կոչւում են ղիմիրոշ կամ ղերանունական յօդեր:

ս, ո, ն տառերը, հոլովական բառերի վրայ գրուելով, միենոյն նշանակութիւնն են տալիս նոցա, ինչ նշակութիւն պիտի տային անձնական և ցուցական դերանունները.

Հայրս—ես հայրս, իմ հայրս, սա հայրս, սոյն հայրս:—Մայրդ, քոյրը(ն), տունս, գիրքդ, եկեղեցին:

Ա Ն Ո Ր Ո Շ Դ Ե Ր Ա Ն Ո Ի Ն Ն Ե Ր

§ 183. Անորոշ դերանունները լինում են. ա. Դոյական՝ ոմն, ոք, ոքմին, ոչ ոք, ոչինչ, իրար, միմեանց, մէկգմէկ, ամենքը, ամենեքեան:

բ. Ածական՝ քանի, միքանի, որքան, այսինչ, այնինչ, այսքան, նոյնքան...

գ. Ածական և գոյական՝ միւս—միւսը, մէկէլ—մէկէ-

նունների սեռականի պէս կրկնակի յօդ են առնում և հոլովում. օրինակ՝ Կարապետի գիրքը,—Կարապետինը, Կարապետինի, Կարապետինից, Կարապետինով... իմը, իմի, իմից, իմով:

*) Վերջինը բոլոր հոլովները շունի:

լը, ուրիշ—ուրիշը, իւրաքանչիւր—իւրաքանչիւրը, ամեն, ամենը, ամեն մէկ—ը, միևնոյն—ը, բոլոր—ը:

դ. Ածական և անհոլովելի՝ որեւիցէ, որպիսիեւիցէ, որքանեւիցէ, ինչեւիցէ, ինչ-ինչ, որպիսի, այնպիսի...

§ 184. Գոյական գերանուններից ոմն, որ, ամեննեքեան, ըստընքեան չեն հոլովուում. ոմն յօգնակի ունի (§ 185):

Իրար, մէկգմէկ, միմեանց հայցական հոլով են, ուղղական չունին. սեռականը կազմուում է հայցականից առաջին երկուսին ու կցելով, իսկ երրորդը անփոփոխ:

Հայց. Մէկգմէկ, իրար, միմեանց պատժեցին:

Սեռ. Մէկգմէկու, իրարու, միմեանց տուն քանդեցին:

Տրակ. Մէկգմէկու, իրարու, միմեանց ընծաներ տուին:

Քաց. Մէկգմէկուց, իրարից, միմեանցից բաժանուեցան:

Գործ. Մէկգմէկով, իրարով, միմեանցով գցեցին յանցանքը:

§ 185. Որմին, ոմանք հոլովուում են հետևեալ կերպով.

Ուղ. Հ.	ոքմին	Ուղ	ոմանք
Սեռ. և Տր.	ոքմնի	Ս. Տ. Հ.	ոմանց
Քաց.	ոքմնից	Քաց.	ոմանցից ոմանցով ոմանցում
Գործ.	ոքմնով	Գործ. *)	
Ներգ.	ոքմնում	Ներգ.	

§ 186. Մնացած բոլոր անորոշ գերանունները կարող են յօդ առնել և գոյական անունան պէս հոլովուել առաջին կանոնաւոր հոլովման տակ:

Հոլովեցէք՝

ա. Ոչոք, ոչոքի	դ. Ամենքը, ամենքի
բ. Ոչինչ, ոչնչի	ե. Քանիսը, քանիսի
գ. Ամենք, ամենքի	զ. Միքանիսը, միքանիսի

*) Անգործածական:

է. Այսինչ, այսինչի	ժբ. Միւս, միւսի
ը. Այսքան, այսքանի	ժգ. Մէկէլ, մէկէլի
թ. Այսչափ, այսչափի	ժդ. Ուրիշ, ուրիշի
ժ. Նոյնքան, նոյնքանի	ժե. Իւրաքանչիւր, իւրաքանչիւրի
ժա. Բոլորը, բոլորի	ժզ. Ամեն մէկը, ամեն մէկի...

Բ Ա Յ Ի Փ Ո Փ Ո Խ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

§ 187. Բայի փոփոխութիւնը եղանակներով, ժամանակներով, թուերով և դէմքերով՝ կոչուում է խոնարհում:

ա. Սիրել, սիրում եմ, կը սիրեմ, սիրեցի, սիրելիք:
բ. Կարդալ, կարդում եմ, կը կարդամ, կարդացի, կարդա:
գ. Խօսիլ, խօսում եմ, կը խօսիմ, խօսեցայ, խօսէ:
դ. Ուրախանալ, ուրախանում եմ, կ'ուրախանամ, ուրախացայ, ուրախացիր:

§ 188. Բոլոր բայերը միատեսակ չեն խոնարհուում, այլ շատ կամ սակաւ տարբերուում են իրարից:

Բոլոր միատեսակ խոնարհուող բայերը առանձին կարգ են կազմում և կոչուում են լծորդութիւն*):

§ 189. Բայերն ունին երեք լծորդութիւն.

Առաջին լծորդութիւնը կազմում են այն բայերը, որոնք ել վերջաւորութիւն ունին.—Սիրել, գրել, գործել...

Երկրորդ լծորդութիւնը կազմում են այն բայերը, որոնք իլ վերջաւորութիւն ունին.—Խօսիլ, ասիլ, յօգնել...

Ալ վերջացած բայերը կազմում են երրորդ լծորդութիւնը.—Կարդալ, խնդալ, հաւատալ...

Անալ վերջացած բայերը կազմում են չորրորդ լծորդութիւնը.—Ուրախանալ, զարմանալ, բարձրանալ...

*) Լծորդութիւն նշանակում է կապակցութիւն՝ լծել և լծորդել բառերից:

Է Ա Կ Ա Ն Բ Ա Յ Ե Ր Ի Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ի Մ Ը

— եմ, լինիմ —

§ 190. Չէզոք բայերից երկուսը ցոյց են տալիս ոչ թէ առարկայի գործողութիւնը, այլ իսկապէս նորա գոյութիւնը, էութիւնը, լինելութիւնը. սորա կոչումն են էական բայեր: Էական բայերը միևնոյն ժամանակ օժանդակ են. նոցա օժանդակութեամբ է կազմուում միւս բայերի ժամանակները մեծագոյն մասը:

Իրանք էական բայերն ունին առանձին խոնհարումն. ա. եմ բայը միայն երկու ժամանակ ունի՝ սահմանականի ներկան և անկատարը:

Ներկայ՝ եմ, ես, է. ենք, էք, են:
Անկատար՝ էի, էիր, էր. էինք, էիք, էին:
Բ. Լինիմ՝ բայը բոլոր ժամանակներն ունի.

Սահմանական եղանակ՝

Ներկայ՝ լինում եմ, լինում ես, լինում է.
լինում ենք, լինում էք, լինում են:
Անկատար՝ լինում էի, լինում էիր, լինում էր.
լինում էինք, լինում էիք, լինում էին:

Կատարեալ՝ եղայ, եղար, եղաւ.

եղանք, եղաք, եղան *):

Վաղակատ. եղել եմ, եղել ես, եղել է.
եղել ենք, եղել էք, եղել են:

Ապառնի՝ կըլինիմ, կըլինիս, կըլինի.
կըլինինք, կըլինիք, կըլինին.

Պայմ. ապ. կըլինէի, կըլինէիր, կըլինէր.
կըլինէինք, կըլինէիք, կըլինէին:

*) Կատարեալը և նորան նման ժամանակները չին-հայերէնի եղանակով բայից են առնուած:

Հրամայական եղանակ՝ եղիր. եղէք:

Ստորադասական եղանակ՝ որ, թէ, եթէ՝

Ապառնի՝ լինիմ, լինիս լինի.

լինինք, լինիք, լինին:

Անկատար՝ լինէի, լինէիր, լինէր.

լինէինք, լինէիք, լինէին:

Դերբայ՝ անորոշ՝ լինիլ. ներկայ՝ եղող. անցեալ՝ եղել

— եղած. ապառնի՝ լինելու:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Լ Ծ Ո Ր Դ Ո Ի Թ Ի Ի Ն

§ 191. Չորս լծորդութեան բայերը տարբերում են իրարից անորոշ դերբայի, անցեալ կատարեալի, հրամայականի և անցեալ դերբայի կազմութեամբ:

Մնացած ժամանակները բոլոր լծորդութիւնների մէջ շինուում են միապէս և նման են միմեանց:

§ 192. Առաջին լծորդութիւնը կազմում են ել վերջացած բայերը:— Առաջին լծորդութեան անցեալ կատարեալը կազմուում է անորոշ դերբայի վերջաւորութեան փոխարէն զնելով եցի մասնիկը, հրամայականը— իր, է, անցեալ դերբայը— ել, ւծ:

Ահաւասիկ առաջին լծորդութեան ամբողջ պատկերը.

Սահմանական եղանակ՝

Ներկայ՝ գրում եմ, գրում ես, գրում է.
գրում ենք, գրում էք, գրում են:

Անկատ. գրում էի, գրում էիր, գրում էր.
գրում էինք, գրում էիք, գրում էին

Կատար. գրեցի, գրեցիր, գրեց.

գրեցինք, գրեցիք, գրեցին:

Վաղակ. գրել եմ, գրել ես, գրել է.

գրել ենք, գրել էք, գրել են.

Գերակ. գրել էի, գրել էիր, գրել էր.
 գրել էինք, գրել էիք, գրել էին.
 Ապառ. կրգրեմ, կրգրես, կրգրէ.
 կրգրենք, կրգրէք, կրգրենս.
 Պայմ. ապ. կրգրէի, կրգրէիր, կրգրէր.
 կրգրէինք, կրգրէիք, կրգրէին.
 Հրամայական՝ գրիր (է). գրեալք.
 Ստորադասական՝ որ, թէ, եթէ՝
 Ապառնի՝ գր-եմ, գր-ես, գրէ.
 գր-ենք, գր-էք, գրենս.
 Անկատ. գր-էի, գրէիր, գրէր.
 գրէինք, գրէիք, գրէին.
 Գերբայ՝ գրել, գրող, գրել—գրած, գրելու:

156. Ուշադրութեամբ քննեցէք խոնարհած բայը և բացատրեցէք ժամանակների կազմութիւնը:

157. Սոյն օրինակով խոնարհեցէք հետևեալ չէզոք բայերը՝ վազել, բայել, սպասել, պարապել:

158. Գրեցէք հետևեալ ներգործական բայերի անցեալ կատարեալը, ապառնին, անցեալ դերբայը, հրամայականը.— հանել, կանչել, գովել, ուզել, բռնել, ժողովել, ազատել, փրկել, սպանել, դատարկել, արծակել, կապել, բեռնել, համարել—թուել:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Լ Ծ Ո Ր Դ Ո Ի Թ Ի Ի Ն

§ 193. Երկրորդ լծորդութիւնը կազմում են ըլ վերջացած բոլոր ներգործական և չէզոք բայերը:

Երկրորդ լծորդութեան անցեալ կատարեալը վերջաւորում է նցայ. մնացած ժամանակների կազմութիւնը առաջին լծորդութեան պէս է:

Սահմանական նղսնակ՝
 Ներկայ՝ նստում եմ, նստում ես, նստում է.
 նստում ենք, նստում էք, նստում են:

Անկատար՝ նստում էի, նստում էիր, նստում էր.
 նստում էինք, նստում էիք, նստում էին:

Կատարեալ՝ նստեցայ, նստեցար, նստեցաւ.
 նստեցանք, նստեցաք, նստեցանս:

Վաղակատ. նստել եմ, նստել ես, նստել է.
 նստել ենք, նստել էք, նստել ենս:

Գերակատ. նստել էի, նստել էիր, նստել էր.
 նստել էինք, նստել էիք, նստել էին:

Ապառնի՝ կընստիմ, կընստիս, կընստի.
 կընստինք, կընստիք կընստինս:

Պայմ. ապ. կընստէի, կընստէիր, կընստէր.
 կընստէինք, կընստէիք, կընստէին:

Հրամայական՝ նստիր (է). նստեցէք:
 Ստորադասական՝ որ, թէ, եթէ՝

Ապառնի՝ նստիմ, նստիս, նստի.
 նստինք, նստիք, նստինս:

Անկատար՝ նստէի, նստէիր, նստէր.
 նստէինք, նստէիք, նստէին:

Գերբայ՝ նստիլ, նստող, նստել—նստած, նստելու:

§ 194. Երկրորդ լծորդութեան բայերը խոնարհում են նաև առաջին լծորդութեան բայերի պէս:

159. Հետևեալ ներգործական բայերը խոնարհեցէք երկու ձևով՝ ա. և բ. լծորդութեան տակ՝ հաւանիլ, սովորիլ:

160. Համեմատեցէք երկրորդ լծորդութիւնը առաջին լծորդութեան հետ և բացատրեցէք նոցա նմանութիւնն ու տարբերութիւնը:

161. Սոնարհեցէք հետևեալ բայերը կատարեալ, վաղակատար, գերակատար և ստորադասականի բոլոր ժամանակներով.— Պօսիլ, ապրիլ, աշխատիլ, կանգնիլ, բնակիլ, պատկիլ, յօգնիլ, սովորիլ, ձաղկիլ, քրտնիլ, յաջողիլ...

162. Սոնարհեցէք ըլ վերջացած հետևեալ չէզոք բայերը առաջին լծորդութեան պէս՝ կարմրիլ, սպիտակիլ, պատահիլ, ցաւիլ, դադարիլ, հաւանիլ, պարապիլ...

163. Գտէք ձեր ընթերցանութեան դասի մէջ առաջին և երկրորդ լծորդութեան բայերը և իմացէք նոցա սեռը, եղանակը, ժամանակը, թիւը և դէմքը:

Ե Ր Ր Ո Ր Գ Լ Ծ Ո Ր Գ Ո Ի Թ Ի Ի Ն

§ 195. Երրորդ լծորդութիւնը կազմում են ալ վերջացած բայերը: Այս լծորդութեան անցեալ կատարեալը լինում է ացի, հրամայականը—ան, անցեալ դերբայը—ացել—ացած: Մնացած ժամանակների կազմութիւնը նախընթացների պէս է:

Սահմանական եղանակ՝

- Ներկայ՝ կարդում եմ, կարդում ես, կարդում է. կարդում ենք, կարդում էք, կարդում են:
- Անկատար՝ կարդում էի, կարդում էիր, կարդում էր. կարդում էինք, կարդում էիք, կարդում էին:
- Կատարեալ՝ կարդացի, կարդացիր, կարդաց. կարդացինք, կարդացիք, կարդացին:
- Վաղակատ. կարդացել եմ, կարդացել ես, կարդացել է. կարդացել ենք, կարդացել էք, կարդացել են:
- Գերակատ. կարդացել էի, կարդացել էիր, կարդացել էր. կարդացել էինք, կարդացել էիք, կարդացել էին:
- Ապառնի՝ կրկարդամ, կրկարդաս, կրկարդայ. կրկարդանք, կրկարդաք, կրկարդան:
- Պայմ. ան. կրկարդայի, կրկարդայիր, կրկարդար. կրկարդայինք, կրկարդայիք, կրկարդային:
- Հրամայական՝ կարդա՛. կարդացէ՛ք:
- Ստորադասական՝ որ, թէ, եթէ՛
- Ապառնի՝ կարդամ, կարդաս, կարդա. կարդանք, կարդաք, կարդան:

- Անկատար՝ կարդայի, կարդայիր, կարդար. կարդայինք, կարդայիք, կարդային:
- Դերբայ՝ կարդալ, կարդացող, կարդացել—ցած, կարդալու:

164. Խոնարհեցէք հետեւեալ ներգործական բայերը՝ աղալ, դգալ, հաւատալ, ողբալ, մուրալ...

165. Գրեցէք անցեալ դերբայը, վաղակատարը և գերակատարը հետեւեալ չէզոք բայերի՝ մնալ, գնալ, գոռալ, յուսալ:

166. Գրեցէք սահմանական ապառնի և ստորադասական ապառնի ժամանակներով հետեւեալ չէզոք բայերը՝ խղճալ, հազալ, անսալ:

167. Գրեցէք բոլոր եղանակներով և ժամանակներով հետեւեալ բայերը՝ ջանալ, խնդալ, խաղալ...

Չ Ո Ր Ր Ո Ր Գ Լ Ծ Ո Ր Գ Ո Ի Թ Ի Ի Ն

§ 196. Չորրորդ լծորդութիւնը կազմում են անալ վերջացած բայերը:

Չորրորդ լծորդութեան անցեալ կատարեալը վերջաւորում է ացայ, հրամայականը ացիր, անցեալ դերբայը ացել—ացած:

Սահմանական եղանակ՝

- Ներկայ՝ իմանում եմ, իմանում ես, իմանում է. իմանում ենք, իմանում էք, իմանում են:
- Անկատար՝ իմանում էի, իմանում էիր, իմանում էր. իմանում էինք, իմանում էիք, իմանում էին:
- Կատարեալ՝ իմացայ, իմացար, իմացաւ. իմացանք, իմացաք, իմացան:
- Վաղակատ. իմացել եմ, իմացել ես, իմացել է. իմացել ենք, իմացել էք, իմացել են:
- Գերակատ. իմացել էի, իմացել էիր, իմացել էր. իմացել էինք, իմացել էիք, իմացել էին:

Ապառնի՝ կ'իմանամ, կ'իմանաս, կ'իմանայ.
 կ'իմանանք, կ'իմանաք, կ'իմանան:

Պայմ. ապ. կ'իմանայի, կ'իմանայիր, կ'իմանար.
 կ'իմանայինք, կ'իմանայիք, կ'իմանային:

Հրամայական եղանակ՝ իմացիր. իմացէք:

Ստորադասական եղանակ՝ որ, թէ, եթէ՝

Ապառնի՝ իմանամ, իմանաս, իմանայ.
 իմանանք, իմանաք, իմանան:

Անկատար՝ իմանայի, իմանայիր, իմանար.
 իմանայինք, իմանայիք, իմանային:

Դերըայ՝ իմանալ, իմացող, իմացել—ցած, իմանալու:

168. Բոլոր լծորդութիւնները համեմատեցէք միմեանց հետ և բացատրեցէք, թէ որ ժամանակներովն են տարբերում իրարից:

169. Բացատրեցէք սահմանականի, պարզ ապառնիի և պայմ. ապառնիի կազմութիւնը և նոցա տարբերութիւնը ստորադասական ապառնիից և անկատարից բոլոր լծորդութիւնների մէջ:

170. Խոնարհեցէք վախիլ և վախենալ բայերը համեմատական կերպով, զուգընթացաբար:

171. Սահմանական եղանակի բոլոր ժամանակներով խոնարհեցէք հետևեալ ներգործական բայերը՝ մոռանալ, խոստանալ, գիտենալ, գողանալ, ընթեռնուլ—ընթերցայ *):

172. Խոնարհեցէք մնացած եղանակներով հետևեալ չէզոք բայերը՝ ուրախանալ, զարմանալ, բարձրանալ, մեծանալ, փոքրանալ, հարստանալ...

ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

§ 197. Կրաւորական բայերը ծագում են ներգործական բայերից՝ անցեալ դերբայի առաջին ձևը անխտիր ուիլ դարձնելով, օրինակ.

*) Միակ բայն է, որ պահել է գրարարի ու վերջաւորութիւնը, եթէ չիշենք միջանի բայեր ևս, որո՞ք սրա նման գործածական չեն՝ զգնուլ, թողուլ (զգնեալ, թողել, կամ թողնել):

Լծորդ.	Ներգ.	Դերբայ.	Կրաւոր.
ա.	սիրել	սիրել	սիր-ուիլ
բ.	հաւանիլ	հաւանել	հաւան-ուիլ
գ.	կարդալ	կարդացել	կարդաց-ուիլ
դ.	մոռանալ	մոռացել	մոռաց-ուիլ

§ 198. Ամենայն բայ՝ որի վերջաւորութիւնը կարելի չլինի սոյն ձևով փոփոխել, չէզոք է. փոփոխուողները ներգործական են:

§ 199. Անորոշ դերբայը այսպէս կազմելուց յետոյ՝ բոլոր կրաւորական բայերը խոնարհելու է երկրորդ լծորդութեան տակ:

Սահմանական եղանակ՝

Ներկայ՝ սիրում եմ, հաւանում եմ.
 կարդացում եմ, մոռացում եմ:

Անկատար՝ սիրում էի, հաւանում էի.
 կարդացում էի, մոռացում էի:

Կատարեալ՝ սիրուեցայ, հաւանուեցայ.
 կարդացուեցայ, մոռացուեցայ *):

Վաղակատ. սիրուել եմ, հաւանուել եմ.
 կարդացուել եմ, մոռացուել եմ:

Դերակատ. սիրուել էի, հաւանուել էի.
 կարդացուել էի, մոռացուել էի:

Ապառնի՝ կըսիրուիմ, կըհաւանուիմ.
 կըկարդացուիմ, կըմոռացուիմ:

Պայմ. ապ. կըսիրուէի, կըհաւանուէի.
 կըկարդացուէի, կըմոռացուէի:

Հրամայակ. սիրուիր (է), հաւանուիր.
 կարդացուիր, մոռացուիր:

*) Կամ առաջին լծորդութեան վերջաւորութեամբ՝ սիրուցի, սիրուցիք, սիրուց:

Ստորադասական՝ որ, թէ, եթէ՝
 Ապառնի՝ սիրուիմ, հաւանուիմ.
 կարգացուիմ, մոռացուիմ:
 Անկատար՝ սիրուէի, հաւանուէի.
 կարգացուէի, մոռացուէի:
 Գերբայ՝ սիրուիլ, հաւանուիլ.
 կարգացուիլ, մոռացուիլ:

173. Խոնարհեցէք նշանակեալ բայերը բոլոր ժամանակներով:—Գրաւոր:

174. Իմացէք, թէ հետեւեալ բայերից որոնք են ներգործական և որոնք չէզոր.—կարգալ, հաւատալ, գողանալ, իմանալ, մարգարէանալ, մոռանալ, յղանալ, ծնել, չափել, հազալ, որսալ, զարմանալ, հարբիլ, բարկանալ, գորանալ, թշնամանալ, ծուլանալ, գողալ, հոգալ, յուսալ, ջանալ, ցնծալ, ազդել, աղաչել, այրել, բռնել, կարել, հրամայել, մատնել, յայտնել, շարժել, շինել, շնչել, փրկել, քաջալերել, բաժանել, դարմանել, խափանել, կործանել, յանդիմանել, սերմանել, հալածել, վռնդել, համնիլ, աղաղակել, ամաչել, գոչել, դիմել, սպառել, թագաւորել, տիրել, կանչել, կանաչիլ, մնչալ, մոնչալ, կտրել, կտորել, վարել, քանդել, փորել, ազալ, աղել, ճղել, քարել, տաշել, ջարդել, հալածել, մղել, փրկել, սպանել, անցնիլ, իջնիլ, ելնել, համնիլ, մտնել, համբերել, յուսահատիլ, վհատիլ, դաւանել, խոստովանել, խորհել, կամենալ, նայիլ, ջնջել, բանալ, աշխատիլ, բնակիլ, գաղարիլ, հրաժարիլ, պակասիլ, արգելել, արձակել, դիզել, կարկատել, գործել, գանիլ:

175. Վերոյիշեալ բայերից ներգործականները գրեցէք կրաւորականի վերջաւորութեամբ:

Ա Ն Կ Ա Ն Ո Ն Խ Ո Ն Ա Ր Հ Մ Ո Ի Ն Ք

§ 200. Այն բայերը՝ որոնց սահմանականի կատարեալը, հրամայականը և անցեալ դերբայը մեր սովորած ձևերից չեղուում են, կոչուում են անկանոն բայեր: Անկանոն բայերը երկու կարգի են բաժանուում՝ կէս զարտուղիք և բուն զարտուղիք:

Դասընթաց Լ 105

§ 201. Կէս զարտուղիք են բոլոր նել, նիլ, նալ վերջաւորութեամբ բայերը, որոնք խոնարհուում են չորրորդ լծորդութեան պէս, բայց անկանոն ժամանակներումը ն տառը փոխանակ ց-ի փոխելով՝ իբրև եկամուտ տառ, դուրս են ձգուում:—Կրաւորականը կանոնաւոր է և ն տառը պահուում է:

Օրինակներ՝

- 176. Գտնել, գտայ, գտիր, գտել—գտած:
- Տեսնել, տեսայ, տես, տեսիլ—տեսած:
- Մանել, մտայ, մտիր, մտել—մտած:
- Լինիլ, եղայ, եղիր, եղել—եղած:
- Իրանալ, դարձայ, դարձիր, դարձել—դարձած:
- Քառնալ, դառայ, դառ, դառել—դառած:
- Հեծնել, հեծայ, հեծիր, հեծել—հեծած:
- Իջնիլ, իջայ, իջիր, իջել—իջած:
- Խածնել, խածայ, խածիր, խածել—խածած:
- Հասնիլ, հասայ, հասիր, հասել—հասած (հասունանալ):
- Համնիլ, հասայ, հասիր, հասել—հասած (հասանիլ):
- Բուսնիլ, բուսայ, բուսիր, բուսել—բուսած:
- Անցնիլ, անցայ, անցիր, անցել—անցած:
- Հագնիլ, հագայ, հագիր, հագել—հագած:
- Մեռնիլ, մեռայ, մեռիր, մեռել—մեռած:
- Ծնանիլ, ծնայ, ծնիր, ծնել—ծնած:
- Զբօսնիլ (ուլ), զբօսայ, զբօսիր, զբօսել—զբօսած (անգործական):
- Երդուել (նուլ), երդուայ, երդուիր, երդուել—երդուած:
- Ընկնիլ, ընկայ, ընկիր, ընկել—ընկած:

177. Խոնարհեցէք ծնել, ծնուիլ և համեմատեցէք ծնանիլ բայի հետ, որ միևնոյն ժամանակ ներգործական է, կրաւորական և չէզոր:

178. Խոնարհեցէք զտնել, տեսնել և հագնիլ բայերի կրաւորականը:

179. Գրաւոր ներկայացրէք վերոյիշեալ բայերի սահմանականի կատարեալ, վաղակատար, գերակատար ժամանակները բոլոր գէմբերով:

180. Գրեցէք նոյն բայերի ապառնին և ստորագասականը բոլոր գէմքերով:

202. Այսպէս խոնարհուում են շիւ վերջացած բայերը, որոնց չ տառը ևս եկամուտ լինելով, դուրս է ձգուում.

Թռչիլ, թռայ, թռիլ, թռել—թռած:

Փլչիլ, փլայ, փլիլ, փլել—փլած:

Դիպչիլ, դիպայ, դիպիլ, դիպել—դիպած:

Կպչիլ, կպայ, կպիլ, կպել—կպած:

Կորչիլ, կորայ, կորիլ, կորել—կորած:

181. Զուգընթացաբար խոնարհեցէք հաչիլ և կպչիլ բայերը և բացատրեցէք, թէ ինչո՞ւ առաջին բայը պահում է չ տառը, իսկ երկրորդը՝ ոչ:

182. Խոնարհեցէք գրաւոր՝ պաշել, կոչել, կանչել բայերը, որոնց չ տառը եկամուտ է, այլ արմատական:

§ 203. Հետևեալ բուն գարտուղի բայերը խոնարհման երկու ձև ունին, որոնցից առաջինը՝ անկանոնը, աւելի գործածական է: Սոցա կրաւորականները ևս կանոնաւոր են:

ա. Բերել կրաւորական ընրուիլ.

Կատարեալ՝ Բերի, բերիլ, բերաւ. բերինք, բերիք, բերին:

Կատարեալ՝ բերեցի, բերեցիր, բերեց. բերեցինք, բերեցիք, բերեցին:

բեր. բերէք, բերեցէք. բերած:

բ. Ասել—ասուիլ.

Ասի, ասիլ, ասաւ. ասինք, ասիք, ասին:

Ասացի, ասացիր, ասաց. ասացինք, ասացիք, ասացին:

Ասան, ասիր, ասէք, ասացէք. ասած—ասել:

գ. Անել, անուիլ կամ արուիլ.

Արի, արիլ, արաւ. արինք, արիք, արին:

Արեցի, արեցիր, արեց. արեցինք, արեցիք, արեցին:

Արան, արէք, արեցէք. արել—արած:

դ. Դնել—նուիլ կամ ղըուիլ:

Դրի, դրիլ, դրաւ. դրինք, դրիք, դրին:

Դրեցի, դրեցիր, դրեց. դրեցինք, դրեցիք, դրեցին:

Դիր. դրէք, դրեցէք. դրել—դրած:

ե. Աննել—անուիլ (գնել).

Առայ, առար, առաւ. առանք, առարք, առան:

Առ, առէք. առել—առած:

զ. Տաննել—տանուիլ կամ տարուիլ.

Տարայ, տարար, տարաւ. տարանք, տարարք, տարան:

Տարի, տարիլ, տարաւ. տարինք, տարիք, տարին:

Տար. տարէք. տարել—տարած:

է. Բանալ*), ըսցուիլ.

Բացի, բացիր, բացաւ. բացինք, բացիք, բացին:

Բացեցի, բացեցիր, բացեց. բացեցինք, բացեցիք,

բացեցին:

Բաց, բացիլ. բացէք, բացեցէք. բացել—բացած:

ը. Նստիլ.

Նստայ, նստար, նստաւ. նստանք, նստարք, նստան:

Նստեցի, նստեցիր, նստեց. նստեցինք, նստեցիք,

նստեցին:

Նիստ, նստիլ. նստէք, նստեցէք. նստել—նստած:

թ. Թողնել—թողնուիլ կամ թողնել—թողուիլ.

Թողի, թողիր, թողաւ. թողինք, թողիք, թողին:

Թողեցի, թողեցիր, թողեց. թողեցինք, թողեցիք,

թողեցին:

Թող. թողէք, թողեցէք. թողել—թողած:

ժ. Երդնուլ կամ երդուիլ (գործ է ածուում երդում ուտել).

*) Ներկան անգործածական է. չենք ասում՝ բանում եմ, բանում ես, բանում է, այլ բաց եմ անում... դաշտումը բանում եմ—բան եմ անում դաշտումը. դուրը բանում եմ—դուրը բաց եմ անում (բանել բայը կանոնաւոր է):

Երգուայ, երգուար, երգուաւ. երգուանք, երգուաք, երգուան:

Երգուեցայ, երգուեցար, երգուեցաւ. երգուեցանք, երգուեցաք, երգուեցան:

Երգուիր. երգուեցէք. երգուել—երգուած:

Ժա. Սկսել—սկսուիլ.

Սկսայ, սկսար, սկսաւ. սկսանք, սկսաք, սկսան:

Սկսեցի, սկսեցիր, սկսեց. սկսեցինք, սկսեցիք, սկսեցին:

Սկսիր. սկսէք, սկսեցէք. սկսած,—ել:

Ժբ. Պրծնիլ—պրծնուիլ (ն եկամուտ).

Պրծայ, պրծար, պրծաւ. պրծանք, պրծաք, պրծան:

Պրծիր. պրծէք. պրծել—ած:

183. Վերոյիշեալ բայերից իւրաքանչիւրը խոնարհեցէք բոլոր ժամանակներով (գրաւոր):

184. Ներգործականների կրաւորականները խոնարհեցէք բերանացի:

185. Անցեալ կատարեալի բոլոր գէւքերով նախադասութիւններ գրեցէք առաջին վեց բայերի վրայ:

186. Նոյն ձևով մնացած բայերի վրայ:

§ 204. Երկու բայ կայ, որոնց անցեալ կատարեալը ուրիշ արմատից է շինուում. ուրեմն նոքա գլխովին անկանոն են: Կրաւորականը կանոնաւոր է:

ա. Ուտել—ուտուիլ կամ կերուիլ.

Կերայ, կերար, կերաւ. կերանք, կերաք, կերան:

Կեր. կերէք. ուտող—կերող. կերել—կերած:

բ. Գալ.

Եկայ, եկար, եկաւ. եկանք, եկաք, եկան:

Ե՛կ. եկէք. եկող. եկել—եկած:

§ 205. Գալ, լալ և տալ բայերի սահմանականի ներկան և անկատարը ևս անկանոն են, այն է՝ փոխանակ սովորական ում՝ վերջաւորութեան, անորոշ գերբայի վրայ

առնում են իս վերջաւորութիւնը. —Գալիս եմ, գալիս ես, գալիս է:

Տալ^{*})—տալիս եմ, տալիս ես, տալիս է. տալիս ենք, տալիս էք, տալիս են:

Տալ—տուի, տուիր, տուաւ. տուինք, տուիք, տուին:

Տալ—տուեցի, տուեցիր, տուեց. տուեցինք, տուեցիք, տուեցին:

Տնւր. տուէք, տուեցէք. տուող. տուել—տուած:

Լալ^{**})—լալիս եմ, լալիս ես, լալիս է. լալիս ենք, լալիս էք, լալիս են:

Լալ—լացի, լացիր, լացաւ (եց). լացինք, լացիք, լացին:

Լաց. լացէք. լացող. լացել—ած:

187. Գրաւոր ներկայացրէք գալ և լալ բայերը բոլոր եղանակներով և ժամանակներով խոնարհած:

188. Տալ բայի ստորադասական անկատար և ապառնի ժամանակների վրայ նախադասութիւններ գրեցէք՝ եզակի և յոգնակի:

Գալ բայի ներկայ, անցեալ և ապառնի գերբայերից նախադասութիւններ գրեցէք, այնպէս որ գերբայերը որոշողի պաշտօն կատարած լինին:

Պ Ա Կ Ա Մ Ա Ի Ո Ր Բ Ա Յ Ե Ր

§ 206. Կան բայեր, որոնք բոլոր ժամանակները չունին: Դոքա կոչուում են պակասաւոր: Պակասաւոր բայերի պակաս ժամանակները լրանում են ուրիշ բայերով: Ահաւասիկ՝

ա. Եմ՝ էական բայը ունի միայն երկու ժամանակ՝ սահմանականի ներկան և անկատարը. եմ, էի:

*) Գրաւորականը լինում է տրուի կամ սովորէն տվուալ, որ սակաւ է գործածուում:
**) Գործ է ածուում լաց լինիլ:

բ. Կամ բայը ևս միայն երկու ժամանակ ունի՝ կամ, կայի...

Կամ և եմ բայերը լրանում են լինիմ էական բայով:

գ. Ունիմ, ունիս, ունի. ունինք, ունիք, ունին:

Ունէի, ունէիր, ունէր. ունէինք, ունէիք, ունէին:

Լրանում է ունենալ բայով:

դ. Կարենամ, կարենաս, կարենայ. կարենանք, կարենաք, կարենան:

Կարենայի, կարենայիր, կարենար. կարենայինք, կարենայիք, կարենային *):

Կարացի, կարացիր, կարաց. կարացինք, կարացիք, կարացին:

Լրանում է կարողանալ բայով:

ե. Գիտեմ, գիտես, գիտէ. գիտենք, գիտէք, գիտեն:

Գիտէի, գիտէիր, գիտէր. գիտէինք, գիտէիք, գիտէին:

Լրանում է գիտնալ բայով:

189. Պակասաւոր բայերը խոնարհեցէք և մնացած ժամանակները իրանց լրացուցիչ բայերով լրացրէք:

190. Լրացուցիչ բայերն առանձին խոնարհեցէք:

Մ Ի Ա Դ Է Մ Բ Ա Յ Ե Ր

207. Կան բայեր, որոնք միայն եղակի երրորդ դէմքով են գործ ածւում, ուստի և միայն էն կոչւում: Միադէմ բայերն իսկապէս երկու մասից են բաղկացած. երկրորդ մասն էական բայն է, իսկ առաջին մասը գոյական կամ ածական անուան միտք ունի.— Պէտք է, արժան է, հարկ է, ամօթ է, հնար է, վայել է, հերիք է, բաւ է, անկ է...

*) Ստորագասական եղանակի ապառնի և անկատար ժամանակներն են իսկապէս, որ սահմանական եղանակի ներկայ և անկատար ժամանակի տեղ են բանում:

§ 208. Միադէմ բայի մօտ ենթական տրական հորով է դրւում. շատ անգամ միադէմ բայը գործ է ածւում առանց ենթակայի և կազմում է անդէմ նախադասութիւն:

§ 209. Դիմաւոր բայերից ևս ոմանք գործ են ածւում որպէս միադէմ բայեր և անդէմ նախադասութիւն են կազմում.— Ասում են, կըլսուի, խօսուեցաւ, միջնում է, ցրտեց...

191. Հետեւալ նախադասութիւններում գտէք ենթական.— Ձեզ պէտք է աճիլ, իսկ ինձ՝ մեղմանալ: Մեզք է զրպարտել անմեղ մարդկանց: Ամօթ է, երբ մարդ չի կատարում իւր խոստումը: Հարկ է, որ որդիքը պատուեն իրանց ծնողներին: Քեզ արժան է գիտենալ քո օգուտն ու վնասը: Որքան հնար է, պէտք է շրջանկատութիւն պահպանել, որ թշնամին մէջը չմտնի: Հերիք է մեզ, որքան խարուեցանք. բաւ է, որքան դաւաճանեցին մեր հաւատարմութիւնը: Ասած է՝ սուտ ասողի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չհաւատաց: Կըլսուի՝ թէ Հայերը մեծ ջանք են անում մասնաւորապէս յառաջ գնալու: Խօսուեցաւ ու վճռուեցաւ, որ առաջ մենք գնանք, յետոյ դուք:

Բ Ա Յ Ա Ս Ա Կ Ա Ն Բ Ա Յ Ե Ր

§ 210. Երբոր բայերը գործողութեան կատարումը ժխտում են՝ չէ ասելով են մի բան կատարում, կոչւում են քացասական բայեր.— Ձեմ կարդում, չխօսեցայ, չուրախանամ, մի՛ գրիր:

Բացասական բայերին հակառակ՝ միւս բայերը կոչւում են հաստատական:

§ 211. Բացասական բայերի խոնարհումը փոքր ինչ տարբեր է հաստատական բայերի խոնարհումից:

Օրինակ՝ չլսել:

Սահմանական եղանակ.

Ներկայ՝ չեմ լսում, չես լսում, չի լսում.
չենք լսում, չէք լսում, չեն լսում:

- Անկատ. չէի լսում, չէիր լսում, չէր լսում.
չէինք լսում, չէիք լսում, չէին լսում:
- Կատարեալ՝ չլսեցի, չլսեցիր, չլսեց.
չլսեցինք, չլսեցիք, չլսեցին:
- Վաղակատ. չեմ լսել, չես լսել, չի լսել.
չենք լսել, չեք լսել, չեն լսել:
- Գերակատ. չէի լսել, չէիր լսել, չէր լսել.
չէինք լսել, չէիք լսել, չէին լսել:
- Ազատնի՝ չեմ լսիլ, չես լսիլ, չի լսիլ.
չենք լսիլ, չեք լսիլ, չեն լսիլ:
- Պայման. սալ. չէի լսիլ, չէիր լսիլ, չէր լսիլ.
չէինք լսիլ, չէիք լսիլ, չէին լսիլ:
- Հրամայակ. մի լսիր, մի խօսիր, մի կարգար, մի ու-
րախանար (մի լսիլ, մի խօսիլ).
մի լսէք, մի խօսէք, մի կարգաք, մի ու-
րախանաք:
- Ստորադաս. որ, թէ, եթէ՝
չսեմ, չսես, չսէ.
չսենք, չսեք, չսեն:
- Անկատար՝ չլսէի, չլսէիր, չլսէր.
չլսէինք, չլսէիք, չլսէին:
- Գերբայ՝ չլսել, չլսող, չլսած, չլսելու:

§ 212. Այս պատկերից երևում է՝
ա. էական բայով կազմուած ժամանակները չ մաս-
նիկն ընդունում են էական բայի վրայ և սովորապէս նա-
խադաս են վարւում.—Սօսում եմ—չեմ խօսում:
բ. Սահմանականի ապառնին շինւում է անխտիր
անորոշ դերբայից, միայն առաջին լծորդութեան բայերի
վերջաւորութիւնը ևս իլ է դառնում.—Գրել—չեմ գրիլ.
գործել—չեմ գործիլ...

դ. Պայմանական ապառնին ևս շինւում է անորոշ դեր-
բայից էական բայի անկատար ժամանակի բացասական
ձևով.—Կըզրէի—չէի դրիլ, կըկարդայի, չէի կարդալ...

դ. էական բայի եզակի երրորդ դէմքը՝ չէ, միւս բայ-
երի հետ կցուելիս փոխւում է չի՝ չի խօսում, չի գրում,
չի կարդում, չի ուրախանում. բայց կան և անփոփոխ
գրողներ՝ չէ խօսում, չէ գրում, չէ կարդում, չէ ուրախա-
նում:

ե. Մնացած ժամանակները իրանց վրայ առնում են
չ մասնիկը անխտիր:

զ. Հրամայական եղանակը չ մասնիկի փոխարէն առ-
նում է մի՛ բացասական մասնիկը:

192. Խոնարհեցէ՛ք՝ հանել, կանչել, գոչել ներգործականները
և սպասել, պարապել չեզոքները բացասական ձևով:

193. Խոնարհեցէ՛ք նոյնպէս՝ աշխատիլ, կանգնիլ, ընակիլ,
հաւանիլ, նայիլ բացասական ձևով:

194. Խոնարհեցէ՛ք նմանապէս երրորդ լծորդութեան բայերը՝
մնալ, գնալ, գոռալ, խաղալ, լինալ:

195. Խոնարհեցէ՛ք չորրորդ լծորդութեան բայերը՝ մոռանալ,
խոստանալ, վախենալ, ուրախանալ, զարմանալ:

196. Խոնարհեցէ՛ք հետեւալ կրաւորական բայերը՝ սիրուիլ,
կարգացուիլ, մոռացուիլ:

197. Խոնարհեցէ՛ք հետեւալ զարտուղի բայերը՝ բուսնիլ,
անցնիլ, դիպչիլ, կպչիլ:

§ 213. Կամ՝, եմ՝, ունիմ՝, գիտեմ՝ բայերի բացասա-
կանը առանձին կազմութիւն ունի.

- ա. Չկամ, չկաս, չկայ.
չկանք, չկաք, չկան.
- չկայի, չկայիր, չկար.
- չկայինք, չկայիք, չկային:
- բ. չեմ, չես, չէ.
չենք, չեք, չեն.

չէի, չէիր, չէր.

չէինք, չէիք, չէին:

գ. չունիմ, չունիս, չունի.

չունինք, չունիք, չունին.

չունէի, չունէիր, չունէր.

չունէինք, չունէիք, չունէին:

դ. չգիտեմ, չգիտես, չգիտէ.

չգիտենք, չգիտէք, չգիտեն.

չգիտէի, չգիտէիր, չգիտէր.

չգիտէինք, չգիտէիք, չգիտէին:

Ա Ն Յ Ո Ղ Ա Կ Ա Ն Բ Ա Յ Ե Ր

ա. Կարգալ, խօսիլ, ուտել, մոռանալ:

բ. Կարգ—ացնել, խօս—եցնել, ուտ—ացնել, մոռ—ացնել:

գ. Կարգալ տալ, խօսիլ տալ, ուտել տալ, մոռանալ տալ:

դ. Կարգացնել տալ, խօսեցնել տալ, ուտացնել տալ, մոռացնել տալ:

§ 214. Առաջին տողի բայերը ներգործական են:

Երկրորդ տողի բայերը շինուած են նոյն ներգործականներէից և ցոյց են տալիս, որ գործողութիւնը ոչ թէ ներգործում է իւր մօտաւոր առարկային անմիջապէս, այլ անցնում է նրան օտարի ձեռքով: Այդ տեսակ բայերը կոչուած են անցողական:

Անցողական բայերը շինուած են ներգործական բայերից, նոցա արմատին կցելով ցըննել կամ ցննել մասնիկը ա կամ ն յօդակապով:

§ 215. Անցողական բայերի տեղ կարող են գործածուիլ ներգործական բայերը տալ բայի հետ.—Կարգալ տալ, խօսիլ տալ, ուտել տալ, մոռանալ տալ:

Իսկ եթէ տալ բայը աւելացնենք անցողական բայերին, կրկին անցողական կրտսանանք.—Կարգացնել տալ, խօսեցնել տալ, ուտացնել տալ, մոռացնել տալ:

ա. Մեանիլ, յոգնիլ, կորչիլ, թռչիլ:

բ. Մեռ—ցնել, յոգն—եցնել, կոր—ցնել, թռ—ցնել:

§ 216. Յննել մասնիկը՝ որ ներգործական բայը անցողական է դարձնում, չէզոք բայերի վրայ դրուելով՝ նոցա պարզ ներգործական է շինում. մնոցնել, յոգնեցնել, կորցնել, թոցնել, ոչ թէ ուրիշի ձեռքով, այլ անմիջապէս:

Այս ներգործականներն անցողական անելու համար, պէտք է մօտը դնել տալ բայը.—Մեռցնել տալ, յոգնեցնել տալ, կորցնել տալ, թոցնել տալ:

§ 217. Անցողական բայերը խոնարհուած են առաջին լծորդութեան պէս, միայն կատարեալ ժամանակում ցննել մասնիկի ն տառը փոխուած է ը. կարգացրի, կարգացրիր, կարգացրեց... իսկ հրամայականը ն տառը փոխելուց զատ՝ վերջը ն է ունենում. կարգացրո՛ւ:

198. Հետեւեալ ներգործական բայերը անցողական շինեցէք և խոնարհեցէք.—Հաւատալ, խմել, հասնիլ, մոռանալ, հաւանիլ, ճանաչել, կարգալ, սովորիլ, ուտել...

199. Միևնոյն բայերը տալ բայով կրկին անցողական շինեցէք և խոնարհեցէք:

Հետեւեալ չէզոք բայերը շինեցէք ներգործական և խոնարհեցէք՝ մեանիլ, յոգնիլ, կորչիլ, խաղալ, կպչիլ, թռչիլ, մեծանալ, լաւանալ, հիւանդանալ:

200. Միևնոյն բայերը անցողական շինեցէք և խոնարհեցէք:

201. Հետեւեալ բայերը անցողական շինեցէք՝ չափել, ազդել, ազաչել, այրել, բռնել, կարել, հրամայել, յանդիմանել, սերմել, հալածել, վռնդել:

202. Խոնարհեցէք հետեւեալ բարդ բայերը՝ ներս մտնել, գուրս դնալ, վազ տալ, վրայ տալ, որս անել, գործ ածել, հոգս քաշել, ջանք անել:

Դ Ե Ր Բ Ա Յ

§ 218. Դերբայերը չորս են՝ ա. անորոշ դերբայ կամ աներևոյթ եղանակ, բ. ներկայ դերբայ կամ ընդունելութիւն ներկայ, գ. անցեալ դերբայ, դ. ապառնի դերբայ:

§ 219. Անորոշ դերբայը վարւում է՝ ա. իբրև բայ և բ. իբրև գոյական անուն:

Նա բայ է, երբ մօտը մի ուրիշ զիմաւոր բայ ունի և նախադասութեան մէջ լրացնողի կամ ենթակայի պաշտօն չի կատարում, այլ ինքն ունենում է իրան լրացնողը կամ ենթական. ուզում եմ զնալ և վարժապետիցս ներողութիւն խնդրել. այսինքն ուզում եմ զնամ և վարժապետիցս ներողութիւն խնդրեմ:

§ 220. Անորոշ դերբայը գոյական է, երբ նախադասութեան մէջ կատարում է լրացնողի, որոշողի և ենթակայի պաշտօն: Այս դիպուածում նա՝ որպէս հասարակ գոյական անուն, հոլովում է երկրորդ հոլովման պէս՝ կարգալ, կարդալու, կարդալուց, կարդալով, կարդալով:

ա. Կարդալը լաւ բան է. (ի՛նչը) — ընթերցանութիւնը (ենթակայ):

բ. Կարդալու գիրքս գեղեցիկ է — ընթերցանութեան (որոշող):

գ. Գիրքը կարդալու է որոշուած — ընթերցանութեան (տրական և լրացնող):

դ. Կարդալուց մարդ բաւականութիւն է ստանում — ընթերցանութիւնից (երկ. լրացնող):

ե. Կարդալով մենք բաւականութիւն ենք տալիս մեր հարցասիրութեանը — ընթերցանութեամբ (երկ. լրացնող):

զ. Կարդալում ոմանք բաւականութիւն չեն գտնում — ընթերցանութիւնում (լրացնող):

§ 221. Ներկայ դերբայը գործ է ածւում իբրև բայ և իբրև ածական անուն:

Իբրև բայ ներկայ դերբայը գործ է ածւում միայն էական բայի օգնութեամբ (տես վարը): Իբրև ածական անուն՝ նա միշտ դրւում է գոյականի մօտ և պարզ ածականի պէս նրան որոշում է, հետևապէս կարող է յօդ առնել և հոլովուիլ իբրև սովորական ածական անուն: Խոտ հնձող մշակները գերանդիներն առան և մտան մարգագետինը — խոտ հնձողները գերանդիներն առան...

§ 222. Անցեալ դերբայը երկու վերջաւորութիւն ունի՝ ած — ել (երբեմն եալ): Ել վերջաւորութիւնը զիմաւոր բայերից անբաժան է գործ ածւում, կազմելով վաղակատար և գերակատար ժամանակները, ինչպէս տեսանք բայերի մէջ: Եալ վերջաւորութիւնը զրաբարի մնացորդ է և աշխարհաբարում գործ է ածւում որպէս հասարակ ածական՝ սիրեցեալ, մեռեալ, ննջեցեալ, հանգուցեալ (շատ հազիւ իբրև դերբայ՝ սկսեալ այն օրից — սկսած այն օրից):

§ 223. Ած անցեալը երեք կերպ գործածութիւն ունի: ա. Նա բայ է, երբ նախադասութեան մէջ առնում է ենթակայ կամ լրացնող. — Հայոց զօրքը Տղմուս գեան անցած՝ պատերազմն սկսեցին — անցան և սկսեցին: Կէս օրից մէկ ժամ՝ մնացած՝ մենք քաղաք հասանք — մէկ ժամ էր մնացել: Զուրը չհատած՝ ոտներդ մի՛ հանիր — մինչև չես հասել:

բ. Ած անցեալը՝ եթէ մօտը որևիցէ գոյական ունի, որին որոշում է, ածական է՝ կարդացած գիրքս, կերած հացս, խմած շուրս, աշխատած փողս...

գ. Ած անցեալը՝ եթէ հոլովում է և նախադասութեան մէջ կատարում է լրացնողի, ենթակայի և որոշողի պաշտօն, գոյական է:

ա. Գրածը ջնջուեցաւ — գրութիւնը (ենթակայ):

- բ. Գրածի կէսն անգիր արեց—գրութեան (որոշող):
- գ. Ուշք ու միտքը գրածին էր նուիրել—գրութեանը:
- դ. Գրածը չհաւանեց վարժապետը—գրութիւնը:
- ե. Գրածից արտագրեցի մի երես—գրութիւնից:
- զ. Գրածով հաստատեց իւր ասածը—գրութիւնով:
- է. Գրածում մի շնչուած տառ չկար—գրութիւնում:

§ 224. Ապառնի գերբայը (լու) անորոշ դերբայի սեռականն է և միշտ ածական որոշողի պաշտօն է կատարում՝ ուտելու հաց, խմելու ջուր, կարդալու գիրք...

Երբեմն լու ապառնու տեղ գործ է ածուում լի վերջաւորութեամբ ապառնի, առաւելապէս կոչական բառերում՝ սիրելի եղբայր, պատուելի բարեկամ...

Լի երբեմն գործ է ածուում, երբ գոյականը գորութեամբ է գրուած. այդ ժամանակ նա յօդ է առնում և յօգնակի թուով է վարուում՝ ասելիքը ասա (ասելու բաներդ): Դու քո անելիքը արա:

§ 225. Ապառնի գերբայը դիմաւոր բայի տեղ գրուած պիտի համարուի, եթէ նպատակ ցոյց տուող պարագայականի պաշտօն լինի կատարած՝ ես գնում եմ կարդալու (որ կարդամ): Ձինորսը գնաց ձուկը որսալու (որ ձուկը որսայ):

226. Բոլոր գերբայերը, բացի անորոշից, էական բայերի օգնութեամբ խոնարհուում են բոլոր ժամանակներով և գործ են ածուում դիմաւոր բայերի տեղ:

Դերբայերի պէս էական բայերի օգնութեամբ կարող են խոնարհուիլ և ածական ու գոյական անունները. գերբայերը նրանով են տարբերուում միայն, որ առանց էական բայերի էլ իրանք գործողութիւն ունին իրանց մէջ: Ահաւասիկ մի ընդհանուր օրինակ.

Սահմանական եղանակ՝

Ներկայ՝ մարդ եմ, ծոյլ եմ, գրած եմ^{*}), գրող եմ, գրելու եմ:

Անկատար՝ մարդ էի, ծոյլ էի, գրած էի, գրող էի, գրելու էի,

կատարեալ՝ մարդ եղայ, ծոյլ եղայ, գրած եղայ, գրող եղայ, գրելու եղայ:

Վաղակատ. մարդ եմ եղել, ծոյլ եմ եղել, գրած եմ եղել, գրող եմ եղել, գրելու եմ եղել:

Գերակատ. մարդ էի եղել, ծոյլ էի եղել, գրած էի եղել, գրող էի եղել, գրելու էի եղել:

Ապառնի՝ մարդ կըլինիմ, ծոյլ կըլինիմ, գրած կըլինիմ, գրող կըլինիմ, գրելու կըլինիմ:

Պայմ. ապ. մարդ կըլինէի, ծոյլ կըլինէի, գրած կըլինէի, գրող կըլինէի, գրելու կըլինէի:

Նրամայական՝ մարդ եղիր, ծոյլ եղիր, գրած եղիր, գրող եղիր, գրելու եղիր:

Ստորադասական՝ թէ, եթէ, որ՝

Ապառնի՝ մարդ լինիմ, ծոյլ լինիմ, գրած լինիմ, գրող լինիմ, գրելու լինիմ:

Անկատար՝ մարդ լինէի, ծոյլ լինէի, գրած լինէի, գրող լինէի, գրելու լինէի:

Դերբայ՝ մարդ լինիլ, ծոյլ լինիլ, գրած լինիլ, գրող լինիլ, գրելու լինիլ:

^{*} Ի հարկէ սա՝ որպէս անցած գործողութիւն, միայն ձևով ներկայ է, իսկ գաղափարով կրճատ անցեալ և գործ կ'ածուի վաղակատարի և գերակատարի մտքով, ինչպէս որ գրող նմ է պարզ ներկայ է, իսկ գրելու նմ պարզ ապառնի: Բայց և այնպէս՝ աշակերտների զերութեան համար ամենայրմարն է այս ձևը պահպանել, ապա թէ ոչ ժամանակների այնպիսի խառնաշփոթութիւն կըտանանք, որից մանուկներին հանել անհնարին կըլինի: Մեր առաջարկած ձևով՝ բաւական է աշակերտներին բացատրել, օրինակ՝ որ անցեալ դերբայի ներկան ու անկատարը դիմաւոր բայի վաղակատարի և գերակատարի ոյժ ունին, իսկ ապառնի դերբայի ներկան և անկատարը դիմաւոր բայի ապառնի և պայմանականի մտքով են վարուում: Վերջումս պէտք է՝ գրած նմ՝ անցեալ դերբայ նմ էական բայի ներկայ ժամանակով գրելու էի ապառնի դերբայի նմ էական բայի անկատար ժամանակով:

Մ Ա Կ Բ Ա Յ

§ 227. Մակբայերը, իրանց կազմութեանը նայելով, երկու են՝ բուն մակբայեր և բանի միւս մասունքներից առնուած մակբայեր:

Բուն մակբայերը կամ պարզ բառեր են՝ ստէպ, յաժախ, ուր, նրբ... կամ առանձին մակբայակերտ մասնիկներով շինուած ածանցական բառեր՝ մեծապէս, քաջաբար, առատօրէն, սրտանց, սաստիկ, բնաւ, կամայ, ակամայ...

203. Հետեւել օրինակների մէջ գտէք մակբայերը և իրանց նշանակութեան համեմատ առանձին խմբերի բաժանեցէք, համաձայն § 116-ի:

ԻՆչպէս գեղեցիկ էր երգում սոխակը: Հագիւ մթնել էր և ահա մեզ սաստիկ տանջում էր ցուրտն ու անձրերը: Կարնաւորներին ըննի բանտը տարան: Հայ նախարարներին ընկալար գերի վարեցին: Կրակը շուտ հանգաւ և հրշէջները յետ գնացին: Ես գիտեմ հայերէն, ռուսերէն և վրացեվար կարգաւ և գրել: Մէկդի կանգնեցէք, պաշտպանուեցէք քաջաբար և կամաւ անձնատուր մի լինիք: Յողթուելուց յետոյ կամայ-ակամայ տուինք մեր զէնքերը: Կամաց գնացէք, մենք էլ շուտով կըգանք: Ամենեւին չնկատեցի, թէ դու ճետն էիր: Նա թուրքովին չէր պատրաստել դասերը: Բնաւ չէի կարծում, թէ դու իսպառ կը մոռանաս անելիքդ: Է՛լ աւելի շատ պէտք է աշխատէք: Է՛լ չէր սփոփում ինձ բնութեան գեղեցկութիւնը: Միայնակ կանգնած էր սարի վրայ:

204. Այսչափը միայն գիտեմ, որ ծրի առածք ծրի պէտք է տանք: Յաճախ մարդս այնպիսի բաներ է լսում, որ ստուգիւ դժուարանում է հաւատալ: Մայրն ստէպ նամակ էր գրում իւր որդուն, որ անիրաւաբար գրեթէ մոռացել էր նրան: Յանկարծակի, այն նեղութիւնից յետոյ, արեգակը կըխաւարի: Թշնամիքը յանկարծ ներս թափուեցան և նրան սպանեցին: Մեծապէս զգուշացէք ուրիշին դատելիս: Աստուած յայտնապէս խօսեցաւ Մովսէսի հետ: Մովսէսը ուժգին զարկեց և ապառաժից անմիջապէս առատ ջուր բղխեց: Վերջապէս Իսրայէլացիք հասան

Քանանացոց երկիրը: Հայր և որդի ընտանեբար խօսում էին: Հայրը մեղմօրէն խրատում էր որդուն: Բամբասանքը շարաչար խոցոտում է մարդու սիրտը: Անշուշտ կըհասկանանք, եթէ մինչեւ անգամ հարեանցի պատմէք ձեր մտադրութիւնը: Ես սըրտանց ցանկանում էի ձեզ տեսնել: Ուշադիր մանուկը աւելի պիտի լսի և սակաւ խօսի: Ո՛ւր ես գնում: Ուստի՞ կը դաս, դարիր բլբուլ: Ո՛ւր պիտի գնենք մեր յոգնած գլուխը: Արտաքուստ դարդարած էր, բայց ներքուստ լիքն էր ապականութեամբ:

205. Ե՛րբ էք տեսել, որ այրին ոտից գլուխ պճնուի իւր զարդերով թանկագին: Աշխատող մարդը միշտ հաց կ'ունենայ, երբէք չի սովիլ: Երբեմն էի լոյս, իսկ այժմ եմ խաւար: Մերթ որոտում ես, մերթ ամպում ես: Մերթ հարաւային հողմի նման հնչում ես խիստ սալտ, ես ընում եմ զգաստ: Լաւ է երբէք, քան անագան: Լաւ է ուշ, քան երբէք: Բժիշկը դեռ չհասած՝ հիւանդն արդէն մեռած էր: Դուք կանուխ գնացէք: Յառաջագոյն գիտէի: Առայժմ կարիք չունիմ: Առաջ մենք կըկարդանք, յետոյ դուք: Մախ մտածիր և ապա խօսիր: Մախ եւ առաջ նիւթը պատրաստիր և ապա գրիր: Աստուծու նախախնամութիւնը յաւիտեան պիտի թագաւորէ: Ետոյ զղջաց Յուզան և տարաւ արծաթը քահանայապետին:

§ 228. Բացի բուն մակբայերից, կան շատ անուններ և դերանուններ, որոնք դրւում են բացի համար և մակբայ են համարւում: Գոյականից առնուած մակբայերը կարող են հոլովուիլ էլ, միայն հոլովուած գոյական մակբայերը յոգնակի թուով հասարակ գոյական անուն պիտի համարուին (բացի նորերումն, մծտնըքս, անցեալները, որոնք ժամանակական մակբայ են). օրինակ՝

- Վերել գնաց—սուր գնաց՝ հայցական հոլով է:
- Վերելից ընկաւ—բացառական է:
- Վերելով անցաւ—գործիական է:
- Վերելումը կանգնած էր—ներգոյական է:
- Վերելները բռնուած են—(ի՛նչերը) հասարակ գոյական անուն է:

206. Հետևեալ մակբայերով նախադասութիւններ կազմեցէ՛ք.
Ներս, ներսը, ներսից, ներսում. վար, վարը, վեր, վերը *)-
դուրս, դուրսը, դրսից, դրսով, դրսում. առաջ, առաջը, առջևը,
առաջից, առջևից. յետև, յետևը, յետևից, յետևով, յետևում. դէմը,
դիմացը, դիմացից:

207. Գոյականը դերանունն հետ.—Այստեղ, այդտեղ, այն-
տեղ, այնտեղից, այնտեղով, այնտեղում. սրտեղ, սրտեղ, սրտե-
ղից. ամեն տեղ, ամենայն տեղ. միքանի տեղ, ո՛չ մի տեղ, ամեն
տեղից, այստեղանց. մէջտեղը, մէջտեղից:

208. Գոյականը մենակ կամ ուրիշ բառի հետ.

Այսօր, վաղը, երէկ, հիմակ, առաւօտը, եկեկոյին, հերու,
անցեալ տարի, առաջ, առաջուց, մի օր, մի ժամանակ, օրով—ցե-
րեկով. օրը կէսօրին, գիշերը, ցերեկը, առաւօտանց, գիշերհանայ,
շատուց, շատոնց, հնուց, վաղուց, հիմակուց, իսկզբանէ, ի յաւի-
տենից, յաւիտեան:

Սատիւ, սիրով, փութով, շուտով, դիւրաւ, դժուարաւ, բա-
րով, բարեաւ, շտապով, շտապաւ, աւելորդով, մէկանց, մէկէն
տուեց սպանեց, սրտանց, երեսանց, ծախու առնել, ի ծնէ կուրին
բժշկեց, ի ընէ անպիտան էր:—Անգամ, միանգամ, միանգամից,
միանգամով, միանգամայն, երկու անգամ, երկիցս, երիցս,
չորիցս...

§ 229. Ածական անունների մեծագոյն մասը, եթէ
բայի համար է, մակբայի պաշտօն է կատարում մենակ
կամ մի մասնիկի հետ: Բարձր մարդը ըստ ըր էր խօսում:
Փողը իկ մանուկը մի փողը ուշացաւ:

209. Զուգընթացաբար գրեցէ՛ք միքանի նախադասութիւն-
ներ, ուր միևնոյն ածական անունը և՛ ածական լինի, և՛ մակբայ:

§ 230 Գերանունը զանազան մասնիկների օգնու-
թեամբ մակբայի պաշտօն է կատարում.—Այսպէս, այդպէս,

*) Մեզանում վար և վեր մակբայերը միշտ շփոթում են միմեանց հետ. մենք
ասում ենք, օրինակ՝ վեր եկաւ և վեր ելաւ, փոխանակ վար եկաւ և վեր ելաւ
տսելու: Եթէ շատ դժուար է վար մակբայը գործ ածել, ապա, կարծում ենք, վար
բառի տեղ վեր գրելու, պէտք է է տառով գոնէ գրենք (վեր), որովհետև սա այ
երկբարբառի կրճատումն է, ինչպէս՝ հայր—հէր, մայր—մէր, փայտ—փէտ, ուրեմն
և վայր—վէր:

այնպէս, սոյնպէս, դոյնպէս, նոյնպէս, այսքան, այդքան,
այնքան. սոյնքան, դոյնքան, նոյնքան. այսպիսով, այդպիսով,
այնպիսով. այսուհետև, այնուհետև. սապէս, դապէս...

§ 231. Գոյական անուններից շատերը, եթէ կրկնու-
թեամբ են գործ ածուած, կամ եթէ միևնոյն գոյականը
իւր մի հոլովի հետ է, կարող է մակբայ լինել:

210. Կաթիլ—կաթիլ—կաթիլ. Ոլուն—ոլուն—ոլուն. Ստէպ—
ստէպ—ստէպ. Սոււր—սոււր—սոււր. Ոտք—ոտք—ոտք ցած իջնել.
Օր—օրէց օր. Ժամ—ժամ առ ժամ. Երես—երեսէ երես, երես առ
երես. Ձեռք—ձեռքէ ձեռք. Դուռն—դռնէ դուռն. Գլուխ—գլխէ ի
գլուխ. Դէմք—դիմացէ դիմաց. Կուռ—կոնաբռնուկ. Օր—օր աւուր.
Կոյր—կոյրգկուրայն. Բառ—բառ առ բառ. Սիրտ—սիրտ առ խիտ...

211. Մէկ էլ տեսնես, օրօրի վրայ, գիշեր ցերեկ, ըստ
ամենայնի, ըստ պատշաճի, ըստ օրինի, ըստ պատահման, ըստ
դիպուածին, առ առաւելն, առհարկի խելօք խօսեցաւ. չուզնլով
յանձն առաւ. դուր տեղը, պարապ տեղը ջանք կ'անես. անիրաւ
տեղը դատուեցաւ. գուցէ թէ, կարծես թէ, իցէ թէ, այն միջոցին,
այն ժամին թողին գնացին:—Քանի որ, երբոր, մինչև օր...

Ն Ա Ն Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

§ 232. Նախադրութիւնները՝ իրանց կազմութեանը
նայելով, երկու են՝

ա. Բուն նախադրութիւններ՝ համար, հետ, դէմ, չափ,
պէս, առանց, մինչև, դէպ, իբր, իբրև, բացի, դատ, ի դատ,
ի վեր, ի վայր, առ, հակառակ, համեմատ, մօտ (վերջին
երեքը ածականից):

բ. Գոյականից ստնուած նախադրութիւններ՝ որոնք
բոլորը, առանց բացառութեան, մակբայի պաշտօն էլ են
կատարում. դռան առաջը, պարսպի յետևը, վերև, ներ-
քևը, վրայ, տակը, մէջ, քով, դէմ:

§ 233. Նախադրութիւններից՝ համար, հետ, չափ,
պէս, դէմ, առանց, հակառակ, համեմատ, մօտ առնում են

տրական և սեռական հոլով՝ ինձ համար, վարժապետի համար, քեզ չափ, քո չափ, աշակերտի չափ, նորա դէմ, թշնամու դէմ, սւամ հակառակ, իմ հակառակ, ինձ հակառակ, հօրը հակառակ. ինձ մօտ, իմ մօտ, առանց ինձ: Փոխանակ առնում է սեռական հոլով. — Տնւր իմ և քո փոխանակ:

Մինչև, դէպի առնում են հայցական հոլով՝ մինչև ինձ, դէպի քեզ. մինչև սարը, մինչև քաղաքը, դէպի գիւղը, դէպի տուն գնացին:

Իբր, իբրև գործ է ածւում ամեն հոլովներով՝ իբրև մարդ, իբրև մարդու, իբրև մարդուց, իբրև մարդով իբրև մարդում:

Չատ, բացի, ի վեր, ի վայր, վար, ի բուն, ի գլուխ առ նախդիրները առնում են բացառական և հայցական հոլովները՝ քեզանից զատ, բացի վրասից, բացի շահից, մանկութիւնից ի վեր. սարն ի վեր, ականջս ի վեր. գետն ի վայր նաւեցին, գետից վայր նաւեցին, ծառից վայր իջան: Օրն ի բուն, գիշերն ի բուն. ձմեռն ի գլուխ անգաղար աշխատում է: Դիմել առ Աստուած...

Գոյականից առնուած նախադրութիւնները սեռական հոլով են առնում և նրա հետ էլ հոլովւում են՝ ծառի տակը, կտրի վրայ, իմ առաջը, իմ առաջին, իմ առաջից, իմ առաջով, իմ առաջում:

212. Գրեցէք հետևեալ նախադրութիւններով օրինակներ՝ առաջը, առաջևը, ետևը, յետևը, վերևը, ներքևը, վրայ, վրայով, տակ, մէջ, մօտ, դէմ, դիմացը, տեղը, փոխանակ, ձեռքով, միջոցով, նկատմամբ (վերջին երեքը հոլովուած գոյական են, որ երբեմն միայն նախադրութեան տեղ են գործ ածւում):

Պ Ե Բ Զ

ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊՊԱԿՆԵՐԸ

Երես	տող	սխալ	ուղիղ
7	24	մասերը	մասերի
16	15	ըշտապ	ըշտապ
19	25	բտերից	բառերից
20	21	տտուր	տաուր
»	22	զրել	զրել
39	6	հայրս	հայրը
45	5	կետը	կէտը
»	18	արիւծներ	արծիւներ
59	8, 9	գրուած է	գրուած է
97	17	երեք	չորս


Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. Ստուգաբանական նախապատրաստութիւններ. — Առարկայ. շնչաւոր և անշունչ առարկաներ. մտաւոր և նիւթական առարկաներ. առարկայի թիւը. առարկայի որպիսութիւնը. որպիսութեան թիւը. առարկայի գործողութիւնը. գործողութեան թիւը (եր. 3—13):

Բ. Ուղղագրական վարժութիւններ. — Բառ, վանկ և տառ. յ տառի գործածութիւնը. վ և լ տառերի գործածութիւնը. ու և իւ երկրարբանների գործածութիւնը. ո և օ տառերի ուղղագրութիւնը. ե և է տառերի ուղղագրութիւնը (երես 13—28):

Գ. Բառերի կապակցութիւնը. — Ենթակայ. ստորոգեալ. պարզարանող բառեր (երես 29—42):

Դ. Նախադասութեան տեսակները. — Համառօտ և ընդարձակ նախադասութիւններ. պարզարանող բառերի տեսակները. պարզ և միաւորեալ նախադասութիւն. (երես 42—49):



I. Մասունք ըանի.—Գոյական անուն. գոյական անուան սեռը, յատուկ և հասարակ գոյականներ. գոյական անուան թիւը. հաւաքական գոյական անուն: Ածական. սրական և յարաբերական ածականներ: Թուական անուն. բացարձակ, դասաւորական, բաշխական, մասնական թուականներ: Դերանուն. դերանունների տեսակները՝ էական, ցուցական, ստացական, հարցական, յարաբերական և անորոշ: Բայ. բայերի սեռը, եղանակը, ժամանակը, թիւը և դէմքը: Դերբայ. դերբայի տեսակները: Մակբայ և նորա տեսակները: Նախադրութիւն: Շաղկապ: Չայնարկութիւն (երես 50—70):

II. Բառակազմութիւն.—Բառերի արմատը և վերջաւորութիւնը. նախայար և վերջայար մասնիկներ. նախաաիւղ և ածանցական բառեր. պարզ և բարդ բառեր. կորուսման և փոփոխման կանոնները (երես 70—78):

III. Մասանց ըանի փոփոխութիւնը.—Գոյական անունների փոփոխութիւնները—Հոլով և հոլովմունք. ուղղական և հայցական, սեռական և տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովները. կանոնաւոր հոլովմանց պատկերը. անկանոն հոլովմունք. անուան յօդը. անունների հոլովումը սրողեալ յօդով: Ածական անուան հոլովումը: Թուական անունների հոլովումը: Դերանունների փոփոխութիւն՝ անձնական դերանունների հոլովումը. ցուցական և ստացական դերանուններ. դերանունական յօդ. անորոշ դերանուն հոլովումը: Բայի փոփոխութիւնը. խոնարհումն և լծորդութիւն. էական բայերի խոնարհումը. առաջին լծորդութիւն. երկրորդ լծորդութիւն. երրորդ լծորդութիւն. չորրորդ լծորդութիւն. կրաւորական բայերի խոնարհումը. անկանոն խոնարհմունք. պակասաւոր բայեր. միադէմ բայեր. բացասական բայեր. անցողական բայեր: Դերբայի փոփոխութիւնը: Մակբայի փոփոխութիւնը: Նախադրութիւն (երես 78—126):



157
C 9PM-K
3221

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԵՒՈՆԳԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Տէր-Ղևոնդեան՝ Մայրենի Լեզու, առաջին տարի . 25 կ.
2. » Մայրենի Լեզու, երկրորդ տարի . 40 կ.
3. » Մայրենի Լեզու, երրորդ տարի . 50 կ.
4. » Մայրենի Լեզու, չորրորդ տարի . 55 կ.
5. » Մայր. Լեզուի բաց. ձեռ. ա. տար. . 60 կ.
6. » Մայր. Լեզուի քերականութ. տարբերք 50 կ.
7. » Հայորդի՝ Սրբազան պատմ. Հին Կտակ. 50 կ.
8. » Սրբազան պատմ. Նոր Կտակարանի 50 կ.
9. Գէորգ-Յէգեան՝ ժողովածու թուար. խնդ. Ամբ. թուեր 40 կ.
10. Մանգլինեան՝ Նահապետական Աշխարհ. (սպաս.)
11. » Ընտանեկան Աշխարհ 25 կ.
12. » Գիւցազնական Աշխարհ 25 կ.
13. » Հենչէլի՝ բանաւոր և զրաւոր հաշուելու
» խնդիրներ, առաջին և երկրորդ տարի (սպաս.)
14. » Բանաւոր և զրաւ. հաշ. խնդ. 4. տարի 50 կ.

Գումարով գնույնները 20% զիջումն ունին:—Պահեստը
Կենդրոնական զբաղաճառանոցում:—Ընդհարումների և
թիւրիմացութիւնների դէպքում դիմել ն. Տէր-Ղևոնդեանին՝
Тифлисъ. Николаю Теръ-Гевондяну.

Հարկ

